

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՀՈՇՍԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ

Սույն Կանոնադրության Կողմեր հանդիսացող պետությունները՝

գիտակցելով, որ բոլոր ժողովուրդները միավորված են ընդհանուր կապերով, որ միմյանց միահյուսված նրանց մշակույթները կազմում են ընդհանուր ժառանգություն և մտահոգված լինելով, որ այդ նուրբ խճանկարը ցանկացած պահի կարող է խարիսխվել,

հիշատակելով, որ այս հարյուրամյակում միլիոնավոր երեխաններ, կանայք ու տղամարդիկ զոհ են դարձել մարդկության խիղճը խորապես ցնցած աներևակայելի դաժանությունների,

ընդունելով, որ նման ծանրագույն հանցագործություններն սպառնում են համընդհանուր խաղաղությանը, անվտանգությանն ու բարեկեցությանը,

պնդելով, որ միջազգային ողջ հանրության մտահոգությունը հարուցող առավել ծանր հանցագործություններն անպատճ չպետք է մնան և որ դրանց արդյունավետ հետապնդումը պետք է ապահովի ինչպես ազգային մակարդակով միջոցներ ձեռնարկելով, այնպես էլ միջազգային համագործակցությունն ուժեղացնելով,

վճռական լինելով վերջ դնել նման հանցագործությունների հեղինակների անպատճելիությանը և դրանով իսկ նպաստել այդպիսի հանցագործությունների կանխմանը,

հիշեցնելով, որ յուրաքանչյուր պետության պարտականությունն է իրականացնել իր քրեական իրավագործությունը միջազգային հանցագործությունների համար պատասխանատու անձանց նկատմամբ,

վերահաստատելով Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության նպատակներն և սկզբունքները, մասնավորապես, որ բոլոր պետությունները պետք է ձեռնպահ մնան ինչպես ուժի գործադրումից կամ ուժ գործադրելու սպառնալիքից՝ ուղղված ցանկացած պետության տարածքային ամբողջականության կամ քաղաքական անկախության դեմ կամ որևէ այլ վարքագծից, որը համատեղելի չէ Միավորված ազգերի կազմակերպության նպատակների հետ,

այս կապակցությամբ ընգծելով, որ սույն Կանոնադրությունում ոչինչ չպետք է դիտվի իրքն թույլտվություն սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող որևէ պետության՝ միջամտելու որևէ պետության զինված ընդհարումներին կամ ներքին գործերին,

այդ նպատակով և տոգորված լինելով վճռականությամբ՝ ի բարօրություն ներկա ու ապագա սերունդների՝ հիմնադրելու մշտական անկախ Միջազգային քրեական դատարան, որը կապված կլինի Միավորված ազգերի կազմակերպության համակարգի հետ, օժտված կլինի իրավագործությամբ միջազգային ողջ հանրության մտահոգությունը հարուցող առավել ծանր հանցագործությունների նկատմամբ,

ընդգծելով, որ սույն Կանոնադրությամբ ստեղծվող Միջազգային քրեական դատարանը լրացնում է ազգային քրեական իրավագործության մարմինները,

լի վճռականությամբ՝ ստեղծելու միջազգային արդարադատության ապահովման և նրա նկատմամբ հարգանքի ամուր երաշխիքներ,

համաձայնեցին ներքոհիշյալի վերաբերյալ.

ԲԱԺԻՆ 1. ԴԱՏԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ

Հոդված 1 Դատարանը

Սույնով հիմնադրվում է Միջազգային քրեական դատարան («Դատարան»): Այն մշտական մարմին է և լիազորված է իր իրավազորությունը կիրառել այն անձանց նկատմամբ, որոնք պատասխանատու են միջազգային հանրության մտահոգությունը հարուցող առավել ծանր հանցագործությունների կատարման համար, ինչպես նշված է սույն Կանոնադրության մեջ և լրացնում է ազգային քրեական իրավազորության մարմինները: Դատարանի իրավազորությունն ու գործունեությունը կարգավորվում են սույն Կանոնադրության դրույթներով:

Հոդված 2 Դատարանի փոխհարաբերությունը Միավորված ազգերի կազմակերպության հետ

Դատարանը Միավորված ազգերի կազմակերպության հետ հարաբերվում է սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունների Ասամբլեայի կողմից հավանության արժանացած և այնուհետև Դատարանի անունից՝ Դատարանի նախագահի կողմից կնքված համաձայնագրի հիման վրա:

Հոդված 3 Դատարանի նստավայրը

1. Դատարանի նստավայրը գտնվելու է Հաագայում. Նիդերլանդներում («հյուրընկալող պետություն»):

2. Դատարանն իր կենտրոնակայանի վերաբերյալ հյուրընկալող պետության հետ գալիս է համաձայնության, որը, սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունների Ասամբլեայի կողմից հավանության արժանանալուց հետո, Դատարանի անունից կնքվում է Դատարանի նախագահի կողմից:

3. Եթե Դատարանը նպատակահարմար է գտնում, կարող է նիստեր գումարել ցանկացած այլ վայրում, ինչպես դա նախատեսված է սույն Կանոնադրությամբ:

Հոդված 4 Դատարանի իրավական կարգավիճակը և լիազորությունները

1. Դատարանը միջազգային իրավաբանական անձ է: Այն ունի նաև այնպիսի իրավունակություն, որպիսին կարող է անհրաժեշտ լինել իր գործառույթները կատարելու և նպատակներն իրականացնելու համար:

2. Դատարանը կարող է սույն Կանոնադրությամբ նախատեսված իր գործառույթներն և լիազորություններն իրականացնել սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող ցանկացած պետության տարածքում և առանձին համաձայնությամբ՝ որևէ այլ պետության տարածքում:

ԲԱԺԻՆ 2. ԻՐԱՎԱԶՈՐՈՒԹՅՈՒՆ, ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԻՐԱՌՈՂ ԻՐԱՎՈՒՔ

Հոդված 5

Դատարանին ընդդատյա հանցագործությունները

1. Դատարանի իրավագորությունը սահմանափակվում է միջազգային ողջ հանրությանը մտահոգող առավել ծանր հանցագործություններով: Սույն Կանոնադրության համաձայն, Դատարանին ընդդատյա են հետևյալ հանցագործությունները:

- ա) ցեղասպանության հանցագործություն,
- բ) մարդկության դեմ ուղղված հանցագործություններ,
- գ) պատերազմական հանցագործություններ,
- դ) ազրեսիայի հանցագործություն:

2. Դատարանն ազրեսիայի հանցագործության նկատմամբ իր իրավագորությունն իրականացնում է, եթե 121-րդ և 123-րդ հոդվածների համաձայն կը նդունվի այդ հանցագործությունը սահմանող և այն պայմաններու մեջ, որոնց դեպքում Դատարանն իրականացնում է իր իրավագորությունն այդ հանցագործության նկատմամբ: Այդ դրույթը պետք է համատեղելի լինի Սիավորված ազգերի կազմակերպության կանոնադրության համապատասխան դրույթների հետ:

Հոդված 6

Ցեղասպանություն

Սույն Կանոնադրության նպատակների համար «ցեղասպանություն» նշանակում է ստորև նշվող գործողություններից ցանկացածը՝ կատարված ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական որևէ խմբի՝ որպես այդպիսին ամբողջությամբ կամ մասամբ ոչնչացման մտադրությամբ:

- ա) այդ խմբի անդամների սպանություն,
- բ) այդ խմբի անդամներին մարմնական լուրջ վճառվածքներ կամ մտավոր խանգարում պատճառելը,
- գ) որևէ խմբի համար կյանքի այնպիսի պայմանների միտումնավոր ստեղծում, որոնք ուղղված են նրա ամբողջությամբ կամ մասնակի ֆիզիկական ոչնչացմանը,
- դ) խմբի շրջանակներում մանկածնությունը կանխելուն միտված միջոցների իրականացում,
- ե) երեխաների բռնի փոխանցում մարդկային մի խմբից մյուսին:

Հոդված 7

Մարդկության դեմ ուղղված հանցագործություններ

1. Սույն Կանոնադրության նպատակների համար «մարդկության դեմ ուղղված հանցագործություն» նշանակում է ստորև նշվող գործողություններից յուրաքանչյուրը, որոնք կատարվում են իրեն քաղաքացիական բնակչության դեմ ուղղված լայնածավալ կամ կանոնավոր հարձակում, եթե նման հարձակումը տեղի է ունենում գիտակցված:

- ա) սպանություն,
- բ) բնաջնջում,
- գ) ստրկացում,
- դ) բնակչության բռնագաղթ կամ բռնի տեղահանություն,

ե) բանտարկություն կամ ֆիզիկական ազատությունից զրկում այլ խիստ միջոցներով՝ միջազգային իրավունքի հիմնարար նորմերի խախտմամբ,

գ) խոշտանգում,

է) բռնաբարություն, սեքսուալ ստրկացում, պոռնկության հարկադրում, հարկադրական հղիություն, հարկադրական ամլացում կամ համեմատելի ծանրության սեքսուալ բռնության այլ ձևեր,

ը) նույնականացված ցանկացած խմբի կամ հանրույթի հետապնդում քաղաքական, ուսայական, ազգային, եթնիկական, մշակութային, կրոնական, սեռային, ինչպես նախատեսված է 3-րդ կետում, կամ այլ դրդապատճառներով, որոնք միջազգային իրավունքով ճանաչված են անընդունելի՝ կապված սույն կետում նշված ցանկացած գործողության կամ Դատարանին ընդդատյա ցանկացած հանցագործության հետ,

թ) մարդկանց բռնի անհետացում,

ժ) ապարտեհիդի հանցագործություն,

ժա) մեծ տանջանքներ կամ մարմնական լուրջ վճառվածքներ պատճառող, կամ հոգեկան կամ ֆիզիկական առողջությունը քայլայող նմանաբնույթ այլ անմարդկային միտումնավոր գործողություններ:

2. 1-ին կետի նպատակների համար.

ա) «քաղաքացիական բնակչության դեմ ուղղված հարձակում» նշանակում է գործողությունների ընթացք, որը ներառում է քաղաքացիական բնակչության դեմ ուղղված 1-ին կետում նշված գործողությունների բազմակի կատարում, որոնք ձեռնարկվում են պետության կամ կազմակերպության՝ նման հարձակում իրականացնելուն ուղղված քաղաքականություն վարելու կամ այդ քաղաքականությանն աջակցելու նպատակով,

թ) «քննաշնչումը» ներառում է կյանքի պայմանների դիտավորյալ ստեղծում, inter alia սննդամթերք և դեղորայք ձեռք բերելու հնարավորությունից զրկում, որը ուղղված է բնակչության մասնակի ոչնչացմանը,

գ) «ստրկացում» նշանակում է անձի նկատմամբ սեփականության իրավունքի հետ կապված որևէ կամ ողջ իրավազորության իրականացում և ընդգրկում է նաև նման իրավազորության իրականացումը մարդկանց, մասնավորապես, կանանց ու երեխաների առևտրի ընթացքում,

դ) «քննակչության բռնագործ կամ բռնի տեղահանություն» նշանակում է արտաքսման կամ այլ հարկադիր գործողությունների միջոցով համապատասխան անձանց բռնի տեղափոխություն իրենց օրինական բնակության տարածքից՝ առանց միջազգային իրավունքով թույլատրելի հիմքերի,

ե) «խոշտանգում» նշանակում է կալանքի կամ մեղադրյալի հսկողության տակ գտնվող անձին դիտավորյալ կերպով ֆիզիկական կամ մտավոր սուր ցավ կամ տառապանք պատճառելը. Խոշտանգում չէ այն ցավը կամ տառապանքը, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն առաջանում է օրինական պատժամիջոցներից,

զ) «հարկադրական հղիություն» նշանակում է որևէ կնոջ անօրինական ազատազրկումը, որը հղիացել է բռնի՝ այս կամ այն ազգաբնակչության էթնիկական կազմը փոփոխելու կամ միջազգային իրավունքի այլ կոպիտ խախտումներ կատարելու նպատակով: Սույն սահմանումը որևէ կերպ չպետք է մեկնաբանվի իբրև հղիության վերաբերյալ ազգային օրենքների վրա ազդեցություն,

է) «հետապնդում» նշանակում է որևէ խմբին կամ հանրույթին պատկանելու պատճառով հիմնարար իրավունքներից դիտավորությամբ և կոպիտ կերպով զրկելը՝ ի հակադրություն միջազգային իրավունքի,

ը) «ապարտեհիդի հանցագործություն» նշանակում է 1-ին կետում նշված գործողությունների հետ նույնարկույթ անմարդկային գործողություններ, որոնք կատարվում են ուսայական մի խմբի կողմից ուսայական մեկ այլ խմբի կամ խմբերի նկատմամբ

կանոնավոր ճնշման և գերակայության ստեղծված ռեժիմի համատեքստում՝ իրազործված այդ ռեժիմի պահպանման նպատակով,

թ) «մարդկանց բռնի անհետացում» նշանակում է մարդկանց կալանավորում, ձերքակալում կամ առևանգում՝ պետության կամ քաղաքական կազմակերպության կողմից կամ նրանց թույլտվությամբ, աջակցությամբ կամ համաձայնությամբ՝ չընդունելով դա իբրև ազատազրկում կամ հրաժարվելով այդ մարդկանց ճակատագրի կամ գտնվելու վայրի մասին տեղեկություն տալուց՝ երկար ժամանակով օրենքով պաշտպանվելու հնարավորությունից նրանց գրկելու համար:

3. Սույն Կանոնադրության նպատակների համար «սեռ» տերմինը հասարակության համատեքստում, վերաբերում է երկու՝ արական և իգական սեռերին: «Սեռ» տերմինը չունի վերոհիշյալից տարբերվող որևէ այլ իմաստ:

Հոդված 8

Պատերազմական հանցագործություններ

1. Դատարանին ընդդատյա են պատերազմական հանցագործությունները, մասնավորապես, եթե դրանք կատարվել են որպես ծրագրի կամ քաղաքականության մաս կամ նման հանցագործությունների լայնածավալ իրականացման դեպքում:

2. Սույն Կանոնադրության նպատակների համար՝ «պատերազմական հանցագործություններ» նշանակում է.

ա) 1949թ. օգոստոսի 12-ի Ժնևի կոնվենցիաների լուրջ խախտումներ, այն է՝ Ժնևի համապատասխան կոնվենցիայի դրույթների համաձայն պաշտպանվող անձանց կամ սեփականության դեմ կատարված ներքոհիշյալ գործողություններից յուրաքանչյուրը.

i) դիտավորյալ սպանությունը,

ii) խոշտանգումը կամ անմարդկային վերաբերմունքը, ներառյալ կենսաբանական փորձերը,

iii) դիտավորությամբ ծանր տառապանքներ պատճառելը կամ մարմնական լուրջ վնասվածք հասցնելը, կամ առողջությունը լրջորեն վնասելը,

iv) գույքի անօրինական, անիմաստ և խոշորածավալ ոչնչացումն ու յուրացումը՝ չպայմանավորված ռազմական անհրաժեշտությամբ,

v) ռազմագերուն կամ պաշտպանված այլ անձի՝ հակառակորդ պետության զինված ուժերում ծառայելուն հարկադրելը,

vi) ռազմագերուն կամ պաշտպանված այլ անձի՝ անաշառ և բնականոն դատական քննության իրավունքից գրկելը,

vii) անօրինական բռնագաղթը կամ տեղահանությունը, կամ անօրինական ազատազրկումը,

viii) պատանեներ վերցնելը,

թ) միջազգային իրավունքի շրջանակներում գործող՝ միջազգային զինված ընդհարումների ժամանակ կիրառվող օրենքների և սովորույթների այլ լուրջ խախտումները, այն է՝ հետևյալ ցանկացած գործողությունը՝

i) դիտավորությամբ կատարված հարձակումները ռազմական գործողություններին անմիջականորեն չմասնակցող քաղաքացիական բնակչության, որպես այդպիսին, կամ առանձին քաղաքացիների նկատմամբ,

ii) դիտավորությամբ կատարված հարձակումները քաղաքացիական, այսինքն՝ այնպիսի օբյեկտների վրա, որոնք ռազմական նպատակակետ չեն,

iii) դիտավորությամբ կատարված հարձակումները մարդասիրական օգնության աշխատանքներին ներգրավված անձնակազմի, օբյեկտների, նյութերի, ստորարաժանումների կամ փոխադրամիջոցների, կամ Միավորված ազգերի

կազմակերպության Կանոնադրության համաձայն ներգրավված խաղաղարար առաքելությունների նկատմամբ, քանի դեռ նրանք, ըստ գինված ընդհարումների վերաբերյալ միջազգային իրավունքի, ունեն պաշտպանության իրավունք, որից օգտվում են քաղաքացիական բնակչությունը կամ քաղաքացիական օբյեկտները,

iv) դիտավորությամբ կատարված այնպիսի հարձակումը, երբ հարձակումն իրականացնողը հստակ գիտակցում է, որ այն կիանգեցնի քաղաքացիական բնակչության պատահական մահվան կամ վնաս հասցնելուն, կամ կվնասի քաղաքացիական օբյեկտները, կամ լայնածավալ տևական ու լուրջ վնաս կպատճառի շրջակա միջավայրին, որն ակնհայտորեն անհամատեղելի կլինի կոնկրետ և անմիջականորեն ակնկալվող ռազմական ընդհանուր առավելությանը,

v) հարձակումն անպաշտպան և ռազմական նպատակակետ չհանդիսացող քաղաքների, գյուղերի, կացարանների կամ շինությունների վրա կամ դրանց ոմբակոծությունը՝ անկախ դրանց կատարման միջոցներից,

vi) մարտիկի սպանությունը կամ նրան վիրավորելը, որը, գենքը վայր դնելով կամ պաշտպանության միջոցներ այլևս չունենալով, անվերապահորեն անձնատուր է եղել,

vii) բանագնացի դրոշի, հակառակորդի դրոշի կամ գինվորական տարբերանշանների և հակառակորդի կամ Միավորված ազգերի կազմակերպության համագետատի, ինչպես նաև Ժնևի կոնվենցիաններով սահմանված տարբերակից խորհրդանշանների ոչ պատշաճ օգտագործումը, ինչը հանգեցնում է անձի մահվան կամ նրան պատճառում ֆիզիկական լուրջ վնասվածք,

viii) գրավող պետության կողմից իր քաղաքացիական բնակչության մի մասի ուղղակի կամ անուղղակի տեղափոխումը գրավյալ տարածք կամ գրավյալ տարածքի բնակչության կամ նրա մի մասի արտաքսումը կամ տեղափոխումն այդ տարածքի սահմանների ներսում կամ դրանից դուրս,

ix) դիտավորությամբ կատարված հարձակումները՝ կրոնական, կրթական, մշակութային, գիտական կամ բարեգործական նպատակների ծառայող շենքերի, պատմական հուշարձանների, հոսպիտալների և այն վայրերի վրա, ուր կենտրոնացած են հիվանդներ ու վիրավորներ, պայմանով, որ նշված օբյեկտները ռազմական նպատակակետեր չեն,

x) հակառակորդ կողմի իշխանության ներքո գտնվող անձանց ֆիզիկական խեղումը կամ նրանց ենթարկումը բժշկական կամ գիտական տարաբնույթ փորձերի, որոնք չեն արդարացվում տվյալ անձի բժշկական, ատամնաբուժական կամ հիվանդանոցային բուժման անհրաժեշտությամբ և իրականացվում են ոչ ի շահ նրա, և որոնք հանգեցնում են տվյալ անձի կամ անձանց մահվան կամ լրջորեն սպառնում են նրանց առողջությանը,

xi) հակառակորդ պետությանը կամ նրա բանակին պատկանող անձանց դավադրաբար սպանելը կամ վիրավորելը,

xii) հայտարարելը, թե գրություն չի լինի,

xiii) հակառակորդի ունեցվածքի ոչնչացումը կամ զավթումը, եթե նման ոչնչացումը կամ զավթումն անհետաձգելիորեն թելադրված է ռազմական անհրաժեշտությամբ,

xiv) դատարանում հակառակորդ կողմի քաղաքացիների իրավունքները և հայցերը չեղյալ, կասեցված կամ անթույլատրելի հայտարարելը,

xv) հակառակորդ կողմի քաղաքացիներին իրենց երկրի դեմ ուղղված ռազմական գործողություններին մասնակցելուն հարկադրելը, եթե, նույնիսկ, նախքան պատերազմը նրանք ծառայության մեջ են գտնվել պատերազմող կողմում,

xvi) քաղաքի կամ բնակավայրի կողոպուտը, նույնիսկ եթե այն վերցվել է գրոհով,

xvii) բույն կամ բունավոր գենք կիրառելը,

xviii) հեղձուցիչ, բունավոր կամ այլ գագեր և համանման հեղուկներ, նյութեր կամ միջոցներ կիրառելը,

xix) մարդու մարմնում հեշտությամբ պայթող կամ տափակող գնդակներ օգտագործելը, ինչպիսին են, օրինակ, քաղանքավոր զննակները, որոնց կարծր քաղանքն ամբողջությամբ չէ, որ ծածկում է միջուկը կամ ունի կտրտվածքներ,

xx) այնպիսի զենքեր, ռազմամթերք և տեխնիկա, ինչպես նաև պատերազմ վարելու այնպիսի մեթոդներ կիրառելը, որոնք առաջ են բերում չափազանց մեծ վնասվածքներ ու ավելորդ տանջանքներ, կամ որոնք իրենց էությամբ ընտրողական չեն՝ ի խախտումն զինված ընդհարումների միջազգային իրավունքի, պայմանվ, որ նման զենքերը, ռազմամթերքները, տեխնիկան և պատերազմ վարելու մեթոդները, համընդիանուր արգելման առարկա են և ներառված են սույն Կանոնադրության հավելվածում՝ 121-րդ և 123-րդ հոդվածների համապատասխան դրույթների համաձայն կատարված փոփոխությունների միջոցով,

xxi) մարդկային արժանապատվության դեմ ուղղված ոտնագործունը, մասնավորապես, վիրավորական և նվաստացուցիչ վերաբերմունքը,

xxii) բռնաբարությունը, սեքսուալ ստրկությունը, պոռնկության հարկադրելը, հարկադրական հոդությունը, ինչպես սահմանված է 7-րդ հոդվածի 2 կետի գ) ենթակետում, հարկադրական ամլացունը կամ ժննի կոնվենցիաների կողին խախտում հանդիսացող սեքսուալ այլ բռնությունները,

xxiii) քաղաքացիական անձի կամ այլ պաշտպանյալ անձի ներկայության օգտագործումը՝ որոշակի վայրեր, տարածքներ կամ զինված ուժեր ռազմական գործողություններից անձեռնմխելի դարձնելու համար,

xxiv) դիտավորյալ կատարված հարձակումները շենքերի, նյութերի, բժշկական հաստատությունների և փոխադրամիջոցների, ինչպես նաև անձնակազմի վրա, որոնք միջազգային իրավունքին համապատասխան կրում են ժննի կոնվենցիաների տարրերանշանները,

xxv) դիտավորությամբ քաղաքացիական անձանց սովոր մատնելը՝ իբրև պատերազմ վարելու միջոց, նրանց զրկելով գոյատևելու համար անհրաժեշտ միջոցներից, ներառյալ ժննի կոնվենցիաներով նախատեսված օգնություն տրամադրելուն դիտավորությամբ խոչընդոտելը,

xxvi) մինչև տասնինագ տարեկան երեխաներին ազգային զինված ուժեր զինվորական ծառայության գորակոչելը կամ հավաքագրելը, կամ ռազմական գործողություններին նրանց ակտիվ մասնակցությունն օգտագործելը:

գ) Միջազգային բնույթ չկրող զինված ընդհարումների դեպքում՝ 1949 թ. օգոստոսի 12-ի ժողովություններից հետոյալ գործողություններից յուրաքանչյուրը՝ իրականացված ռազմական գործողություններին գործուն մասնակցություն չցուցաբերած անձանց դեմ, ներառյալ այն զինվորականները, ովքեր վայր են դրել զենքը, ինչպես և նրանք, ովքեր շարքից դուրս են եկել հիվանդության, վիրավորվելու, ձերբակալվելու կամ ցանկացած այլ պատճառով.

ի) կյանքի և ֆիզիկական անձեռնմխելիության դեմ ուղղված ոտնագործունը, մասնավորապես, բոլոր տեսակի սպանությունները, խեղումները, դաժան վերաբերմունքը և խոշտանգումները,

ii) անձի արժանապատվության դեմ ուղղված ոտնագործունը, մասնավորապես, վիրավորական և նվաստացուցիչ վերաբերմունքը,

iii) պատանդ վերցնելը,

iv) դատավճիռ կայացնելը և այն ի կատար ածելը՝ առանց սահմանված կարգով ստեղծված դատարանի կողմից՝ համընդիանուր կերպով անհրաժեշտ ճանաչված բոլոր դատական երաշխիքների պահպանմանը նախորդ դատական որոշման կայացման:

դ) 2-րդ կետի (գ) ենթակետը կիրավում է միջազգային բնույթ չկրող զինված ընդհարումների նկատմամբ և, այդպիսով, չի կիրավում ներքին հուզումների և լարվածությունների նկատմամբ, ինչպիսին են, օրինակ, հասարակական

անկարգությունները, բռնության առանձին և պատահական դեպքերը կամ նման բնույթի այլ գործողություններ:

ե) Միջազգային բնույթ չունեցող զինված ընդհարումների ժամանակ կիրառվող՝ միջազգային իրավունքի շրջանակներում գործող օրենքների և սովորությների այլ լուրջ խախտումներ, այն է՝ հետևյալ գործողություններից յուրաքանչյուրը.

ի) դիտավորությամբ կատարված հարձակումները քաղաքացիական բնակչության վրա, որպես այդպիսին, կամ ռազմական գործողություններին անմիջականորեն չմասնակցող առանձին քաղաքացիական անձանց վրա,

ii) դիտավորյալ կատարված հարձակումները շենքերի, նյութերի, բժշկական հաստատությունների և փոխադրամիջոցների, ինչպես նաև անձնակազմի վրա, որոնք միջազգային իրավունքին համապատասխան կրում են Ժնևի կոնվենցիաների տարրերանշանները,

iii) դիտավորությամբ կատարված հարձակումները՝ մարդասիրական օգնության աշխատանքներին ներգրավված անձնակազմի, օբյեկտների, նյութերի, ստորաբաժանումների կամ փոխադրամիջոցների, կամ Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության համաձայն ներգրավված խաղաղարար առաքելությունների վրա, քանի դեռ նրանք, ըստ զինված ընդհարումների միջազգային իրավունքի, ունեն պաշտպանության իրավունք, որից օգտվում են քաղաքացիական անձինք կամ քաղաքացիական օբյեկտները,

iv) դիտավորությամբ կատարված հարձակումները՝ կրոնական, կրթական, մշակութային, գիտական կամ բարեգործական նպատակներին ծառայող շենքերի, պատմական հուշարձանների, հոսպիտալների և այն վայրերի վրա, որ կենտրոնացած են հիվանդներ և վիրավորներ, պայմանով, որ նշված օբյեկտները ռազմական նպատակակետեր չեն,

v) քաղաքի կամ բնակավայրի կողոպուտը, եթե, նույնիսկ, այն վերցվել է գրոհով,

vi) բռնաբարությունը, սեքսուալ ստրկությունը, պոռնոկության հարկադրելը, հարկադրական հղիությունը, ինչպես այն սահմանված է 7-րդ հոդվածի 2-րդ կետի (գ) ենթակետում, հարկադրական ամլացումը և սեքսուալ բռնության այլ ձևեր, որոնք նույնպես Ժնևի չորս կոնվենցիաների համար ընդհանուր 3-րդ հոդվածի լուրջ խախտումներ են,

vii) մինչև տասնինգ տարեկան երեխաներին զինված ուժեր կամ խմբեր զինվորական ծառայության գորակոչելը կամ հավաքագրելը, կամ ռազմական գործողություններին նրանց ակտիվ մասնակցությունն օգտագործելը,

viii) ընդհարման հետ կապված պատճառներով քաղաքացիական բնակչության տեղահանման հրաման արձակելը, եթե միայն դա չի պահանջվում համապատասխան քաղաքացիական բնակչության անվտանգության նկատառումներով, կամ ռազմական բնույթի անհետաձգելի անհրաժեշտությամբ,

ix) հակառակորդի մարտիկին դաշտությամբ սպանելը կամ վիրավորելը,

x) հայտարարելը, թե գրություն չի լինի,

xi) հակառակորդ կողմի իշխանության ներքո գտնվող անձանց ֆիզիկական խեղումը կամ նրանց ենթարկումը բժշկական կամ գիտական տարաբնույթ փորձերի, որոնք չեն արդարացվում տվյալ անձի բժշկական, ատամնաբուժական կամ հիվանդանոցային բուժման անհրաժեշտությամբ և իրականացվում են ոչ ի շահ նրա, և որոնք հանգեցնում են տվյալ անձի կամ անձանց մահվան կամ լրջորեն սպանում են նրանց առողջությանը,

xii) հակառակորդի ունեցվածքի ոչնչացումը կամ զավթումը, բացառությամբ, եթե նման ոչնչացումը կամ զավթումն անհետաձգելիորեն թելադրված են ռազմական անհրաժեշտությամբ:

զ) 2-րդ կետի (ե) ենթակետը կիրառվում է միջազգային բնույթ չունեցող զինված ընդհարումների նկատմամբ և, այդպիսով, չի կիրառվում ներքին հոգումների և

լարվածությունների նկատմամբ, ինչպիսին են, օրինակ, հասարակական անկարգությունները, բռնության առանձին և պատահական դեպքերը կամ նման բնույթի այլ գործողությունները: Այն կիրառվում է պետություններից որևէ մեկի տարածքում տեղի ունեցող զինված ընդհարումների նկատմամբ, երբ առկա է տևական զինված ընդհարում կառավարական ուժերի և կազմակերպված զինված խմբավորումների կամ հենց այդ խմբավորումների միջև:

3. 2-րդ կետի (գ) և (ե) ենթակետերում շարադրված որևէ դրույթ չի շոշափում կառավարության պատասխանատվությունը՝ բոլոր օրինական միջոցներով պետության մեջ պահպանելու կամ վերականգնելու օրենքն ու կարգը կամ պաշտպանելու պետության միասնությունը և տարածքային ամբողջականությունը:

Հոդված 9 **Հանցագործությունների տարրերը**

1. Հանցագործությունների տարրերը Դատարանին կօգնեն 6-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածների մեջնաբանման և կիրառման գործում: Դրանք պետք է ընդունվեն սույն Կանոնադրության Կողմեր հանդիսացող պետությունների Ասամբլեայի անդամների ձայնների երկու երրորդի մեծամասնությամբ:

2. Հանցագործությունների տարրերի փոփոխություններ կարող են առաջարկել՝

ա) սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող ցանկացած պետություն,

բ) բացարձակ մեծամասնությամբ որոշում ընդունող դատավորները,

գ) դատախազը:

Այդ փոփոխություններն պետք է ընդունվեն սույն Կանոնադրության Կողմեր հանդիսացող պետությունների Ասամբլեայի անդամների ձայնների երկու երրորդի մեծամասնությամբ:

3. Հանցագործությունների տարրերը և դրանցում կատարված փոփոխություններն պետք է համապատասխանեն սույն Կանոնադրությանը:

Հոդված 10

Այս բաժնում շարադրված որևէ դրույթ չպետք է մեկնաբանվի որպես միջազգային իրավունքի գոյություն ունեցող կամ ձևավորվող նորմերը որևէ կերպ սահմանափակող կամ ի վեհական դրանց գործող՝ սույն Կանոնադրության նպատակների հետ անհամատելի այլ նպատակներով:

Հոդված 11 **Իրավագորությունը ratione temporis**

1. Դատարանին ընդդատյա են միայն սույն Կանոնադրության ուժի մեջ մտնելուց հետո կատարված հանցագործությունները:

2. Եթե որևէ պետություն սույն Կանոնադրության Կողմ է դառնում նրա ուժի մեջ մտնելուց հետո, ապա Դատարանն իր իրավագորությունը կարող է իրականացնել միայն այն հանցագործությունների նկատմամբ, որոնք կատարվել են այդ պետության համար Կանոնադրության ուժի մեջ մտնելուց հետո, եթե այդ պետությունը 12-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն հայտարարություն չի արել:

Հոդված 12 **Իրավագորության իրականացման նախապայմանները**

1. Պետությունը, որը դառնում է սույն Կանոնադրության Կողմ, դրանով իսկ ճանաչում է Դատարանի իրավագորությունը 5-րդ հոդվածում նշված հանցագործությունների նկատմամբ:

2. 13-րդ հոդվածի (ա) կամ (գ) կետերի դեպքում Դատարանն իր իրավագորությունը կարող է իրականացնել, եթե ներքոհիշյալ պետություններից մեկը կամ մի քանիսը սույն Կանոնադրության Կողմեր են, կամ 3-րդ կետին համապատասխան ճանաչում են Դատարանի իրավագորությունը.

ա) այն պետությունը, որի տարածքում տեղի է ունեցել տվյալ գործողությունը, կամ, եթե այդ հանցագործությունը կատարվել է նավի կամ օդանավի վրա՝ այդ նավի կամ օդանավի գործությունը,

բ) այն պետությունը, որի քաղաքացին մեղադրվում է հանցագործության կատարման մեջ:

3. Եթե 2-րդ կետի համաձայն պահանջվում է սույն Կանոնադրության Կողմ չհանդիսացող պետության կողմից Դատարանի իրավագորության ճանաչումը, այդ պետությունը կարող է Քարտուղարին ներկայացված հայտարարության միջոցով ճանաչել Դատարանի իրավագորության իրականացումը համապատասխան հանցագործության նկատմամբ: Ծանաչող պետությունը, առանց որևէ ձգձգման կամ քացառության, կիամագործակցի Դատարանի հետ՝ 9-րդ քաժնին համապատասխան:

Հոդված 13 **Իրավագորության իրականացումը**

Դատարանը 5-րդ հոդվածում նշված հանցագործությունների նկատմամբ իր իրավագորությունը կարող է իրականացնել սույն Կանոնադրության դրույթներին համապատասխան, եթե՝

ա) 14-րդ հոդվածին համապատասխան սույն կանոնադրության Կողմ հանդիսացող պետության կողմից դատախազին ներկայացվում է այն իրավիճակը, որի դեպքում, ենթադրաբար, կատարվել է մեկ կամ մի քանի նման հանցագործություն,

բ) Անվտանգության խորհուրդը, գործելով Սիավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության VII գլխի հիման վրա, դատախազին ներկայացնում է այն իրավիճակը, որի դեպքում, ենթադրաբար, կատարվել է մեկ կամ մի քանի նման հանցագործություն, կամ

գ) դատախազը 15-րդ հոդվածին համապատասխան քննություն է նախաձեռնել այդ հանցագործության կապակցությամբ:

Հոդված 14 **Սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետության կողմից իրավիճակը ներկայացնելը**

1. Սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունը կարող է դատախազին ներկայացնել այն իրավիճակը, որի դեպքում, ենթադրաբար, կատարվել են Դատարանին ընդդատյա մեկ կամ մի քանի հանցագործություն, խնդրելով դատախազին քննության առնել այդ իրավիճակը՝ որոշելու համար նման հանցագործությունների համար մեկ կամ մի քանի անձանց մեղավորությունը:

2. Իրավիճակը ներկայացնելու ժամանակ հնարավորինս նշվում են համապատասխան հանգամանքներ և կցվում հաստատող փաստաթղթեր, որոնք կան իրավիճակը ներկայացնող պետության տրամադրության ներքո:

Հոդված 15 Դատախազը

1. Դատախազը կարող է սկսել հետաքննություններ ՝*proprio motu* Դատարանին ընդդատյա, ենթադրվող համագործությունների վերաբերյալ տեղեկատվության հիման վրա:

2. Դատախազը կգնահատի ստացված տեղեկատվության հիմնավորվածությունը: Այդ նպատակով նա կարող է լրացուցիչ տեղեկատվություն պահանջել պետություններից, Սիավորված ազգերի կազմակերպության մարմիններից, միջկառավարական և ոչ կառավարական կազմակերպություններից կամ այլ նպատակահարմար աղբյուրներից և կարող է ստանալ գրավոր կամ բանավոր վկայություններ Դատարանի նստավայրում:

3. Եթե Դատախազը հանգում է եզրակացության, որ քննություն սկսելու համար առկա են բավարար հիմքեր, կղիմի Սինդիատական վարույթի պալատին՝ քննություն իրականացնելու թույլտվություն ստանալու խնդրանքով, ներկայացնելով այդ խնդրանքը հիմնավորող նյութերը: Տուժողները կարող են, Դատավարության և ապացույցների կանոններին համապատասխան, միջնորդագրեր ներկայացնել Սինդիատական պալատ:

4. Եթե Սինդիատական վարույթի պալատն այդ խնդրանքի և ներկայացված նյութերի ուսումնասիրության արդյունքում գտնում է, որ բավարար հիմքեր կան քննություն սկսելու համար, և գործը, ըստ ամենայնի, ընդդատյա է Դատարանին, թույլատրում է քննություն սկսել՝ առանց կանխորշելու գործի ընդդատության և ընդունելի լինելու վերաբերյալ Դատարանի հետազա որոշումները:

5. Սինդիատական վարույթի պալատի կողմից քննության թույլատրության մերժումը չի բացառում նույն իրավիճակին առնչվող նոր փաստերի կամ վկայությունների հիման վրա Դատախազի կողմից հետազայում նոր խնդրանք ներկայացնելը:

6. Եթե 1-ին և 2-րդ կետերում նշված նախնական ուսումնասիրությունից հետո Դատախազը գտնում է, որ ներկայացված տեղեկատվությունը բավարար հիմք չի պարունակում քննության համար, ապա այդ մասին հայտնում է տեղեկատվությունը ներկայացնողներին: Դա չի բացառում Դատախազի կողմից նույն իրավիճակին առնչվող հետազայում ներկայացված տեղեկատվությունը քննության առնելը՝ նոր փաստերի կամ վկայությունների լույսի ներքո:

Հոդված 16 Քննությունը կամ քրեական հետազնդումը հետաձգելը

Սույն Կանոնադրությանը համապատասխան, որևէ քննություն կամ քրեական հետազնդում չի կարող սկսվել կամ իրականացվել Անվտանգության խորհրդի կողմից՝ Սիավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության VII գլխի հիման վրա ընդունած բանաձևով Դատարանին խնդրանքով դիմելուց հետո 12 ամսվա ընթացքում. այդ խնդրանքն Անվտանգության խորհուրդը կարող է կրկնել նույն պայմաններով:

Հոդված 17 Գործի ընդունելիության վերաբերյալ հարցերը

1. Հաշվի առմելով նախարանի 10-րդ կետը և 1-ին հոդվածը, Դատարանը վարույթի համար գործի անընդունելիության մասին որոշում է կայացնում, եթե.

ա) գործի կապակցությամբ իրականացվում է քննություն կամ հարուցված է քրեական հետազնդում այն պետության կողմից, որին ընդդատյա է տվյալ գործը, բացառությամբ այն

դեպքերի, երբ այդ պետությունը չի ցանկանում կամ ի վիճակի չէ պատշաճ կերպով իրականացնել քննությունը կամ քրեական հետազնդումը,

բ) գործի կապակցությամբ քննություն է իրականացվել այն պետության կողմից, որին ընդդատյա է այդ գործը, և այդ պետությունը որոշել է քրեական հետազնդում չհարուցել համապատասխան անձի նկատմամբ, բացառությամբ, այն դեպքերի, երբ այդ որոշումն արդյունք է նրա, որ պետությունը չի ցանկանում կամ անկարող է պատշաճ կերպով քրեական հետազնդում հարուցել,

գ) տվյալ անձն արդեն դատապարտվել է այն արարքի համար, որը հանդիսանում է տվյալ հայտարարության առարկան, և Դատարանի կողմից գործի քննությունը չի բույլատրվում 20-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան,

դ) գործը բավկականաշափ լուրջ չէ, որպեսզի հիմնավորվեն Դատարանի հետազս գործողությունները:

2. Որևէ կոնկրետ գործի առնչությամբ քննություն իրականացնելու ցանկության բացակայությունը բացահայտելու նպատակով Դատարանը, ելնելով միջազգային իրավունքով ճանաչված համապատասխան ընթացակարգային սկզբունքներից, հաշվի է առնում հետևյալ գործոններից մեկի կամ մի քանիսի առկայությունը.

ա) դատավարությունն իրականացվել կամ իրականացվում է, կամ ներպետական որոշումը կայացվել է համապատասխան անձին Դատարանին ընդդատյա և 5-րդ հոդվածում նշված հանգագործությունների կատարման համար քրեական պատասխանատվությունից պաշտպանելու նպատակով,

բ) դատավարությունն անհիմն կերպով ձգձգվել է, ինչն ստեղծված հանգամանքների պայմաններում անհամատեղելի է տվյալ անձի նկատմամբ արդարադատություն իրականացնելու մտադրությանը,

գ) դատավարությունը չի իրականացվել կամ չի իրականացվում անկախ կամ անկողմնակալ կերպով, և այն կարգը, որով այն իրականացվել կամ իրականացվում է, ստեղծված հանգամանքների պայմաններում անհամատեղելի է տվյալ անձի նկատմամբ արդարադատություն իրականացնելու մտադրությանը:

3. Որևէ կոնկրետ գործի առնչությամբ անկարողության առկայությունը բացահայտելու նպատակով Դատարանը հաշվի է առնում, թե տվյալ պետությունն ի վիճակի է արդյոք, իր ազգային դատական համակարգի լիակատար կամ Էական քայլայվածության կամ բացակայության պատճառով իր տրամադրության ներքո ստանալ մեղադրյալին կամ անհրաժեշտ ապացույցներն ու վկայությունները, կամ այլ պատճառներով անկարող է իրականացնել դատավարությունը :

Հոդված 18

Գործի ընդունելիության վերաբերյալ նախնական որոշումները

1. Այն դեպքում, երբ իրավիճակը Դատարանին ներկայացվել է 13-րդ հոդվածի (ա) կետին համապատասխան, և դատախազը որոշել է, որ քննություն սկսելու համար կան բավարար հիմքեր, կամ եթե դատախազը քննություն է սկսել 13-րդ հոդվածի (գ) կետին և 15-րդ հոդվածին համապատասխան, նա այդ մասին ծանուցում է սույն Կանոնադրության Կողմեր հանդիսացող բոլոր պետություններին և այն պետություններին, որոնք, հաշվի առնելով առկա տեղեկատվությունը, սովորաբար կիրականացնեին իրենց իրավագործությունը տվյալ հանգագործությունների նկատմամբ: Դատախազը այդ պետություններին կարող է ծանուցել կոնֆիդենցիալ հիմունքներով և, եթե նա անհրաժեշտ է գտնում ապահովել անձանց պաշտպանությունը, կանխել ապացույցների ոչնչացումը կամ խոչընդոտել անձանց թաքնվելուն, կարող է սահմանափակել պետություններին ներկայացվող տեղեկատվության ծավալը:

2. Նման ծանուցում ստանալուց հետո մեկ ամսվա ընթացքում պետությունը Դատարանին կարող է տեղեկացնել, որ ինքը քննություն է իրականացնում կամ քննություն է իրականացրել իր քաղաքացիների կամ իր իրավագործության ներքո գտնվող այլ անձանց նկատմամբ՝ քրեորեն պատժելի այն արարքների կապակցությամբ, որոնք կարող են հանդիսանալ 5-րդ հոդվածում նշված հանցագործություններ և որոնք առնչվում են պետություններին ուղարկված ծանուցման մեջ նշված տեղեկատվությանը: Այդ պետության խնդրանքով դատախազը տվյալ անձանց նկատմամբ քննության իրականացումը փոխանցում է պետությանը, բացառությամբ այն դեպքերի, երբ Մինչդատական վարույթի պալատը դատախազի միջնորդության հիման վրա որոշում է թույլատրել քննության իրականացումը:

3. Քննության իրականացումը պետությանը փոխանցելու՝ դատախազի համաձայնությունը կարող է դատախազի կողմից վերանայվել փոխանցման մասին որոշումն ընդունելուց հետո վեց ամսվա ընթացքում կամ ցանկացած ժամանակ այն բանից հետո, երբ պետության կողմից քննությունն իրականացնել չցանկանալու կամ պատշաճ կերպով իրականացնելու անկարողության հետևանքով տեղի է ունեցել հանգամանքների էական փոփոխություն:

4. Համապատասխան պետությունը կամ դատախազը կարող են Մինչդատական վարույթի պալատի որոշումը 82-րդ հոդվածին համապատասխան բողոքարկել Վերաքննիչ պալատում: Բողոքը կարող է քննության առնվել արագացված կարգով:

5. Եթե դատախազը 2-րդ կետին համապատասխան փոխանցում է քննության իրականացումը, նա կարող է համապատասխան պետությանը խնդրել՝ իրեն պարբերաբար տեղեկացնելու քննության ընթացքի և քրեական հետապնդման հետագա ցանկացած միջոցառման մասին: Սույն Կանոնադրության Կողմեր հանդիսացող պետությունները նման խնդրանքներին պատասխանում են առանց անհիմն ձգձգումների:

6. Նախքան Մինչդատական վարույթի պալատի կողմից որոշման կայացումը կամ դատախազի կողմից սույն հոդվածին համապատասխան քննությունը փոխանցելուց հետո ցանկացած ժամանակ դատախազը կարող է, բացառության կարգով, Մինչդատական վարույթի պալատից թույլտվություն խնդրել՝ ապացույցները պահպանելու նպատակով անհրաժեշտ քննչական միջոցառումներ ձեռնարկելու համար այն դեպքերում, եթե կա կարևոր ապացույց ձեռք բերելու բացառիկ հնարավորություն կամ առկա է այդ ապացույցի հետագա ձեռք բերման անհնարինության իրական փուլ:

7. Մինչդատական վարույթի պալատի որոշումը սույն հոդվածին համապատասխան վիճարկող պետությունը կարող է 19-րդ հոդվածի համաձայն վիճարկել գործի ընդունելիության մասին որոշումը՝ հիմք ընդունելով լրացույցի էական փաստերը կամ հանգամանքների էական փոփոխությունը:

Հոդված 19

Դատարանին գործի ընդդատության և ընդունելիության վերաբերյալ հարցերի բողոքարկումը

1. Դատարանը պետք է հավաստիանա, որ իր քննությանը ներկայացված ցանկացած գործ ընդդատյա է իրեն: Դատարանը կարող է իր նախաձեռնությամբ որոշում կայացնել գործի ընդունելիության վերաբերյալ 17-րդ հոդվածին համապատասխան:

2. 17-րդ հոդվածում նշված հիմքերով գործի ընդունելիության կամ Դատարանի ընդդատության վերաբերյալ բողոքները կարող են բերվել՝

ա) մեղադրյալի կամ այն անձի կողմից, որի նկատմամբ 58-րդ հոդվածին համապատասխան տրվել է կալանավորման սանկցիա կամ Դատարան ներկայանալու մասին ծանուցագիր,

թ) տվյալ գործի նկատմամբ իրավազորությամբ օժտված պետության կողմից՝ այն հիմքով, որ այդ պետությունը գործով քննություն կամ քրեական հետազնում է իրականացնում կամ իրականացրել է, կամ՝

գ) այն պետության կողմից, որից պահանջվում է Դատարանի իրավազորության ճանաչում՝ 12-րդ հոդվածին համապատասխան:

3. Դատախազը կարող է խնդրել Դատարանին որոշում կայացնել գործի ընդդատության կամ ընդունելիության վերաբերյալ։ Գործի ընդդատության կամ ընդունելիության վերաբերյալ հարցերը քննության առնելիս՝ նրանք, ովքեր, 13-րդ հոդվածին համապատասխան, իրավիճակը քննության են ներկայացրել, ինչպես նաև տուժողները կարող են Դատարանին ներկայացնել իրենց դիտողությունները։

4. Գործի ընդունելիության կամ Դատարանի ընդդատության վերաբերյալ բողոքներ կարող են բերվել միայն մեկ անգամ՝ 2-րդ կետում նշված ցանկացած անձի կամ պետության կողմից։ Բողոքը պետք է բերվի նախքան դատաքննության սկսվելը կամ դատաքննության սկզբում։ Բացառիկ հանգամանքներում Դատարանը կարող է բույլատրել, որպեսզի բողոքը բերվի մեկից ավելի անգամ կամ դատաքննությունն սկսելուց հետո։ Գործի ընդունելիության վերաբերյալ բողոքները, որոնք բերվում են դատաքննության սկզբում կամ, հետագայում Դատարանի բույլտվությամբ, կարող են հիմնվել միայն 17-րդ հոդվածի 1-ին կետի (գ) ենթակետի վրա։

5. 2-րդ կետի (թ) և (զ) ենթակետերում նշված պետությունը բողոքը բերում է հնարավորին չափ շուտ։

6. Նախքան մեղադրանքների հաստատումը գործի ընդունելիության կամ Դատարանի ընդդատության վերաբերյալ բողոքները պետք է ներկայացվեն Սինչդատական վարույթի պալատին։ Մեղադրանքների հաստատումից հետո այդ բողոքները ներկայացվում են Դատական պալատին։ Գործի ընդդատության կամ ընդունելիության վերաբերյալ որոշումները 82-րդ հոդվածին համապատասխան կարող են բողոքարկվել Վերաքննիչ պալատում։

7. Եթե բողոքը բերված է 2-րդ կետի (թ) կամ (զ) ենթակետերում նշված պետության կողմից, ապա դատախազը կասեցնում է քննությունը այնքան ժամանակ, մինչև Դատարանը 17-րդ հոդվածին համապատասխան որոշում կկայացնի։

8. Մինչև Դատարանի կողմից որոշում կայացնելը՝ դատախազը կարող է խնդրել Դատարանին բույլատրել։

ա) ձեռնարկելու 18-րդ հոդվածի 6-րդ կետում նշված անհրաժեշտ քննչական միջոցառումներ,

թ) վկայից հայտարարություններ կամ ցուցմունքներ ստանալու կամ ավարտելու ապացույցների հավաքումը և ուսումնասիրումը, որոնք սկսվել էին նախքան բողոք բերելը, և

զ) համապատասխան պետությունների հետ համագործակցելով՝ կանխելու այն անձանց փախուստը, որոնց նկատմամբ դատախազը 58-րդ հոդվածին համապատասխան արդեն կալանքի սանկցիա է խնդրել։

9. Բողոք բերելը չի կարող ազդեցություն ունենալ մինչև այդ դատախազի ձեռնարկած ցանկացած գործողության կամ Դատարանի կարգադրության կամ սանկցիայի վավերականության վրա։

10. Եթե Դատարանը որոշել է, որ 17-րդ հոդվածի համաձայն գործն ընդունելի չէ, դատախազը կարող է այդ որոշումը վերանայելու խնդրանք ներկայացնել, եթե լիովին համոզված է, որ ի հայտ են եկել նոր փաստեր, որոնց ուժով վերանում են 17-րդ հոդվածի համաձայն գործի ընդունելիության մասին նախկինում ընդունված որոշման հիմքերը։

11. Եթե դատախազը, հաշվի առնելով 17-րդ հոդվածում նշված հարցերը, փոխանցում է քննությունը, նա կարող է դիմել համապատասխան պետությանը՝ այդ գործի վարույթի վերաբերյալ իրեն տեղեկատվություն տրամադրելու խնդրանքով։ Համապատասխան

պետության խնդրանքով ապահովում է այդ տեղեկատվության գաղտնիությունը: Եթե հետագայում դատախազը որոշում է շարունակել քննությունը, այդ մասին տեղեկացնում է այն պետությանը, որին փոխանցվել էր տվյալ գործի վարույթը:

Հոդված 20 Ne bis in idem

1. Բացառությամբ սույն Կանոնադրությամբ նախատեսված դեպքերի, անձը չի կարող Դատարանի կողմից դատապարտվել այն հանցագործությունների հիմքը կազմող արարքի համար, որի համար այդ անձը Դատարանի կողմից ճանաչվել է մեղավոր կամ արդարացվել է:

2. Անձը չի կարող մեկ այլ դատարանի կողմից դատապարտվել 5-րդ հոդվածում նշված հանցագործությունների համար, որոնց համար Դատարանի կողմից նաև արդեն ճանաչվել է մեղավոր կամ արդարացվել է:

3. 6-րդ, 7-րդ կամ 8-րդ հոդվածներով նախատեսված արարքների համար մեկ այլ դատարանի կողմից դատապարտված որևէ անձ նույն արարքի համար չի կարող դատապարտվել Դատարանի կողմից. բացառությամբ այն դեպքերի, եթե մեկ այլ դատարանում դատավարությունը՝

ա) իրականացվել է տվյալ անձին՝ Դատարանին ընդդատյա հանցագործությունների կատարման համար քրեական պատաժանատվության ենթարկելուց պաշտպանելու համար, կամ

բ) չի իրականացվել անկախ կամ անկողմնակալ, միջազգային իրավունքում ընդունված պատշաճ ընթացակարգի նորմերին համապատասխան, և իրականացվել է այնպես, որ առկա հանգամանքներում անհամատեղելի է եղել անձի նկատմամբ արդարադատություն իրականացնելու մտադրության հետ:

Հոդված 21 Կիրառելի իրավունքը

1. Դատարանը կիրառում է.

ա) առաջին հերթին՝ սույն Կանոնադրությունը, Հանցագործությունների տարրերը և իր Ընթացակարգի և ապացուցման կանոնները,

բ) երկրորդ հերթին՝ համապատասխան դեպքերում՝ կիրառվող միջազգային պայմանագրերը և միջազգային իրավունքի սկզբունքներն ու նորմերը, ներառյալ՝ զինված ընդհարումների միջազգային իրավունքի ճանաչված սկզբունքները,

գ) եթե դա հնարավոր չէ, Դատարանը կիրառում է աշխարհի իրավական համակարգերի ազգային օրենքներից վերցրած իրավունքի ընդհանուր սկզբունքները, ներառյալ, համապատասխանաբար, այն պետությունների ազգային օրենքները, որոնք սովորական հանգամանքներում իրավագորություն կիրականացնելին տվյալ հանցագործության նկատմամբ, պայմանով, որ այդ սկզբունքները չեն հակասում սույն Կանոնադրությանը, միջազգային իրավունքին և միջազգայնորեն ճանաչված նորմերին և ստանդարտներին:

2. Դատարանն իրավունքի սկզբունքներն ու նորմերը կարող են կիրառել այնպես, ինչպես դրանք մեկնարանվել են իր նախորդ որոշումներում:

3. Սույն հոդվածի համաձայն իրավունքի կիրառումը և մեկնարանումը պետք է համապատասխանեն՝ մարդու միջազգայնորեն ճանաչված իրավունքներին և չբույլատրվի խորականություն այնպիսի հիմքերով, ինչպիսին են սեռը (ինչպես սահմանված է 7-րդ հոդվածի 3-րդ կետում), տարիքը, ռասան, մաշկի գույնը, լեզուն, կլոնը կամ դավանանքը,

քաղաքական կամ այլ համոզունքները, ազգային, էթնիկական կամ սոցիալական ծագումը, գույքային, դասային կամ այլ կարգավիճակը:

ԲԱԺԻՆ 3. ԶՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Հոդված 22 Nullum crimen sine lege

1. Անձը չի կարող սույն Կանոնադրության հիման վրա քրեական պատասխանատվության ենթարկել, եթե կատարվելու պահին արարքը Դատարանին ընդդատյա հանցագործություն չէ:

2. Հանցագործության սահմանումը պետք է մեկնաբանվի ճշգրիտ և չպետք է կիրառվի անալոգիայով: Երկիմաստության դեպքում սահմանումը մեկնաբանվում է հօգուտ այն անձի, որի նկատմամբ իրականացվում է քննություն, դատաքննություն կամ որը ճանաչվել է մեղավոր:

3. Սույն հոդվածը չի ազդում ցանկացած արարք միջազգային իրավունքի տեսակետից իրեն հանցագործություն որակելու վրա՝ անկախ սույն Կանոնադրությունից:

Հոդված 23 Nulla poena sine lege

Դատարանի կողմից մեղավոր ճանաչված անձը կարող է պատժվել միայն սույն Կանոնադրությանը համապատասխան:

Հոդված 24 Ratione personae հետադարձ ուժի մերժումը

1. Անձը քրեական պատասխանատվության չի կարող ենթարկվել սույն Կանոնադրության համաձայն՝ նախքան վերջինիս ուժի մեջ մտնելը կատարած արարքի համար:

2. Եթե մինչև վերջնական որոշման կայացումը տվյալ գործով կիրառվող օրենքում կատարվել է փոփոխություն, ապա այն անձի համար, որի նկատմամբ իրականացվում է քննություն, դատաքննություն կամ որը ճանաչվել է մեղավոր, կիրառվում է առավել նպաստավոր օրենքը:

Հոդված 25 Անհատական քրեական պատասխանատվությունը

1. Դատարանը ֆիզիկական անձանց նկատմամբ իրավագործությամբ օժտված է սույն Կանոնադրությանը համապատասխան:

2. Դատարանին ընդդատյա հանցագործություն կատարած անձը կրում է անհատական պատասխանատվություն և ենթակա է պատժի սույն Կանոնադրությանը համապատասխան:

3. Սույն Կանոնադրությանը համապատասխան, Դատարանին ընդդատյա հանցագործության կատարման համար անձը քրեական պատասխանատվության և պատժի ենթակա է, եթե նա.

ա) նման հանցագործություն է կատարում անհատապես, այլ անձի հետ համատեղ կամ այլ անձի միջոցով՝ անկախ վերջինիս քրեական պատասխանատվության ենթակա լինելու հանգամանքից,

բ) կարգադրում, հրահրում կամ դրդում է կատարել նման հանցագործություն, որը փաստացի կատարվում է կամ կատարելու փորձ է արվում,

գ) նման հանցագործության կատարումը հեշտացնելու նպատակով օժանդակում, դրդում կամ որևէ այլ կերպ աջակցում է դրա կատարմանը կամ կատարման փորձին՝ ներառյալ կատարման համար միջոցների տրամադրումը,

դ) ցանկացած այլ կերպ նպաստում է ընդհանուր նպատակով գործող անձանց խմբի կողմից նման հանցագործության կատարմանը կամ կատարման փորձին: Նման աջակցությունը պետք է ցույց տրվի դիտավորությամբ կամ

ի) խմբի հանցավոր գործունեությանը կամ հանցավոր նպատակին աջակցելու նպատակով, եթե նման գործունեությունը կամ նպատակը կապված է Դատարանին ընդդատյա հանցագործության կատարման հետ, կամ

ii) զիտակցելով խմբի՝ հանցագործություն կատարելու դիտավորությունը,

ե) ցեղասպանության հանցագործության դեպքում՝ ուղղակի և հրապարակայնորեն դրդում է այլոց՝ ցեղասպանություն կատարելու,

զ) փորձում է կատարել նման հանցագործություն՝ դրա կատարման համար ձեռնարկելով էական քայլ հանդիսացող գործողություն, սակայն հանցագործությունը չի կատարվում անձի մտադրությունից անկախ հանգամանքներով: Միաժամանակ, անձը, որը հրաժարվում է հանցագործություն կատարելու փորձից կամ որևէ այլ կերպ կանխում է հանցագործության ավարտը, սույն Կանոնադրությանը համապատասխան ենթակա չէ պատժի այդ հանցագործության կատարման փորձի համար, եթե այդ անձն ամբողջովին և կամովին հրաժարվել է հանցավոր նպատակից:

4. Սույն Կանոնադրության անհատական քրեական պատասխանատվությանը վերաբերող որևէ դրույթ չի ազդում պետությունների ըստ միջազգային իրավունքի պատասխանատվության վրա:

Հոդված 26 Իրավագորության բացառումը 18 տարին չլրացած անձանց նկատմամբ

Դատարանն օժտված չէ իրավագորությամբ՝ հանցագործության ենթադրվող կատարման պահին 18 տարին չլրացած անձանց նկատմամբ:

Հոդված 27 Պաշտոնական դիրքը վկայակոչելու անթույլատրելիությունը

1. Սույն Կանոնադրությունը հավասարապես կիրառվում է բոլոր անձանց նկատմամբ՝ առանց պաշտոնական դիրքով պայմանավորված տարրերակման: Մասնավորապես, պետության կամ կառավարության գլխի, Կառավարության կամ խորհրդարանի անդամի, ընտրված ներկայացուցչի կամ կառավարության պաշտոնատար անձի պաշտոնական դիրքը ոչ մի դեպքում անձին չի ազտում սույն Կանոնադրության համաձայն քրեական պատասխանատվությունից և ինքնին դատավճռի մեղմացման հիմք չի հանդիսանում:

2. Ազգային կամ միջազգային իրավունքով նախատեսված անձեռնմխելիությունը կամ դատավարական հատուկ նորմերը, որոնք կարող են կապված լինել անձի պաշտոնական դիրքի հետ, չպետք է խոչընդոտեն Դատարանին՝ այդ անձանց նկատմամբ իրականացնելու իր իրավագորությունը:

Հոդված 28

Հրամանատարների և պաշտոնով քարձր այլ անձանց պատասխանատվությունը

Ի լրումն սույն Կանոնադրությամբ նախատեսված Դատարանին ընդդատյա հանցագործությունների համար քրեական պատասխանատվության այլ հիմքերի.

ա) զինվորական հրամանատարը կամ որպես զինվորական հրամանատար արդյունավետ գործող անձը ենթակա է քրեական պատասխանատվության Դատարանին ընդդատյա այն հանցագործությունների համար, որոնք կատարվել են իր հրամանատարության կամ վերահսկողության, կամ նայած հանգամանքներին, իր իշխանության և վերահսկողության ներքո գտնվող ուժերի կողմից՝ այդ ուժերի նկատմամբ իր ոչ պատշաճ վերահսկողության պատճառով, եթե.

ի) այդ զինվորական հրամանատարը կամ այդ անձը կամ տեղյակ էր, կամ տվյալ պահին առկա հանգամանքներից ելնելով, պարտավոր էր տեղյակ լինելու, որ այդ ուժերը կատարում էին կամ պատրաստվում էին կատարել նման հանցագործություններ, և

ii) այդ զինվորական հրամանատարը կամ այդ անձն իր լիազորությունների սահմաններում չի ձեռնարկել բոլոր անհրաժեշտ և խելամիտ միջոցները՝ դրանց կատարումը կանխելու կամ խափանելու, կամ քննություն և քրեական հետապնդում իրականացնելու նպատակով տվյալ հարցը իրավասու մարմիններին փոխանցելու համար:

բ) Պետի և ենթակայի՝ (ա) կետով չնախատեսված հարաբերությունների առնչությամբ՝ պետք ենթակա է քրեական պատասխանատվության Դատարանին ընդդատյա այն հանցագործությունների համար, որոնք կատարվել են իր իշխանության և վերահսկողության ներքո գտնվող ենթականների կողմից՝ նրանց նկատմամբ իր ոչ պատշաճ վերահսկողության պատճառով, եթե՝

ի) պետք կամ իմացել է, կամ զիտակցարար անտեսել այն տեղեկատվությունը, որն ակնհայտորեն վկայել է, թե ենթականները կատարում էին կամ պատրաստվում էին կատարել նման հանցագործություններ,

ii) հանցագործությունները շղշափում էին այն գործունեությունը, որը գտնվում է պետի պատասխանատվության և վերահսկողության ներքո, և

iii) պետն իր լիազորությունների սահմաններում չի ձեռնարկել բոլոր անհրաժեշտ ու ողջամիտ միջոցները՝ հանցագործությունների կատարումը կանխելու կամ խափանելու, կամ քննություն և քրեական հետապնդում իրականացնելու նպատակով տվյալ հարցը իրավասու մարմիններին փոխանցելու համար:

Հոդված 29

Վաղեմության ժամկետ չկիրառելը

Դատարանին ընդդատյա հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չի կիրառվում:

Հոդված 30

Սուրյեկտիվ կողմը

1. Եթե այլ բան նախատեսված չէ, անձը Դատարանին ընդդատյա հանցագործության համար ենթակա է քրեական պատասխանատվության միայն այն դեպքում, եթե ըստ օբյեկտիվ կողմը բնութագրող հատկանիշների այն կատարվել է մտադրված և զիտակցված:

2. Սույն հոդվածի նպատակների համար, անձը մտադրություն ունի այն դեպքերում, եթե՝

ա) արարքի առնչությամբ՝ անձը պատրաստվում է կատարել նման արարք,

բ) հետևանքի առնչությամբ՝ անձը պատրաստվում է պատճառել այդ հետևանքը կամ գիտակցում է, որ այն կառաջանա դեպքերի բնական զարգացման ընթացքում:

3. Սույն հոդվածի նպատակների համար. «գիտակցված» նշանակում է գիտակցել, որ այդ հանգամանքը գոյություն ունի կամ որ հետևանքը կառաջանա դեպքերի բնական զարգացման արդյունքում: «Գիտակցել» և «գիտակցաբար» հասկացությունները պետք է մեկնարանվեն համապատասխան ձևով:

Հոդված 31

Քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերը

1. Ի լրումն քրեական պատասխանատվությունից ազատելու սույն Կանոնադրությամբ նախատեսված այլ հիմքերի, անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե արարք կատարելու պահին.

ա) այդ անձը տառապում է հոգեկան հիվանդությամբ կամ խանգարումով, որը զրկում է նրան իր վարքագծի անօրինականությունը կամ բնույթը գիտակցելու, կամ իր գործողություններն օրենքի պահանջներին օրենքի պահանջներին համապատասխան կատարելու հնարավորությունից, եթե միայն այդ անձը ինտոքսիկացիայի չի ենթարկվել կամավոր, այնպիսի հանգամանքներում, որոնց դեպքում անձը գիտակցել է, որ ինտոքսիկացիայի հետևանքով իր կողմից հնարավոր է Դատարանին ընդդատյա հանցագործություն հանդիսացող արարքի կատարում, կամ անտեսել է իր կողմից նման արարքի կատարման վտանգը,

բ) այդ անձը գործել է խելամիտ՝ իրեն կամ այլ անձի, կամ, պատերազմական հանցագործությունների դեպքում, իր կամ այլ անձի կենդանի մնալու համար հատուկ կարևորության ունեցվածքը կամ ռազմական բնույթի խնդիրների կատարման համար հատուկ կարևորության ունեցվածքն ուժի անխուսափելի և անօրինական գործադրությունից պաշտպանելու նպատակով՝ կիրառելով իրեն կամ պաշտպանվող այլ անձի կամ ունեցվածքին սպառնացող վտանգի աստիճանին համարժեք միջոցներ: Այն հանգամանքը, որ անձը մասնակցել է ուժերի կողմից իրականացված պաշտպանական գործողությունների, ինքնին քրեական պատասխանատվությունից սույն ենթակետի համաձայն ազատելու հիմք չի հանդիսանում,

գ) այդ անձը գործել է խելամիտ՝ իրեն կամ այլ անձի, կամ, պատերազմական հանցագործությունների դեպքում, իր կամ այլ անձի կենդանի մնալու համար հատուկ կարևորության ունեցվածքը կամ ռազմական բնույթի խնդիրների կատարման համար հատուկ կարևորության ունեցվածքն ուժի անխուսափելի և անօրինական գործադրությունից պաշտպանելու նպատակով՝ կիրառելով իրեն կամ պաշտպանվող այլ անձի կամ ունեցվածքին սպառնացող վտանգի աստիճանին համարժեք միջոցներ: Այն հանգամանքը, որ անձը մասնակցել է ուժերի կողմից իրականացված պաշտպանական գործողությունների, ինքնին քրեական պատասխանատվությունից սույն ենթակետի համաձայն ազատելու հիմք չի հանդիսանում,

դ) այդ արարքը, որը ենթադրաբար Դատարանին ընդդատյա հանցագործություն է, հանդիսանում է հարկադրված հակազդեցություն՝ այդ անձի կամ այլ անձի անխուսափելի մահվան կամ նրանց անխուսափելի մարմնական վնասվածք պատճառելու, կամ նման վնասվածքի պատճառումը շարունակելու սպառնալիքին, և այդ անձը ձեռնարկում է այդ սպառնալիքի կանխելուն ուղղված անհրաժեշտ ու խելամիտ գործողություններ, պայմանով, որ նա մտադրություն չունի պատճառելու ավելի մեծ վնաս, քան այն, ինչը ջանում էր կանխել: Նման սպառնալիք կարող է՝

ի) դրսերվել այլ անձանց կողմից, կամ՝

ii) առաջանալ այդ անձից անկախ այլ հանգամանքների բերումով:

2. Դատարանն է որոշում իր կողմից քննվող գործի վերաբերյալ սույն Կանոնադրությամբ նախատեսված քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերի կիրառման հարցը:

3. Դատաքննության ժամանակ Դատարանը, կարող է քրեական պատասխանատվությունից ազատելու համար դիտարկել 1-ին կետում նշված հիմքերից տարբեր որևէ այլ հիմք, եթե այդ հիմքը բխում է 21-րդ հոդվածի համաձայն կիրառվող իրավունքից: Նման հիմքի դիտարկմանը վերաբերող ընթացակարգերը պետք է նախատեսվեն Ընթացակարգի և ապացուցման կանոններով:

Հոդված 32 **Փաստի սխալը կամ իրավունքի սխալը**

1. Փաստի սխալը քրեական պատասխանատվությունից ազատելու հիմք է հանդիսանում, եթե միայն այն բացառում է տվյալ հանցագործության անհրաժեշտ սուբյեկտիվ կողմը:

2. Իրավունքի սխալն այն առումով, թե վարքագծի տվյալ տեսակն արդյոք Դատարանին ընդդատյա հանցագործություն է, չի կարող քրեական պատասխանատվությունից ազատելու հիմք հանդիսանալ: Սակայն, իրավունքի սխալը կարող է քրեական պատասխանատվությունից ազատելու հիմք հանդիսանալ, եթե այն բացառում է տվյալ հանցագործության անհրաժեշտ սուբյեկտիվ կողմը, կամ 33-րդ հոդվածով նախատեսված կարգով:

Հոդված 33 **Պետի հրամանները և օրենքի պահանջները**

1. Այն փաստը, որ Դատարանին ընդդատյա հանցագործությունն անձը կատարել է կառավարության կամ պետի՝ գինվորական կամ քաղաքացիական, հրամանով, այդ անձին չի ազատում քրեական պատասխանատվությունից, բացառությամբ այն դեպքերի, եթե-

ա) անձն իրավաբանորեն պարտավոր է եղել կատարելու այդ կառավարության կամ պետի հրամանները,

բ) անձը չի իմացել, որ հրամանն անօրինական է, և

գ) հրամանի անօրինականությունն ակնհայտ չէր:

2. Սույն հոդվածի նպատակների համար ցեղասպանություն կամ մարդկության դեմ ուղղված հանցագործություններ կատարելու մասին հրամանները հանդիսանում են ակնհայտ անօրինական:

ԲԱԺԻՆ 4. ԴԱՏԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Հոդված 34 **Դատարանի մարմինները**

Դատարանը կազմված է հետևյալ մարմիններից.

ա) Նախագահություն,

բ) Վերաքննիչ բաժանմունք, Դատական բաժանմունք, Մինչդատական վարույթի բաժանմունք,

գ) դատախազի գրասենյակ,

դ) քարտուղարություն:

Հոդված 35

Դատավորների գործառույթների կատարումը

1. Բոլոր դատավորներն ընտրվում են իբրև Դատարանի՝ մշտական հիմունքներով իրենց գործառույթներն իրականացնող անդամներ և այդ հիմունքներով գործառույթներն իրականացնում են իրենց լիազորության ժամկետի սկզբից:

2. Նախագահության կազմի մեջ մտնող դատավորներն իրենց գործառույթները մշտական հիմունքներով իրականացնում են իրենց ընտրվելու պահից սկսած:

3. Դատարանի աշխատանքի ծավալը հաշվի առնելով և Դատարանի անդամների հետ խորհրդակցելով՝ Նախագահությունը կարող է ժամանակ առ ժամանակ որոշում կայացնել թե որքանով է մյուս դատավորներից պահանջվում իրենց գործառույթներն իրականացնել մշտական հիմունքներով: Նման ցանկացած որոշում չի կարող վճասել 40-րդ հոդվածի դրույթներին:

4. Իրենց գործառույթները ոչ մշտական հիմունքներով իրականացնող դատավորների ֆինանսական ապահովության հարցերը կարգավորվում են 49-րդ հոդվածի համաձայն:

Հոդված 36

Դատավորներին ներկայացվող պահանջները, դատավորների թեկնածության առաջադրումը և ընտրությունը

1. Հաշվի առնելով 2-րդ կետի դրույթները՝ Դատարանը կազմված է 18 դատավորից:

2. ա) Նախագահությունը, գործելով՝ Դատարանի անունից, կարող է առաջարկություն ներկայացնել 1-ին կետով նախատեսված դատավորների թիվն ավելացնելու վերաբերյալ՝ նշելով դրա անհրաժեշտության պատճառները: Զարտուղարը յուրաքանչյուր նման առաջարկի մասին անհապաղ ծանուցում է սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող բոլոր պետություններին,

բ) ցանկացած նման առաջարկ այնուհետև ենթակա է քննարկման սույն Կանոնադրության Կողմեր հանդիսացող պետությունների Ասամբլեայի՝ 112-րդ հոդվածի համաձայն իրավիրվող նիստում: Առաջարկն ընդունված է համարվում, եթե նիստում այն արժանանում է սույն Կանոնադրության Կողմեր հանդիսացող պետությունների Ասամբլեայի անդամների երկու երրորդի հավանությանը, և ուժի մեջ է մտնում Ասամբլեայի որոշմամբ սահմանած ժամկետում,

գ) ի) դատավորների թվի ավելացման վերաբերյալ առաջարկի՝ (բ) ենթակետի համաձայն ընդունվելուց հետո սույն Կանոնադրության Կողմեր հանդիսացող պետությունների Ասամբլեայի հաջորդ նիստում տեղի է ունենում լրացնուցիչ դատավորների ընտրություն՝ սույն հոդվածի 3-ից 8-րդ կետերին և 37-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան,

ii) դատավորների թվի ավելացման մասին առաջարկությունը (բ) և «զ» (i) ենթակետերին համապատասխան ընդունելուց և իրականացնելուց հետո Նախագահությունն կարող է ցանկացած ժամանակ, եթե Դատարանի աշխատանքի ծավալով արդարացվում է դա, առաջարկել դատավորների թվի նվազեցում՝ պայմանով, որ դատավորների թիվը չնվազելի 1-ին կետով նախատեսվածից: Նման առաջարկությունը քննարկվում է (ա) և (բ) ենթակետերով սահմանված ընթացակարգին համապատասխան: Նման առաջարկի ընդունման դեպքում դատավորների թիվն աստիճանաբար նվազեցվում է գործող դատավորների լիազորության ժամկետը լրանալուն զուգընթաց՝ մինչև անհրաժեշտ թվին հասնելը:

3. а) Դատավորներն ընտրվում են բարոյական բարձր հատկանիշների տեր, անկողմնակալ և ազմիկ անձանցից, ովքեր բավարարում են իրենց համապատասխան պետություններում բարձրագույն դատական պաշտոններում նշանակվելու համար ներկայացվող պահանջները,

բ) Դատարանում ընտրվելու համար առաջարդովով յուրաքանչյուր թեկնածու պետք է՝

ի) ունենա ճանաչված հեղինակություն քրեական և դատավարական իրավունքի ոլորտներում և դատավորի, դատախազի, փաստաբանի կամ քրեական դատավարության ասպարեզում այլ նման աշխատանքի անհրաժեշտ փորձ, կամ

ii) ունենա ճանաչված հեղինակություն միջազգային իրավունքի համապատասխան ոլորտներում, ինչպիսին են միջազգային մարդասիրական իրավունքը և մարդու իրավունքները, ինչպես նաև Դատարանի դատական գործունեության առնչվող մասնագիտական իրավաբանական գործունեության մեծ փորձ,

գ) Դատարանում ընտրվելու համար յուրաքանչյուր թեկնածու պետք է կատարելապես և սահուն տիրապետի Դատարանի աշխատանքային լեզուներից առնվազն մեկին:

4. а) Դատարանում ընտրվելու համար թեկնածուներ կարող են առաջարկել սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող յուրաքանչյուր պետություն, կամ

ի) տվյալ պետությունում բարձրագույն դատական պաշտոններում նշանակվելու համար թեկնածուների առաջադրման ընթացակարգին համապատասխան, կամ

ii) Միջազգային դատարանի կազմում թեկնածուների առաջադրման համար Միջազգային Դատարանի Կանոնադրությամբ նախատեսված ընթացակարգին համապատասխան:

Թեկնածությունների առաջադրումն ուղեկցվում է հայտարարագրով, որում ամենայն մանրամասնությամբ նշվում է, թե թեկնածուի կողմից ինչպես պետք է կատարվեն 3-րդ կետով նախատեսվող պահանջները:

բ) Սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող յուրաքանչյուր պետություն ընտրության ժամանակ կարող է առաջարկել մեկ թեկնածու, որի՝ այդ պետության քաղաքացի լինելը պարտադիր չէ, սակայն, ամեն դեպքում, նա պետք է լինի սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետության քաղաքացի:

գ) Սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունների Ասամբլեան, նապատակահարմարության դեպքում, կարող է որոշել ստեղծելու թեկնածուների առաջադրման խորհրդակցական կոմիտե: Այդ դեպքում Կոմիտեի կազմը և մանդատը սահմանում են սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունների Ասամբլեայի կողմից:

5. Ընտրություններն անցկացնելու համար կազմում է թեկնածուների երկու ցուցակ՝ ցուցակ (Ա), որն ընդգրկում է 3-րդ կետի «բ» (i) ենթակետում նշված պահանջներին համապատասխանող թեկնածուների անունները, և

ցուցակ (Բ), որն ընդգրկում է 3-րդ կետի «բ» (ii) ենթակետում նշված պահանջներին բավարարող թեկնածուների անունները:

Երկու ցուցակների համար բավարար որակավորում ունեցող թեկնածուն կարող է իր ընտրությամբ որոշել, թե որ ցուցակում պետք է նշվի իր անունը: Դատարանի կազմի առաջին ընտրությունների ժամանակ (Ա) ցուցակից ընտրվում են առնվազն ինը, իսկ (Բ) ցուցակից՝ առնվազն իննօր դատավոր: Հետագա ընտրությունները կազմակերպվում են այնպես, որ Դատարանի կազմում պահպանվի երկու ցուցակներում նշված դատավորների համարժեք համամասնությունը:

6. а) Դատավորներն ընտրվում են 112-րդ հոդվածի համաձայն այդ նպատակով հրավիրված սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունների Ասամբլեայի նիստում, գաղտնի քվեարկությամբ: 7-րդ կետի դրույթների պահպանմամբ՝ Դատարանի

կազմում ընտրված են համարվում այն 18 թեկնածուները, որոնք ստացել են առավելագույն թվով ձայներ և քվեարկությանը ներկա ու քվեարկությանը մասմակցած առյուն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունների ձայների երկու երրորդի մեծամասնությունը:

բ) Եթե քվեարկության առաջին փուլում բավարար թվով դատավորներ չեն ընտրվում, (ա) ենթակետում սահմանված ընթացակարգերին համապատասխան անցկացվում են քվեարկության հաջորդ փուլեր՝ մինչև թափուր տեղերը լրացնելը:

7. Դատարանի կազմում չեն կարող լինել նույն պետության քաղաքացիներ հանդիսացող երկու դատավոր: Անձը, որը Դատարանին անդամակցելու հետ կապված, կարող է դիտվել որպես մեկից ավելի պետության քաղաքացի, համարվում է այն պետության քաղաքացին, որտեղ նա սովորաբար իրականացնում է իր քաղաքացիական և քաղաքական իրավունքները:

8. ա) Դատավորների ընտրության ժամանակ սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունները հաշվի են առնում Դատարանի կազմում՝

ի) աշխարհի իմանական իրավական համակարգերի ներկայացուցչության ապահովման անհրաժեշտությունը,

ii) աշխարհագրական արդարացի ներկայացուցչության ապահովման անհրաժեշտությունը, և

iii) իգական և արական սերի դատավորների արդարացի ներկայացուցչության ապահովման անհրաժեշտությունը:

բ) Սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունները հաշվի են առնում նաև Դատարանի կազմում հատուկ հարցերով իրավաբանական գործունեության փորձ ունեցող դատավորներ ընդգրկելու անհրաժեշտությունը, ներառյալ՝ կանաց կամ երեխաների նկատմամբ բռնությանը վերաբերող հարցերը, սակայն չսահմանափակվելով դրանով:

9. ա) Հաշվի առնելով (բ) ենթակետը, դատավորներն իրենց պաշտոնն զբաղեցնում են ինն տարի ժամկետով և, հաշվի առնելով (գ) ենթակետը և 37-րդ հոդվածի 2-րդ կետը, վերընտրվելու իրավունք չունեն:

բ) Սույնին ընտրությունների ժամանակ ընտրված դատավորներից վիճակահանությամբ զատված մեկ երրորդը դատավորի պաշտոնը զբաղեցնում է երեք տարի ժամկետով, վիճակահանությամբ զատված հաջորդ մեկ երրորդը՝ վեց տարի ժամկետով, իսկ մնացած դատավորները պաշտոնին մնում են ինը տարի ժամկետով:

գ) (բ) ենթակետին համապատասխան երեք տարի ժամկետով ընտրված դատավորն ունի լրիվ ժամկետով վերընտրվելու իրավունք:

10. Անկախ 9-րդ կետի դրույթներից՝ 39-րդ հոդվածի համաձայն Դատական կամ Վերաքննիչ պալատ նշանակված դատավորը շարունակում է իր պաշտոնում մնալ մինչև տվյալ պալատի կողմից սկսված դատաքննության կամ բողոքի քննության ավարտը:

Հոդված 37 Դատավորի թափուր տեղերը

1. Եթե դատավորի թափուր տեղ է բացվում, այն լրացնելու համար ընտրությունն անցկացվում է 36-րդ հոդվածին համապատասխան:

2. Թափուր տեղն լրացնելու համար ընտրված դատավորը պաշտոնն զբաղեցնում է մինչև իր նախորդի լիազորությունների ժամկետի լրանալը, և եթե այդ ժամկետը կազմում է երեք տարի կամ ավելի պակաս՝ կարող է 36-րդ հոդվածին համապատասխան վերընտրվել լրիվ ժամկետով:

Հոդված 38

Նախագահությունը

1. Նախագահը և առաջին ու երկրորդ փոխնախագահներն ընտրվում են դատավորների ձայների բացարձակ մեծամասնությամբ: Նրանք իրենց գործառույթներն իրականացնում են երեք տարի ժամկետով կամ մինչև իրենց՝ որպես դատավորի լիազորությունների համապատասխան ժամկետի լրանալը, եթե այդ ժամկետը լրանում է երեք տարուց շուտ: Նրանք կարող են վերընտրվել մեկ անգամ:

2. Եթե Նախագահը բացակայում է կամ նրան բացարկ է հայտնվել, Նախագահին փոխարինում է առաջին փոխնախագահը: Երկրորդ փոխնախագահն Նախագահին փոխարինում է, եթե և Նախագահը, և առաջին փոխնախագահը բացակայում են կամ նրանց բացարկ է հայտնվել:

3. Նախագահը առաջին ու երկրորդ փոխնախագահների հետ միասին կազմում են Նախագահություն, որը պատասխանատու է՝

ա) Դատարանի գործերի պատշաճ կառավարման համար, բացառությամբ Դատախազի գրասենյակի, և

բ) սույն Կանոնադրությանը համապատասխան նրան վերապահված այլ գործառույթների համար:

4. 3-րդ կետի (ա) ենթակետով նախատեսված իր պարտականությունները կատարելիս Նախագահությունը փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բոլոր հարցերով իր գործունեությունը համակարգում և համաձայնեցնում է Դատախազի հետ:

Հոդված 39 Պալատները

1. Դատավորների ընտրությունից հետո Դատարանը հնարավորինս արագ իր կազմում ձևավորում է 34-րդ հոդվածի (բ) կետում նշված բաժանմունքները: Վերաքննիչ բաժանմունքը կազմված է նախագահից և չորս այլ դատավորներից: Դատական բաժանմունքը՝ ոչ պակաս, քան վեց դատավորներից: Դատավորների նշանակումը բաժանմունքներում կատարվում է՝ հաշվի առնելով յուրաքանչյուր բաժանմունքի գործառույթների բնույթը, Դատարանում ընտրված դատավորների որակավորումն ու փորձը, այնպես, որպեսզի ամեն մի բաժանմունքում ապահովվի քրեական իրավունքի ու դատավարության և միջազգային իրավունքի մասնագետների համապատասխան համակցությունը:

Դատական և Սինդիկատական վարույթի բաժանմունքները առավելապես կազմվում են քրեական գործերով դատաքննություն վարելու փորձ ունեցող դատավորներից:

2. ա) Դատարանի դատական գործառույթները յուրաքանչյուր բաժանմունքում իրականացնում են պալատները,

բ) ի) Վերաքննիչ պալատը կազմված է Վերաքննիչ բաժանմունքի բոլոր դատավորներից,

ii) Դատական պալատի գործառույթներն իրականացնում են Դատական բաժանմունքի երեք դատավոր,

iii) Մինչդատական վարույթի պալատի գործառույթներն իրականացնում են կամ Մինչդատական վարույթի բաժանմունքի երեք դատավոր, կամ այդ բաժնի մեկ դատավոր՝ սույն Կանոնադրությանն ու Ընթացակարգի և ապացուցման կանոններին համապատասխան,

գ) սույն կետում ամրագրված որևէ դրույթ չի կարող արգելել միաժամանակ մեկից ավելի Դատական և Սինդիկատական վարույթի պալատների ստեղծման հնարավորությունը,

Եթե դա պահանջվում է՝ Դատարանի աշխատանքի ծավալի արդյունավետ կառավարման համար:

3. ա) Դատական և Սինդիկատական վարույթի բաժանմունքներում նշանակված դատավորներն իրենց գործառույթներն այդ բաժանմունքներում իրականացնում են երեք տարի ժամկետով, և այդ ժամկետը լրացնում դեպքում՝ մինչև ցանկացած գործի քննության ավարտը, որի լսումները համապատասխան բաժանմունքում արդեն սկսվել են:

բ) Վերաբննիշ բաժանմունքում նշանակված դատավորներն իրենց գործառույթներն այդ բաժնում իրականացնում են իրենց լիազորությունների ամքող ժամկետի ընթացքում:

4. Վերաբննիշ բաժանմունքում նշանակված դատավորներն իրենց գործառույթներն իրականացնում են միայն այդ բաժանմունքում: Սակայն, սույն հոդվածում ոչինչ չի բացառում Դատական բաժանմունքի դատավորների ժամանակավոր նշանակումը Մինչդատական վարույթի բաժանմունքում կամ՝ հակառակը, եթե Նախագահությունը գտնում է, որ դա պահանջվում է՝ Դատարանի աշխատանքի ծավալի արդյունավետ կառավարման համար, պայմանով, որ ոչ մի պարագայում նույն գործով մինչդատական վարույթի փուլին մասնակցած դատավորն իրավունք չունենա մասնակցելու այդ գործով լսումներին Դատական պալատում:

Հոդված 40 Դատավորների անկախությունը

1. Դատավորներն իրենց գործառույթներն իրականացնելիս անկախ են:

2. Դատավորները չեն զբաղվի այնպիսի գործունեությամբ, որը կարող է խոչընդոտել իրենց դատական գործառույթների կատարմանը, կամ որը կարող է կասկածի տակ դնել նրանց անկախությունը:

3. Այն դատավորները, որոնցից պահանջվում է իրենց գործառույթները մշտական հիմունքներով իրականացնել Դատարանի նատավայրում, չեն կարող զբաղվել մասնագիտական բնույթի այլ գործունեությամբ:

4. 2-րդ և 3-րդ կետերի կիրառման հետ կապված ցանկացած հարց որոշվում է դատավորների ծայների բացարձակ մեծամասնությամբ: Եթե որևէ նման հարց վերաբերում է այս կամ այն դատավորին, ապա այդ դատավորը որոշման ընդունմանը չի կարող մասնակցել:

Հոդված 41 Դատավորներին ազատելը և բացարկ հայտնելը

1. Նախագահությունը, դատավորի խնդրանքով, կարող է նրան ազատել սույն Կանոնադրությամբ նախատեսված գործառույթների կատարումից՝ Ընթացակարգի և ապացուցման կանոններին համապատասխան:

2. ա) Դատավորը չի մասնակցում այն գործի քննությանը, որի առնչությամբ այս կամ այն հիմքով կարող է ողջամիտ կասկածի տակ դրվել նրա անկողմնակալությունը: Սույն կետի համաձայն, դատավորը գործի քննությունից հեռացվում է, եթե նա, *inter alia*, նախկինում՝ որևէ կարգավիճակով՝ Դատարանում մասնակցել է տվյալ գործին, կամ տվյալ գործին առնչվող քրեական գործի՝ ազգային մակարդակով քննությանը՝ այն անձի մասնակցությամբ, որը գտնվում է քննության մեջ կամ ենթարկվում է դատական հետապնդման: Դատավորը գործի քննությունից հեռացվում է նաև այնպիսի այլ հիմքերով, որոնք կարող են նախատեսվել Ընթացակարգի և ապացուցման կանոններով:

բ) Դատախազը կամ այն անձը, որի նկատմամբ քննություն է իրականացվում կամ որը դատական կարգով հետապնդման է ենթարկվում, կարող է դատավորին բացարկ հայտնել սույն կետին համապատասխան:

գ) Դատավորին բացարկ հայտնելու վերաբերյալ ցանկացած հարց որոշվում է դատավորների ձայների բացարձակ մեծամասնությամբ: Դատավորին, որին բացարկ է հայտնվել, իրավունք է տրվում ներկայացնել իր նկատառումները տվյալ հարցի վերաբերյալ, սակայն նա որոշման կայացմանը չի մասնակցում:

Հոդված 42

Դատախազի գրասենյակը

1. Դատախազի գրասենյակը գործում է անկախ՝ իբրև Դատարանի առանձին մարմին: Այն պատասխանատու է Դատարանին ընդդատյա հանցագործությունների վերաբերյալ ներկայացվող իրավիճակները և ցանկացած հիմնավոր տեղեկատվություն ստանալու, դրանք ուսումնասիրելու և քննություն ու Դատարանում քրեական հետապնդում իրականացնելու համար: Գրասենյակի աշխատակիցը որևէ արտաքին աղբյուրից ցուցումներ չի ստանում կամ չի կատարում:

2. Գրասենյակը գլխավորում է դատախազը: Դատախազն օժտված է գրասենյակը, ներառյալ՝ անձնակազմը, շենքը և իր տնօրինության տակ գտնվող մյուս միջոցները դեկավարելու և կառավարելու բոլոր լիազորություններով: Դատախազին օգնում են դատախազի մեկ կամ ավելի տեղակալներ, որոնք իրավասու են իրականացնելու ցանկացած այնպիսի գործողություն, որը սույն Կանոնադրությանը համապատասխան պետք է կատարի դատախազը: Դատախազը և դատախազի տեղակալները պետք է լինեն տարրեր պետությունների քաղաքացիներ: Նրանք աշխատում են լրիվ գրադադության հիմքով:

3. Դատախազը և դատախազի տեղակալները բարձր բարոյականությամբ օժտված, բարձր որակավորումով և քրեական գործերով հետապնդման կամ դատաքննություն կատարելու բնագավառում գործնական մեծ փորձ ունեցող անձինք են: Նրանք պետք է կատարյալ տիրապետեն Դատարանի աշխատանքային լեզուներից առնվազն մեկին և ազատ խոսեն այդ լեզվով:

4. Դատախազն ընտրվում է սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունների Ասամբլեայի անդամների ձայների բացարձակ մեծամասնությամբ, գաղտնի քվեարկությամբ: Դատախազի տեղակալներն ընտրվում են նոյն կարգով՝ դատախազի ներկայացրած թեկնածուների ցուցակից: Դատախազի տեղակալի յուրաքանչյուր տեղի համար դատախազն առաջադրում է երեք թեկնածություն: Եթե նրանց ընտրության ժամանակ լիազորության ավելի կարճ ժամկետ չի սահմանվում, ապա դատախազն ու դատախազի տեղակալներն ընտրվում են ինը տարի ժամկետով և չեն կարող վերընտրվել:

5. Ոչ դատախազը, ոչ էլ դատախազի տեղակալները չեն գրադադություն այնպիսի գործունեությամբ, որը կարող է խանգարել նրանց դատախազական գործառույթների իրականացմանը կամ կասկածի տակ դնել նրանց անկախությունը: Նրանք մասնագիտական բնույթի այլ գործունեությամբ չեն գրադադություն:

6. Նախագահությունը կարող է դատախազին կամ դատախազի տեղակալին, իրենց խնդրանքով, ազատել այս կամ այն կոնկրետ գործին մասնակցելուց:

7. Ոչ դատախազը, ոչ էլ դատախազի տեղակալը չեն մասնակցում այնպիսի գործի, որի առնչությամբ նրանց անկողմնակալությունը կարող է ցանկացած հիմքով ողջամիտ կասկածի տակ դրվել: Սույն կետի համաձայն, նրանք գործի քննությունից հեռացվում են, եթե, inter alia, նախկինում որևէ կարգավիճակով Դատարանում մասնակցել են տվյալ գործին, կամ տվյալ գործին առնչվող քրեական գործի՝ ազգային մակարդակով քննությանը՝ այն անձի

մասնակցությամբ, որը գտնվում է քննության տակ կամ ենթարկվում է դատական հետապնդման:

8. Դատախազին կամ դատախազի տեղակալին բացարկ հայտնելու վերաբերյալ ցանկացած հարց լուծվում է Վերաբննիշ պալատի կողմից:

ա) Անձը, որի նկատմամբ քննություն է իրականացվում կամ որը դատական կարգով հետապնդման է ենթարկվում, կարող է ցանկացած պահի դատախազին կամ դատախազի տեղակալին բացարկ հայտնել՝ սույն հոդվածում ամրագրված հիմքերով,

բ) դատախազը կամ դատախազի տեղակալը, համապատասխանաբար, իրավունքունեն ներկայացնելու իրենց նկատառումները տվյալ հարցի վերաբերյալ:

9. Դատախազը նշանակում է հատուկ հարցերով իրավաբանական գործունեության փորձ ունեցող խորհրդատուների, ներառյալ սեքսուալ և սեռուային բռնության և երեխաների նկատմամբ բռնության հարցերը, սակայն չսահմանափակվելով դրանցով:

Հոդված 43 **Քարտուղարությունը**

1. Քարտուղարությունը պատասխանատու է Դատարանի ոչ դատական քնույթի գործունեության կառավարման և սպասարկման համար, առանց վճասելու Դատախազի՝ 42-րդ հոդվածին համապատասխան գործառույթներին և իրավասությանը :

2. Քարտուղարությունը գլխավորում է Քարտուղարը, որը Դատարանի վարչական գլխավոր պաշտոնատար անձն է: Քարտուղարն իր գործառույթներն իրականացնում է Դատարանի Նախագահի դեկավարության ներքո:

3. Քարտուղարը և Քարտուղարի տեղակալը պետք է օժտված լինեն բարձր բարոյականությամբ, ունենան բարձր որակավորում և կատարյալ տիրապետեն Դատարանի աշխատանքային լեզուներից առնվազն մեկին և ազատ խոսեն այդ լեզվով:

4. Դատավորները Քարտուղարին ընտրում են ձայների բացարձակ մեծամասնությամբ, գաղտնի քվեարկությամբ, հաշվի առնելով սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունների Ասամբլեայի ցանկացած առաջարկություն: Անհրաժեշտության դեպքում և Քարտուղարի առաջարկությամբ, դատավորները նոյն կարգով ընտրում են Քարտուղարի տեղակալ:

5. Քարտուղարն ընտրվում է հինգ տարի ժամկետով, կարող է վերընտրվել մեկ անգամ և աշխատել լրիվ գրադադարության հիմքով:

Քարտուղարի տեղակալն իր պաշտոնն զբաղեցնում է հինգ տարի կամ այնայսի կարճ ժամկետով, որը կարող է որոշվել դատավորների ձայների բացարձակ մեծամասնությամբ, և կարող է ընտրվել Քարտուղարի տեղակալի գործառույթներն ըստ անհրաժեշտության կատարելու համար հրավիրվելու հիմքով:

6. Քարտուղարը Քարտուղարության կառուցվածքում ստեղծում է տուժողներին և վկաններին օգնություն ցույց տվող ստորաբաժանում: Այդ ստորաբաժանումը, խորհրդակցելով Դատախազի գրասենյակի հետ, ապահովում է պաշտպանության և անվտանգության միջոցներ, խորհրդատվական և այլ համապատասխան օգնություն Դատարան ներկայացող վկանների, տուժողների, ինչպես նաև այն անձանց համար, որոնք ենթակա են վտանգի վկանների ցուցմունքների հետևանքով: Վերոհիշյալ ստորաբաժանման կազմում ընդգրկվում են աշխատակիցներ, որոնք ունեն վճարվածքների, ներառյալ սեքսուալ հանցագործությունների հետ կապված վճարվածքների հարցերով աշխատանքի փորձ:

Հոդված 44 **Աշխատակազմը**

1. Դատախազը և Քարտուղարն իրենց համապատասխան մարմիններում նշանակում են պահանջվող որակավորման աշխատակազմ: Դատախազի պարագայում դա ներառում է թե՛սիների նշանակումը:

2. Աշխատակազմ վարձելիս դատախազը և Քարտուղարն ապահովում են աշխատունակության, բանհմացության և ազնվության բարձր մակարդակ և առաջնորդվում են 36-րդ հոդվածի 8-րդ կետում շարադրված *mutatis mutandis* չափանիշներով:

3. Քարտուղարը, Նախագահության և դատախազի համաձայնությամբ, ներկայացնում է աշխատակազմի Կանոնակարգը, որում նախատեսվում են Դատարանի աշխատակազմի նշանակման, վարձատրության և դրա աշխատակիցների՝ պաշտոնից ազատվելու պայմանները: Աշխատակազմի Կանոնակարգը հաստատվում է սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունների Ասամբլեայի կողմից:

4. Դատարանը, բացառիկ դեպքերում, կարող է օգտագործել սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունների, միջառավարական կազմակերպությունների կամ ոչ կառավարական կազմակերպությունների կողմից անվճար հիմքով գործուղված մասնագետների ծառայությունը՝ ի օգնություն Դատարանի ցանկացած մարմնի աշխատանքին: Դատախազը կարող է նման ցանկացած առաջարկ ընդունել Դատախազի գրասենյակի անունից: Անվճար հիմունքով գործուղված անձնակազմն աշխատանքի է ընդունվում սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունների Ասամբլեայի կողմից սահմանված դեկավար ցուցումներին համապատասխան:

Հոդված 45 **Հանդիսավոր երդումը**

Սինչև սույն Կանոնադրությանը համապատասխան պաշտոնն ստանձնելը՝ դատավորները, դատախազը, դատախազի տեղակալները, Քարտուղարը և Քարտուղարի տեղակալը Դատարանի բաց նիստում հանդիսավոր երդվում են իրենց համապատասխան գործառույթները կատարել անկողմնակալ և բարեխսդորեն:

Հոդված 46 **Պաշտոնանկությունը**

1. Դատավորը, դատախազը, դատախազի տեղակալը, Քարտուղարը կամ Քարտուղարի տեղակալը գրադերած պաշտոնից ազատվում են, եթե 2-րդ կետին համապատասխան դրա մասին ընդունվում է որոշում, երբ՝

ա) պարզվում է, որ տվյալ անձը կատարել է լուրջ զանցանք կամ սույն Կանոնադրության համաձայն ստանձնած իր պարտականությունների լուրջ խախտում, ինչպես դա նախատեսված է Ընթացակարգի և ապացուցման կանոններում, կամ՝

բ) տվյալ անձն ի վիճակ չէ իրականացնելու սույն Կանոնադրությամբ պահանջվող իր գործառույթները:

2. 1-ին կետին համապատասխան դատավորին, դատախազին կամ դատախազի տեղակալին պաշտոնանկ անելու մասին որոշումը ընդունվում է սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունների Ասամբլեայի կողմից՝ գաղտնի քվեարկությամբ.

ա) դատավորի դեպքում՝ սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունների ձայների երկու երրորդով՝ մյուս դատավորների ձայների երկու երրորդով ընդունված առաջարկության հիման վրա,

բ) դատախազի դեպքում՝ սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունների ձայների բացարձակ մեծամասնությամբ,

գ) դատախազի տեղակալի դեպքում՝ սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունների ձայների բացարձակ մեծամասնությամբ՝ դատախազի առաջարկության հիման վրա:

3. Քարտուղարին և քարտուղարի տեղակալին պաշտոնանկ անելու վերաբերյալ որոշումը կայացվում է դատավորների ձայների բացարձակ մեծամասնությամբ:

4. Դատավորին, դատախազին, դատախազի տեղակալին, Քարտուղարին կամ Քարտուղարի տեղակալին, որոնց վարքագիծը կամ սույն Կանոնադրությամբ պահանջվող պաշտոնական գործառույթներն իրականացնելու կարողությունը վիճարկվում է սույն հոդվածի հիման վրա, ընձեռվում են բոլոր հնարավորությունները, որպեսզի Ընթացակարգի և ապացուցման կանոններին համապատասխան ներկայացնեն և ստանան ապացույցներ և ներկայացնեն իրենց նկատառումները: Այդ անձը տվյալ հարցի քննարկմանն այլ կերպ մասնակցել չի կարող:

Հոդված 47 Կարգապահական միջոցները

46-րդ հոդվածի 1-ին կետում նախատեսվածից նվազ ծանր զանցանք կատարած դատավորի, դատախազի, դատախազի տեղակալի, Քարտուղարի կամ Քարտուղարի տեղակալի նկատմամբ կիրառվում են կարգապահական միջոցներ՝ Ընթացակարգի և ապացուցման կանոններին համապատասխան:

Հոդված 48 Արտոնությունները և անձեռնմխելիությունը

1. Դատարանը սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող յուրաքանչյուր պետության տարածքում օգտվում է այնպիսի արտոնություններից և անձեռնմխելիությունից, որոնք անհրաժեշտ են իր նպատակների իրականացման համար:

2. Դատավորները, դատախազը, դատախազի տեղակալները և Քարտուղարը Դատարանի գործունեությանը մասնակցելու ընթացքում կամ նման գործունեության առնչությամբ օգտվում են նույն արտոնություններից և անձեռնմխելիությունից, ինչպիսիք տրամադրվում են դիվանագիտական ներկայացուցչությունների դեկավարներին: Իրենց պաշտոնից բխող գործողությունների, արտահայտած կամ գրած խոսքերի առնչությամբ դատավարական ցանկացած տեսակի անձեռնմխելիության տրամադրումը շարունակվում է նաև նրանց լիազորությունների ժամկետը լրանալուց հետո:

3. Քարտուղարի տեղակալը, դատախազի գրասենյակի և Քարտուղարության աշխատակիցներն իրենց գործառույթների իրականացման համար անհրաժեշտ արտոնություններից, անձեռնմխելիությունից և այլ հնարավորություններից օգտվում են Դատարանի արտոնությունների և անձեռնմխելիության մասին համաձայնագրին համապատասխան:

4. Պաշտպանի, փորձագետների, վկաների կամ ցանկացած այլ անձի համար, որոնց ներկայությունն անհրաժեշտ է Դատարանի նատավայրում, ապահովում է այնպիսի կարգավիճակ, ինչպիսին Դատարանի արտոնությունների և անձեռնմխելիության մասին

համաձայնագրին համապատասխան անհրաժեշտ է Դատարանի պատշաճ գործունեության համար:

5. Արտոնություններից և անձեռնմխելիությունից կարելի է գրկել.

ա) դատավորին կամ դատախազին՝ դատավորների բացարձակ մեծամասնությամբ,

բ) քարտուղարին՝ Նախագահության կողմից,

գ) դատախազի տեղակալին և դատախազի գրասենյակի աշխատակիցներին՝ դատախազի կողմից,

դ) քարտուղարի տեղակալին և Քարտուղարության աշխատակիցներին՝ քարտուղարի կողմից:

Հոդված 49

Աշխատավարձերը, նպաստները և ծախսերը

Դատավորները, դատախազը, դատախազի տեղակալները, քարտուղարը և քարտուղարի տեղակալն ստանում են այնպիսի աշխատավարձ, նպաստներ և ծախսերի հատուցում, ինչպիսին կարող է որոշվել սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունների Ասամբլեայի կողմից: Այդ աշխատավարձերի և նպաստների չափը չի կարող նվազեցվել վերոհիշյալ անձանց լիազորությունների կատարման ընթացքում:

Հոդված 50

Պաշտոնական և աշխատանքային լեզուները

1. Դատարանի պաշտոնական լեզուներն են՝ արաբերենը, չինարենը, անգլերենը, ֆրանսերենը, ռուսերենը և իսպաներենը: Դատարանի դատավճիռները և Դատարանի կողմից քննվող այլ հիմնական հարցերով որոշումները հրապարակվում են պաշտոնական լեզուներով: Ընթացակարգի և ապացուցման կանոններով սահմանված չափանիշներին համապատասխան՝ Նախագահությունը որոշում է, թե սույն կետի նպատակների համար որոնք կարող են համարվել հիմնական հարցերով որոշումներ:

2. Դատարանի աշխատանքային լեզուներն են անգլերենն ու ֆրանսերենը: Ընթացակարգի և ապացուցման կանոններով նախատեսվում են այն դեպքերը, երբ պաշտոնական մյուս լեզուները կարող են օգտագործվել իբրև աշխատանքային լեզուներ:

3. Դատաքննությանը մասնակից յուրաքանչյուր կողմի կամ դրան մասնակցելու իրավունք ունեցող որևէ պետության խնդրանքով Դատարանը բույլատրում է այդ կողմին կամ պետությանը, անգլերենից կամ ֆրանսերենից զատ, օգտագործել այլ լեզու, պայմանով, որ Դատարանի կարծիքով նման բույլտվությունը բավարար հիմնավոր է:

Հոդված 51

Ընթացակարգի և ապացուցման կանոնները

1. Ընթացակարգի և ապացուցման կանոններն ուժի մեջ են մտնում սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունների Ասամբլեայի անդամների ձայների երկու երրորդի մեծամասնությամբ ընդունվելուց հետո:

2. Ընթացակարգի և ապացուցման կանոններում փոփոխություններ կարող են առաջարկվել՝

- ա) սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող ցանկացած պետության կողմից,
բ) ձայների բացարձակ մեծամասնությամբ գործող դատավորների կողմից, կամ
գ) դատախազի կողմից:

Այդ փոփոխություններն ուժի մեջ են մտնում սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունների Ասամբլեայի անդամների ձայների երկու երրորդի մեծամասնությամբ ընդունվելուց հետո:

3. Ընթացակարգի և ապացուցման կանոնների ընդունումից հետո, այնպիսի անհետաձգելի դեպքերում, եթե Դատարանն առնչվում է Կանոններով չնախատեսված առանձին իրավիճակի հետ, դատավորները կարող են ձայների երկու երրորդի մեծամասնությամբ ընդունել ժամանակավոր կանոններ, որոնք կկիրառվեն այնքան ժամանակ, քանի դեռ սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունների Ասամբլեան իր հաջորդ հերթական կամ հատուկ նատաշրջանում դրանք չի հաստատի, ուղղի կամ մերժի:

4. Ընթացակարգի և ապացուցման կանոնները, դրանց փոփոխությունները և որևէ ժամանակավոր կանոնը պետք է համապատասխանեն սույն Կանոնադրությանը: Ընթացակարգի և ապացուցման կանոնների փոփոխությունները, ինչպես նաև ժամանակավոր կանոնները հետադարձ ուժով չեն կիրառվում ի վեհական այն անձի, որի նկատմամբ իրականացվում է քննություն կամ քրեական հետապնդում, կամ որը դատապարտվել է:

5. Կանոնադրության ու Ընթացակարգի և ապացուցման կանոնների միջև հակասության դեպքում գերակայում է Կանոնադրությունը:

Հոդված 52

Դատարանի կանոնակարգը

1. Սույն Կանոնադրությանն ու Ընթացակարգի և ապացուցման կանոններին համապատասխան դատավորները ձայների բացարձակ մեծամասնությամբ ընդունում են Դատարանի Կանոնակարգը, որն անհրաժեշտ է նրա ամենօրյա գործունեությունն ապահովելու համար:

2. Կանոնակարգը մշակելիս և դրանում ցանկացած փոփոխություն կատարելիս խորհրդակցում են Դատախազի և քարտուղարի հետ:

3. Կանոնակարգը և դրանում կատարված ցանկացած փոփոխություն ուժի մեջ են մտնում ընդունման պահից, եթե դատավորներն այլ որոշում չեն կայացնում: Ընդունումից անմիջապես հետո դրանք ներկայացվում են սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունների քննարկմանը: Եթե վեց ամսվա ընթացքում վերոհիշյալ պետությունների մեծամասնության կողմից առարկություններ չեն լինում, դրանք մնում են ուժի մեջ:

ԲԱԺԻՆ 5. ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ

Հոդված 53

Քննության նախաձեռնումը

1. Գնահատելով իրեն տրամադրված տեղեկատվությունը՝ դատախազը նախաձեռնում է քննություն, եթե միայն չի որոշում, որ չկան սույն Կանոնադրությանը համապատասխան գործողություններ կատարելու բավարար հիմքեր: Քննություն նախաձեռնելու վերաբերյալ որոշում ընդունելիս՝ դատախազը պարզում է.

ա) դատախազի տրամադրության տակ եղած տեղեկատվությունը ողջամիտ հիմք հանդիսանում է արդյոք Ենթադրելու, որ կատարվել է կամ կատարվում է Դատարանին ընդդատյա հանցագործություն,

բ) 17-րդ հոդվածի հիման վրա գործն արդյոք ընդունելի է կամ ընդունելի կիյնի և

գ) հանցագործության ծանրությունը և տուժողների շահերը հաշվի առնելով հանդերձ՝ ծանրակշիռ հիմքեր կամ արդյոք Ենթադրելու, որ քննությունը չի բխի արդարադատության շահերից:

Եթե դատախազը գտնում է, որ չկամ քննություն նախաձեռնելու ողջամիտ հիմքեր, և նրա որոշումը բացառապես հիմնվում է վերոհիշյալ (գ) Ենթակետի վրա, ապա այդ մասին նա տեղեկացնում է Սինդատական վարույթի պալատին:

2. Եթե քննության արդյունքում դատախազը եզրակացնում է, որ քրեական հետապնդում սկսելու համար բավարար հիմքեր չկան, որովհետո՝

ա) չկամ բավարար իրավական կամ փաստական հիմքեր 58-րդ հոդվածի համաձայն կալանավորման սանկցիա կամ Դատարան ներկայանալու համար ծանուցագիր հայցելու համար,

բ) գործը 17-րդ հոդվածի համաձայն ընդունելի չէ, կամ

գ) հաշվի առնելով բոլոր հանցամանքները, այդ թվում՝ հանցագործության ծանրությունը, տուժողների շահերը և Ենթադրյալ հանցագործի տարիքը կամ տկարությունը, ինչպես նաև նրա դերը Ենթադրյալ հանցագործության մեջ, քրեական հետապնդումը չի բխում արդարադատության շահերից, ապա դատախազն իր եզրակացության և դրա հիմքերի մասին տեղեկացնում է Սինդատական վարույթի պալատին և, 14-րդ հոդվածի համաձայն, իրավիճակը ներկայացրած պետությանը կամ 13-րդ հոդվածի (բ) կետով նախատեսված դեպքում Անվտանգության խորհրդին:

3. ա) 14-րդ հոդվածի համաձայն իրավիճակը ներկայացրած պետության կամ, 13-րդ հոդվածի (բ) կետով նախատեսված դեպքում, Անվտանգության խորհրդի խնդրանքով, Սինդատական վարույթի պալատը կարող է վերանայել դատախազի՝ քննություն չնախաձեռնելու և քրեական հետապնդում չիրականացնելու վերաբերյալ 1-ին և 2-րդ կետերի հիման վրա ընդունած որոշումը և կարող է դատախազին խնդրել՝ վերանայել իր որոշումը:

բ) Բացի դրանից, Սինդատական վարույթի պալատը կարող է իր նախաձեռնությամբ վերանայել դատախազի՝ քրեական հետապնդում չիրականացնելու վերաբերյալ որոշումը, եթե այն հիմնված է բացառապես 1-ին կետի (գ) կամ 2-րդ կետի (գ) Ենթակետերի դրույթների վրա: Նման դեպքում դատախազի որոշումը կգործի միայն Սինդատական վարույթի պալատի կողմից հաստատվելուց հետո:

4. Դատախազը կարող է ցանկացած ժամանակ, նոր ի հայտ եկած փաստերի կամ տեղեկատվության հիման վրա վերանայել քննություն կամ քրեական հետապնդում սկսելու մասին որոշումը:

Հոդված 54 Դատախազի պարտականությունները և լիազորությունները քննության ժամանակ

1. Դատախազը.

ա) Ծմբարտությունը պարզելու նպատակով ծավալում է քննություն՝ ընդգրկելով բոլոր փաստերն ու ապացույցները, գնահատելու համար՝ առկա է արդյոք սույն Կանոնադրությանը համապատասխան քրեական պատախանատվության հիմք, այդ ընթացքում հավասարապես քննության առնելով ինչպես մեղադրությունը, այնպես էլ անմեղությունը վկայող հանգամանքները,

թ) ձեռնարկում է պատշաճ միջոցներ՝ ապահովելու Դատարանին ընդդատյա հանցագործությունների արդյունավետ քննությունը և քրեական հետապնդումը, այդ ընթացքում հաշվի առնելով տուժողների և վկաների շահերն ու անձնական հանգամանքները, ներառյալ տարիքը, սեռը՝ ինչպես սահմանված է 7-րդ հոդվածի 3-րդ կետում, և առողջական վիճակը, ինչպես նաև հանցագործության բնույթը, մասնավորապես, սեքսուալ, սեռային բռնության կամ երեխաների նկատմամբ բռնության հետ կապված հանցագործությունների բնույթը, և

գ) լիովին հարգում է անձանց՝ սույն Կանոնադրությունից բխող իրավունքները:

2. Դատախազը կարող է որևէ պետության տարածքում քննություն իրականացնել.

ա) 9-րդ բաժնի դրույթներին համապատասխան, կամ

թ) Մինչդատական վարույթի պալատի կողմից՝ 57-րդ հոդվածի 3-րդ կետի (դ) ենթակետին համապատասխան տրված թույլտվությամբ:

3. Դատախազը կարող է.

ա) ապացույցներ հավաքել և ուսումնասիրել,

թ) քննության տակ գտնվող անձանցից, տուժողներից ու վկաներից պահանջել ներկայանալ և հարցարնել նրանց,

զ) համագործակցել կամ այլ կերպ փոխգործակցել ցանկացած պետության կամ միջկառավարական կազմակերպության հետ՝ իր իրավասության և/կամ մանդատին համապատասխան,

դ) կնքել սույն Կանոնադրությանը չհակասող այնպիսի համաձայնություններ կամ համաձայնագրեր, որոնք կարող են անհրաժեշտ լինել պետության, միջկառավարական կազմակերպության կամ անձի հետ համագործակցությունը հեշտացնելու համար,

ե) համաձայնվել՝ դատավարության ցանկացած փուլում չհրապարակելու այն փաստաթղթերը կամ տեղեկատվությունը, որոնք դատախազն ստացել է գաղտնիությունը պահպանելու պայմանով և միայն նոր ապացույցներ ստանալու նպատակով, եթե տեղեկատվություն տրամադրող անձն այդ մասին չի տալիս իր համաձայնությունը, և

զ) ձեռնարկել կամ խնդրել ձեռնարկելու անհրաժեշտ միջոցներ՝ տեղեկատվության գաղտնիությունը, ցանկացած անձի պաշտպանությունը կամ ապացույցների պահպանությունն ապահովելու նպատակով:

Հոդված 55

Անձանց իրավունքները քննության ընթացքում

1. Սույն Կանոնադրությանը համապատասխան իրականացվող քննության առնչությամբ՝

ա) անձին չպետք է հարկադրել ցուցմունք տալու իր դեմ կամ խոստովանվելու իր մեղքը,

թ) անձը չպետք է ենթարկվի ցանկացած տեսակի հարկադրի, ճնշման կամ սպառնալիքի, խոշտանգման կամ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի,

զ) եթե անձը հարցաքննվում է այն լեզվով, որը լավ չի հասկանում կամ որով լավ չի խոսում, նա պետք է օգտվի որակյալ բարգմանչի անվճար ծառայությունից և այնպիսի բարգմանություններից, որոնք անհրաժեշտ են արդարության պահանջները բավարարելու համար, և

դ) անձը չպետք է ենթարկվի կամայական ձերբակալման կամ կալանավորման և ազատազրկման, ոչ այլ կերպ, քան սույն Կանոնադրությամբ սահմանված հիմքերով և ընթացակարգերին համապատասխան:

2. Այն դեպքերում, եթե հիմքեր կան ենթադրելու, որ անձը կատարել է Դատարանին ընդդատյա հանցագործություն և շուտով պետք է հարցաքննվի Դատախազի կամ պետական իշխանության մարմինների կողմից՝ համաձայն սույն Կանոնադրության 9-րդ բաժնին համապատասխան ներկայացրած խնդրանքի, այդ անձն ունի նաև հետևյալ իրավունքները, որոնց մասին նա պետք է տեղեկացվի նախքան հարցաքննությունը.

ա) նախքան հարցաքննությունը տեղեկացվել, որ հիմքեր կան ենթադրելու, որ ինքը կատարել է Դատարանին ընդդատյա հանցագործություն,

բ) պահպանել լրություն, ընդ որում լրելը չպետք է հաշվի առնվի մեղավորության կամ անմեղության հարցը որոշելիս,

գ) իր ընտրությամբ օգտվել իրավաբանական օգնությունից կամ, եթե այդ անձը չի օգտվում իրավաբանական օգնությունից, ստանալ իր համար նշանակված իրավաբանական օգնությունը ցանկացած ժամանակ եթե այդ են պահանջում արդարադատության շահերը, և ստանալ իրավաբանական օգնություն անվճար, եթե տվյալ անձը չունի բավարար միջոցներ այդ օգնության դիմաց վճարելու համար,

դ) հարցաքննվել պաշտպանի ներկայությամբ, եթե անձը կամովին չի հրաժարվում պաշտպանի ծառայությունից օգտվելու իրավունքից:

Հոդված 56

Մինչդատական վարույթի պալատի դերը քննության եզակի հնարավորության կապակցությամբ

1. ա) Եթե Դատախազը գտնում է, որ քննության անցկացումը եզակի հնարավորություն է ընձեռում վկաներից այնպիսի ցուցմունքներ և հաղորդումներ ստանալու կամ այնպիսի ապացույցներ ուսումնասիրելու, հավաքելու կամ ստուգելու համար, որոնք հետագայում կարող են անմատչելի դատնալ դատաքննության նպատակներով օգտագործվելու առումով, Դատախազն այդ մասին տեղեկացնում է Մինչդատական վարույթի պալատին:

բ) Այդ դեպքում Մինչդատական վարույթի պալատը կարող է Դատախազի խնդրանքի հիման վրա ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ համարվել դատավարության արդյունավետությունն ու հետևողականությունը և, մասնավորապես, պաշտպանության իրավունքներն ապահովելու համար:

գ) Եթե Մինչդատական վարույթի պալատն այլ որոշում չի կայացնում, ապա Դատախազը համապատասխան տեղեկատվությունը տրամադրում է անձին, որը (ա) ենթակետում նշված քննության կապակցությամբ կալանավորվել է կամ դատական ծանուցագրով ներկայացել է Դատարան, որպեսզի համապատասխան գործով նրան լսեն:

2. 1-ին կետի (բ) ենթակետում նշված միջոցները կարող են ներառել.

ա) հանձնարարականներ կամ կարգադրություններ ընթացակարգերի վերաբերյալ, որոնցով պետք է դեկավարվել,

բ) գործի վարույթի արձանագրություններ կազմելու մասին ցուցում տալը,

գ) օգնություն ցույց տալու համար փորձագետ նշանակելը,

դ) բույլատրելը, որպեսզի կալանավորված կամ դատական ծանուցագրի հիման վրա Դատարան ներկայացած անձի պաշտպանը մասնակցի դատաքննությանը կամ, եթե կալանավորում դեռևս տեղի չի ունեցել, կամ կանշված անձը չի ներկայացել կամ պաշտպանը դեռևս չի որոշվել, դատավարությանը մասնակցելու և պաշտպանության շահերը ներկայացնելու համար այլ պաշտպան նշանակելը,

ե) իր անդամներից մեկին կամ, անհրաժեշտության դեպքում՝ Մինչդատական վարույթի կամ Դատական բաժինների մեկ այլ դատավորի հանձնարարելը՝ հսկողություն

իրականացնելու և հանձնարարականներ կամ կարգադրություններ տալու ապացույցների հավաքման և պահպանման և անձի հարցաքննության նկատմամբ,

զ) այնպիսի այլ գործողություններ կատարելը, որոնք կարող են անհրաժեշտ լինել ապացույցների հավաքելու կամ պահպանելու համար:

3. ա) Եթե Դատախազը սույն հոդվածին համապատասխան միջոցների ձեռնարկում չի պահանջում, իսկ Մինչդատական վարույթի պալատը գտնում է, որ իր կարծիքով դատաքննության ընթացքում պաշտպանության շահերի ապահովման համար էական նշանակություն ունեցող ապացույցների պահպանության նպատակով նման միջոցներն անհրաժեշտ են, խորհրդակցում է՝ Դատախազի հետ՝ պարզելու, թե նա նման միջոցներ ձեռնարկելու խնդրանքով չդիմելու համար ունի արդյոք բավարար հիմքեր: Եթե խորհրդակցության արդյունքում Մինչդատական վարույթի պալատը եզրակացնում է, որ Դատախազի կողմից նման միջոցներ ձեռնարկելու խնդրանքով չդիմելն արդարացված չէ, Մինչդատական վարույթի պալատը կարող է նման միջոցներ իրականացնել իր նախաձեռնությամբ:

բ) Մինչդատական վարույթի պալատի՝ սույն կետի համաձայն իր նախաձեռնությամբ գործելու որոշումը կարող է բողոքարկվել Դատախազի կողմից: Բողոքը քննության է առնվում անհապաղ:

4. Դատաքննության համար սույն հոդվածին համապատասխան պահպանված կամ հավաքված ապացույցների կամ դրանք պարունակող արձանագրությունների բույլատրելիությունը որոշվում է դատաքննության ընթացքում՝ 69-րդ հոդվածին համապատասխան, և դրանք ունենում են ապացուցողական այնպիսի արժեք, ինչպիսին կարող է որոշել Դատական պալատը:

Հոդված 57

Մինչդատական վարույթի պալատի գործառույթներն և լիազորությունները

1. Եթե սույն Կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ, ապա Մինչդատական վարույթի պալատն իր գործառույթներն իրականացնում է սույն հոդվածի դրույթներին համապատասխան:

2. ա) Մինչդատական վարույթի պալատի՝ 15-րդ, 18-րդ, 19-րդ հոդվածներին, 54-րդ հոդվածի 2-րդ կետին, 61-րդ հոդվածի 7-րդ կետին, 72-րդ հոդվածին համապատասխան կայացրած որոշումները կամ կարգադրություններն ընդունվում են պալատի դատավորների ձայների մեծամասնությամբ:

բ) Մնացած այլ դեպքերում Մինչդատական վարույթի պալատի դատավորը կարող է իրականացնել սույն Կանոնադրությամբ նախատեսված գործառույթները, եթե այլ բան նախատեսված չէ Ընթացակարգի և ապացուցման կանոններով կամ որոշված չէ Մինչդատական վարույթի պալատի դատավորների ձայների մեծամասնությամբ:

3. Սույն Կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներից զատ, Մինչդատական վարույթի պալատը կարող է՝

ա) դատախազի խնդրանքով տալ այնպիսի կարգադրություններ և սանկցիաներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել քննության անցկացման նպատակների համար,

բ) կալանավորված կամ 58-րդ հոդվածի համաձայն Դատարան ներկայանալու ժամանակով՝ ներկայացած անձի խնդրանքով արձակել այնպիսի կարգադրություններ, ներառյալ 56-րդ հոդվածում նշված միջոցները, կամ հայցել 9-րդ բաժնում նախատեսված այնպիսի համագործակցություն, որը կարող է անհրաժեշտ լինել օգնելու անձին՝ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար,

գ) անհրաժեշտության դեպքում ապահովել տուժողների և վկաների անձնական կյանքի պաշտպանությունն ու անձնումիւնիությունը, ապացույցների պահպանումը, այն անձանց

պաշտպանությունը, որոնք կալանավորվել են կամ ներկայացել են Դատարան ծանուցումով, և ազգային անվտանգությանն առնչվող տեղեկատվության պաշտպանությունը,

դ) բույլատրել դատախազին սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետության տարածքում իրականացնել հասուլ քննչական գործողություններ՝ առանց 9-րդ բաժնին համապատասխան այդ պետության կողմից համագործակցության համաձայնություն ստանալու, եթե, հնարավորինս հաշվի առնելով համապատասխան պետության կարծիքը՝ Մինչդատական վարույթի պալատը տվյալ դեպքի համար պարզել է, որ համագործակցության մասին խնդրանքն այդ պետությունն ակնհայտորեն ի վիճակի չի կատարել՝ 9-րդ բաժնին համապատասխան համագործակցության մասին խնդրանքը կատարելու համար իրավասու նրա որևէ նարմնի կամ դատական համակարգի որևէ օդակի բացակայության պատճառով,

ե) այն դեպքում, եթե 58-րդ հոդվածի համաձայն տրվում է կալանավորման սանկցիա կամ Դատարան ներկայանալու ծանուցագիր, և պատշաճ կերպով հաշվի առնելով ապացույցների ուժը, ինչպես նաև շահագրգիռ կողմերի իրավունքները, ինչպես նախատեսված է սույն Կանոնադրությունում ու Ընթացակարգի և ապացույցման կանոններում, 93-րդ հոդվածի 1-ին կետի (ժա) ենթակետին համապատասխան դիմել պետություններին՝ ստանալու համագործակցության համար նրանց համաձայնությունը, մասնավորապես և գլխավորապես տուժողների շահերից ելնելով՝ բոնագրավման նպատակով պաշտպանական միջոցների կիրառման համար:

Հոդված 58

Մինչդատական վարույթի պալատի կողմից կալանավորման սանկցիա կամ Դատարան ներկայանալու ծանուցագիր տալը

1. Քննությունն սկսելուց հետո ցանկացած ժամանակ Մինչդատական վարույթի պալատը, դատախազի դիմումի հիման վրա, տալիս է անձին կալանավորելու սանկցիա, եթե, քննության առնելով դիմումը և ապացույցները կամ դատախազի ներկայացրած այլ տեղեկատվություն, հանդիպել է, որ.

ա) ողջամիտ հիմքեր կան ենթադրելու, որ անձը կատարել է Դատարանին ընդդատյա հանցագործություն, և

բ) անձի կալանավորումն անհրաժեշտ է՝

ի) դատաքննությանը նրա ներկայությունն ապահովելու համար,

ii) այդ անձի կողմից քննության կամ դատաքննության համար խոչընդոտների կամ սպառնալիքների ստեղծումը կանխելու նպատակով, կամ

iii) համապատասխան դեպքերում՝ այդ անձի կողմից Դատարանին ընդդատյա տվյալ հանցագործության կամ դրա հետ կապված մեկ այլ, միևնույն հանգամանքներով զուգորդված հանցագործության կատարման շարունակումը կանխելու համար:

2. Դատախազի դիմումում նշվում են.

ա) անձի անունը և նրա ինքնությունը հաստատող ցանկացած այլ համապատասխան տեղեկատվություն,

բ) կոնկրետ տեղեկություններ Դատարանին ընդդատյա հանցագործությունների վերաբերյալ, որոնք ենթադրաբար կատարել է տվյալ անձը,

գ) այն փաստերի համառոտ շարադրանքը, որոնք ենթադրաբար կազմում են այդ հանցագործությունները,

դ) ապացույցների ամփոփագիր և ցանկացած այլ տեղեկատվություն, որոնք ողջամիտ հիմք են հանդիսանում ենթադրելու, որ տվյալ անձը կատարել է այդ հանցագործությունները, և

ե) այն պատճառը, ըստ որի դատախազն անհրաժեշտ է համարում տվյալ անձի կալանավորումը:

3. Կալանավորման սանկցիայում նշվում են.

ա) անձի անունը և նրա ինքնությունը հաստատող ցանկացած այլ համապատասխան տեղեկատվություն,

բ) Դատարանին ընդդատյա այն հանցագործությունները, որոնց կապակցությամբ տվյալ անձի կալանավորումն անհրաժեշտ է,

գ) այն փաստերի համառոտ շարադրանքը, որոնք ենթադրաբար կազմում են այդ հանցագործությունները:

4. Կալանավորման սանկցիան մնում է ուժի մեջ, քանի դեռ Դատարանն այլ բան չի կարգադրում:

5. Կալանավորման սանկցիայի հիման վրա Դատարանը կարող է պահանջել անձի նախնական կալանավորում կամ նրա կալանավորում և փոխանցում՝ համաձայն 9-րդ բաժնի:

6. Դատախազը կարող է խնդրանքով դիմել Սինդիատական վարույթի պալատին՝ ուղղումներ կատարելու կալանավորման սանկցիայում վերառակելով կամ լրացնելով դրանում նշված հանցագործությունները: Սինդիատական վարույթի պալատը կալանավորման սանկցիայում կատարում է համապատասխան ուղղումները, եթե հավաստիանում է, որ կան բավարար հիմքեր համարելու, որ տվյալ անձը կատարել է ենթադրյալ հանցագործությունը, և Դատարան ներկայանալու ծանուցագիրը բավարար միջոց է տվյալ անձի ներկայությունն ապահովելու համար. Պալատը տախս է Դատարան ներկայանալու ծանուցագիր՝ ազատությունը սահմանափակող պայմաններով կամ առանց այդ պայմանների (այլ, բան կալանավորում), եթե այդ նախատեսված է ազգային օրենսդրությամբ Դատարան ներկայացող անձի համար: Դատարան ներկայանալու ծանուցագիրի մեջ նշվում են.

7. Որպես կալանավորման սանկցիայի համար դիմելու այլընտրանք՝ դատախազը կարող է խնդրել Սինդիատական վարույթի պալատին տալ տվյալ անձի՝ Դատարան ներկայանալու ծանուցագիր: Եթե Սինդիատական վարույթի պալատը հավաստիանում է, որ կան բավարար հիմքեր համարելու, որ տվյալ անձը կատարել է ենթադրյալ հանցագործությունը, և Դատարան ներկայանալու ծանուցագիրը բավարար միջոց է տվյալ անձի ներկայությունն ապահովելու համար. Պալատը տախս է Դատարան ներկայանալու ծանուցագիր՝ ազատությունը սահմանափակող պայմաններով կամ առանց այդ պայմանների (այլ, բան կալանավորում), եթե այդ նախատեսված է ազգային օրենսդրությամբ Դատարան ներկայացող անձի համար: Դատարան ներկայանալու ծանուցագիրի մեջ նշվում են.

ա) անձի անունը և նրա ինքնությունը հաստատող ցանկացած այլ տեղեկատվություն,

բ) անձի ներկայանալու կոնկրետ ամսաթիվը,

գ) Դատարանին ընդդատյա այն հանցագործությունների կոնկրետ նշումը, որոնք ենթադրաբար կատարել է տվյալ անձը, և

դ) այն փաստերի համառոտ շարադրանքը, որոնք ենթադրաբար կազմում են այդ հանցագործությունը:

Դատարան ներկայանալու ծանուցումը հանձնվում է անմիջականորեն տվյալ անձին:

Հոդված 59

Կալանքի վերցնելու ընթացակարգերը կալանավորման պետությունում

1. Սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունը, որն ստացել է որևէ անձի նախնական կալանավորման կամ կալանավորման և Դատարանին փոխանցելու խնդրանք, անհապա միջոցներ է ձեռնարկում նշված անձին իր օրենսդրության և 9-րդ բաժնի դրույթներին համապատասխան կալանավորելու համար:

2. Կալանավորված անձն անհապա ներկայացվում է կալանավորման պետության իրավասու դատական մարմնին, որն այդ պետության օրենսդրությանը համապատասխան որոշում է, թե արդյոք՝

ա) կալանավորման սանկցիան տրված է այդ անձի վերաբերյալ,

բ) այդ անձը կալանավորվել է պատշաճ ընթացակարգով, և
գ) հարզվել են այդ անձի իրավունքները:

3. Կալանավորված անձն իրավունք ունի դիմելու կալանավորման պետության իրավասու մարմնին՝ մինչև Դատարանին փոխանցելու իրեն ժամանակավորապես ազատ արձակելու խնդրամքով:

4. Ցանկացած նման խնդրանքի վերաբերյալ որոշում կայացնելիս՝ կալանավորման պետության իրավասու մարմնը, հաշվի առնելով ենթադրվող հանցագործության ծանրության չափը, պարզում է, թե արդյոք առկա են արտակարգ և բացարիկ հանգամանքներ, որոնք կարդարացնեն ժամանակավոր ազատումը, և արդյոք գոյություն ունեն անհրաժեշտ երաշխիքներ՝ կալանավորման պետության կողմից տվյալ անձին Դատարանին փոխանցելու իր պարտականության կատարումն ապահովելու համար: Կալանավորման պետության իրավասու մարմնը չի կարող քննության առնել կալանավորման սանկցիայի՝ 58-րդ հոդվածի 1-ին կետի (ա) և (բ) ենթակետերին համապատասխան, պատշաճորեն տրված լինելու հարցը

5. Մինչդատական վարույթի պալատը տեղեկացվում է ժամանակավորապես ազատ արձակելու վերաբերյալ ցանկացած խնդրանքի մասին և հանձնարարականներ է տալիս կալանավորման պետության իրավասու մարմնին: Կալանավորման պետության իրավասու մարմնը, մինչև իր որոշումը կայացնելը, լիովին հաշվի է առնում նման հանձնարարականները, ներառյալ այդ անձի փախուստը կանխելու միջոցների վերաբերյալ ցանկացած հանձնարարական:

6. Եթե այդ անձը ժամանակավորապես ազատ է արձակվել, Մինչդատական վարույթի պալատը կարող է նման ժամանակավոր ազատման կարգավիճակի մասին պարբերաբար հարցումներ անել:

7. Անձին Դատարանին փոխանցելու մասին իր որոշումը կայացնելուց հետո, կալանավորման պետությունը հնարավորինս շուտ տվյալ անձին հասցնում է Դատարան:

Հոդված 60 Նախնական վարույթը Դատարանում

1. Անձին Դատարանին փոխանցելուց կամ անձի՝ կամավոր կամ Դատարան ներկայանալու ժամանակում կիման վրա Դատարան ներկայանալուց հետո Մինչդատական վարույթի պալատը հավաստիանում է, որ այդ անձը տեղեկացվել է այն հանցագործությունների մասին, որոնք ենթադրաբար կատարել են, և սույն Կանոնադրությամբ նախատեսված իր իրավունքների, ներառյալ՝ մինչև դատաքննությունն սկսելը կալանքից ժամանակավոր ազատվելու համար դիմելու իր իրավունքի մասին:

2. Անձը, որի նկատմամբ տրված է կալանավորման սանկցիա, կարող է դիմել կալանքից ժամանակավոր ազատվելու համար մինչև դատաքննությունն սկսվելը: Եթե Մինչդատական վարույթի պալատը հավաստիանում է, որ առկա են 58-րդ հոդվածի 1-ին կետում նշված պայմանները, այդ անձը շարունակում է մնալ կալանքի տակ: Եթե Մինչդատական վարույթի պալատը չի հավաստիանում դրանում, ապա տվյալ անձին ազատ է արձակում որոշակի պայմաններով կամ առանց որևէ պայմանի:

3. Մինչդատական վարույթի պալատը պարբերաբար վերանայում է անձին ազատ արձակելու կամ կալանքի տակ պահելու մասին իր որոշումը, և դա կարող է անել ցանկացած ժամանակ՝ դատախազի կամ տվյալ անձի խնդրանքով: Նման վերանայման արդյունքով Մինչդատական վարույթի պալատը կարող է փոխել կալանքի տակ պահելու, կալանքից ազատելու կամ կալանքից ազատելու պայմանների վերաբերյալ իր որոշումը, եթե համոզվել է, որ այդ են պահանջում փոփոխված հանգամանքները:

4. Մինչդատական վարույթի պալատն ապահովում է, որպեսզի մինչև դատաքննությունը դատախազի կողմից անհիմն ճգճգման պատճառով ոչ ոք չարդարացված ժամկետով կալանքի տակ չպահպի: Նման ճգճգման դեպքում Դատարանը քննության է առնում անձին որոշակի պայմաններով կամ առանց որևէ պայմանի կալանքից ազատելու մասին հարցը:

5. Անհրաժեշտության դեպքում Մինչդատական վարույթի պալատը կարող է կալանքից ազատված անձի ներկայությունն ապահովելու համար տալ կալանավորման սանկցիա:

Հոդված 61

Մեղադրանքների հաստատումը մինչև դատաքննությունը

1. Անձին Դատարանին փոխանցելուց կամ Դատարան նրա կամավոր ներկայանալուց հետո՝ ողջամիտ ժամկետում Մինչդատական վարույթի պալատը կազմակերպում է լսումներ համաձայն 2-րդ կետի դրույթների՝ այն մեղադրանքները հաստատելու կապակցությամբ, որոնց հիման վրա դատախազը մտադիր է հետամուտ լինել դատաքննության անցկացմանը: Լսումներն անցկացվում են դատախազի և մեղադրյալի, ինչպես նաև նրա պաշտպանի ներկայությամբ:

2. Հաստատելու համար այն մեղադրանքները, որոնց հիման վրա դատախազը հետամուտ է դատաքննությանը, Մինչդատական վարույթի պալատը կարող է դատախազի խնդրանքով կամ իր նախաձեռնությամբ լսումները կազմակերպել մեղադրյալի բացակայությամբ՝ այն դեպքերում, եթե՝

ա) մեղադրյալը հրաժարվել է լսումներին ներկա գտնվելու իր իրավունքից կամ

բ) մեղադրյալը բաքնվում է կամ հնարավոր չէ պարզել նրա գտնվելու վայրը, և նրա ներկայությունը Դատարանում ապահովելու, ինչպես նաև իր դեմ առաջադրված մեղադրանքների և դրանց հաստատման կապակցությամբ լսումները կազմակերպելու մասին նրան տեղեկացնելու համար ձեռնարկվել են բոլոր հնարավոր քայլերը:

Նշված դեպքում այդ անձին կարող է ներկայացնել պաշտպանը, եթե Մինչդատական վարույթի պալատը որոշի, որ դա բխում է արդարադատության շահերից:

3. Մինչև լսումները ողջամիտ ժամկետում այդ անձը՝

ա) ստանում է այն մեղադրանքները պարունակող փաստաթղթի պատճենը, որոնց հիման վրա դատախազը մտադիր է դատի տալ անձին, և

բ) տեղեկացվում է այն մասին, թե լսումների ժամանակ դատախազն ինչպիսի ապացույցներ է մտադիր օգտագործել:

Մինչդատական վարույթի պալատը կարող է կարգադրություն անել լսումների նպատակներով տեղեկատվության հրապարակման վերաբերյալ:

4. Մինչև լսումները դատախազը կարող է շարունակել քննությունը և կարող է փոփոխել կամ հանել ցանկացած մեղադրանք: Լսումներից առաջ մեղադրյալն ստանում է համապատասխան ծանուցում մեղադրանքների ցանկացած փոփոխության կամ դրանց հանման մասին: Մեղադրանքները հանելու դեպքում դատախազը Մինչդատական վարույթի պալատին տեղեկացնում է դրանք հանելու պատճառների մասին:

5. Լսումների ընթացքում դատախազը մեղադրանքի յուրաքանչյուր կետ պաշտպանում է այն բավարար ապացույցներով, որոնք ամուր հիմքեր են ստեղծում ենթադրելու, որ տվյալ անձը կատարել է այն հանցագործությունը, որի մեջ մեղադրվում է: Դատախազը կարող է հիմնվել փաստաթղթային ապացույցների կամ ապացույցների համառոտ շարադրանքի վրա և կարող է չկանչել այն վկաներին, որոնք, ինչպես սպասվում է, դատաքննության ընթացքում ցուցմունք են տպու:

6. Լսումների ժամանակ անձը կարող է.

ա) մեղադրանքների դեմ առարկություններ ներկայացնել,

բ) վիճարկել դատախազի ներկայացրած ապացույցները, և

գ) ներկայացնել ապացույցներ:

7. Մինչդատական վարույթի պալատը լսումների հիման վրա որոշում է, թե կան արդյոք բավարար ապացույցներ, որոնք ամուր հիմքեր են ստեղծում ենթադրելու, որ տվյալ անձը կատարել է այն հանցագործություններից յուրաքանչյուրը, որոնց մեջ նա մեղադրվում է: Իր որոշման վրա հիմնվելով՝ Մինչդատական վարույթի պալատը.

ա) հաստատում է այն մեղադրանքները, որոնց առնչությամբ գտնում է, որ կան բավարար ապացույցներ, և այդ անձին հանձնում է Դատական պալատին՝ հաստատված մեղադրանքների կապակցությամբ դատաքննություն կատարելու համար,

բ) մերժել այն մեղադրանքները հաստատելուց, որոնց կապակցությամբ գտնում է, որ չկան բավարար ապացույցներ,

գ) հետաձգում է լսումները և դատախազին խնդրում քննարկել՝

ի) կոնկրետ մեղադրանքի կապակցությամբ լրացուցիչ ապացույցներ ներկայացնելու կամ հետագա քննություն իրականացնելու հնարավորությունը, կամ

ii) մեղադրանքը փոխելու հնարավորությունը, քանի ներկայացված ապացույցները, ենթադրվում է, վկայում են Դատարանին ընդդատյա այլ հանցագործության կատարման փաստի մասին:

8. Եթե Մինչդատական վարույթի պալատը մերժում է մեղադրանքի հաստատումը, ապա դա չի կարող խոչընդոտել դատախազին՝ հետագայում կրկին դիմելու այդ մեղադրանքի հաստատման խնդրանքով, եթե նման խնդրանքը հիմնավորվում է լրացուցիչ ապացույցներով:

9. Մեղադրանքների հաստատումից հետո և մինչև դատաքննությունն սկսելը դատախազը կարող է Մինչդատական վարույթի պալատի թույլտվությամբ և մեղադրյալին ծանուցելուց հետո փոփոխել մեղադրանքները: Եթե դատախազը մտադիր է առաջադրել լրացուցիչ մեղադրանքներ կամ մեղադրանքները փոխարինել ավելի լուրջ մեղադրանքներով, ապա սույն հոդվածին համապատասխան այդ մեղադրանքները հաստատելու համար պետք է անցկացվեն լսումներ: Դատաքննության սկսվելուց հետո դատախազը Դատական պալատի թույլտվությամբ կարող է հանել մեղադրանքները:

10. Մինչդատական վարույթի պալատի կողմից չհաստատված ցանկացած մեղադրանքի կամ դատախազի կողմից հանված մեղադրանքի կապակցությամբ նախկինում տրված որևէ սանկցիայի գործողությունը դադարում է:

11. Մեղադրանքների՝ սույն հոդվածին համապատասխան հաստատումից հետո Նախագահությունը կազմավորում է Դատական պալատ, որը, հաշվի առնելով 9-րդ կետը և 64-րդ հոդվածի 4-րդ կետը, պատասխանատու է հետագա քննության իրականացման համար և կարող է իրականացնել Մինչդատական վարույթի պալատի ցանկացած գործառույթ, որը վերաբերում է նման քննությանը և կարող է իրականացվել դրա ընթացքում:

ԲԱԺԻՆ 6. ԴԱՏԱՔՆԱՌՅՈՒՆՈՒՅՆԸ

Հոդված 62 Դատաքննության վայրը

Եթե այլ որոշում չի ընդունվում, դատաքննության վայրը է հանդիսանում Դատարանի նստավայրը:

Հոդված 63 Դատաքննությունը մեղադրյալի ներկայությամբ

1. Անդադրյալը ներկա է լինում դատաքննությանը:

2. Եթե Դատարանում գտնվող մեղադրյալը շարունակում է խանգարել դատաքննության ընթացքին, ապա Դատական պալատը կարող է հեռացնել մեղադրյալին և նրան ընձեռում է ըննության ընթացքին հետևելու և գտնվելով դատական նիստերի դահլիճից դուրս պաշտպանին ցուցումներ տալու հնարավորություն, անհրաժեշտության դեպքում օգտագործելով հաղորդակցման տեխնիկական միջոցներ: Նշված միջոցառումները կիրառվում են միայն բացառիկ դեպքերում, եթե պարզվում է, որ ընդունելի մյուս միջոցառումները բավարար չեն, և միայն այնպիսի ժամանակահատվածի ընթացքում, որը կհամարվի խիստ անհրաժեշտ:

Հոդված 64

Դատական պալատի գործառույթներն ու լիազորությունները

1. Դատական պալատի՝ սույն հոդվածում նախատեսված գործառույթներն ու լիազորություններն իրականացվում են սույն Կանոնադրությանն և Ընթացակարգի և ապացուցման կանոններին համապատասխան:

2. Դատական պալատն ապահովում է, որպեսզի դատաքննությունը լինի անաշառ ու առանց ձգձգումների, անցկացվի հարգելով մեղադրյալի իրավունքները և պատշաճ կերպով պաշտպանելով տուժողներին ու վկաներին:

3. Սույն Կանոնադրությանը համապատասխան գործը քննության նշանակելուց հետո, գործի քննությունն իրականացնելու համար նշանակված Դատական պալատը.

ա) Խորհրդակցում է կողմերի հետ և ընդունում այնպիսի ընթացակարգեր, որոնք անհրաժեշտ են դատաքննության անաշառ և առանց ձգձգումների անցկացմանն օժանդակելու համար,

բ) որոշում է դատաքննության ընթացքում օգտագործվող լեզուն կամ լեզուները, և

գ) պահպանելով սույն Կանոնադրության համապատասխան այլ դրույթները, դատաքննությունից առաջ հրապարակում է նախկինում չհրապարակված փաստաթղթերը կամ տեղեկությունները, որպեսզի հնարավոր լինի պատշաճ կերպով պատրաստվել դատաքննությանը:

4. Դատական պալատը կարող է, եթե դա անհրաժեշտ է իր գործառույթների արդյունավետ և արդարացի կատարման համար, նախնական հարցերը հանձնել Մինչդատական վարույթի պալատին կամ, անհրաժեշտության դեպքում, Մինչդատական վարույթի բաժնի այլ դատավորի:

5. Կողմերին ծանուցելով՝ Դատական պալատը համապատասխան դեպքերում կարող է կարգադրել միացնելու կամ անջատելու մեջից ավելի մեղադրյալների դեմ առաջադրված մեղադրանքները:

6. Դատաքննությունից առաջ կամ դատաքննության ընթացքում իր գործառույթներն իրականացնելիս Դատական պալատը, անհրաժեշտության դեպքում.

ա) իրականացնում է Մինչդատական վարույթի պալատի՝ 61-րդ հոդվածի 11-րդ կետում նշված ցանկացած գործառույթ,

բ) վկաներին_պահանջում է ներկայանալ և ցուցմունքներ տալ և ներկայացնել փաստաթղթեր և այլ ապացույցներ, անհրաժեշտության դեպքում դրա համար դիմելով պետությունների օգնությանը, ինչպես նախատեսված է սույն Կանոնադրությունում,

գ) ապահովում է գաղտնի տեղեկատվության պահպանությունը,

դ) կարգադրություն է անում ներկայացնելու ապացույցներ՝ ի լրումն դատաքննությունից առաջ հավաքված կամ դատաքննության ընթացքում կողմերի ներկայացրած ապացույցների,

ե) ապահովում է մեղադրյալի, վկաների և տուժողների պաշտպանությունը, և

զ) որոշում է կայացնում ցանկացած այլ հարցերով:

7. Դատաքննությունը պետք է անցկացվի դռնբաց: Սակայն Դատական պալատը կարող է որոշել, որ հատուկ հաճախանքները պահանջում են, որպեսզի 68-րդ հոդվածի նպատակներով կամ որպես ապացույց ներկայացվող գաղտնի տեղեկատվության պաշտպանության համար որոշ նիստեր անցկացվեն դռնփակ:

8. a) Դատաքննության սկզբում Դատական պալատը մեղադրյալի համար ընթերցում է Մինչդատական վարույթի պալատի կողմից նախօրոք հաստատված մեղադրանքները: Դատական պալատը հավաստիանում է, որ մեղադրյալը հասկանում է մեղադրանքների էռությունը: Դատական պալատը մեղադրյալին հնարավորություն է ընձեռում 65-րդ հոդվածին համապատասխան ընդունել իր մեղքը կամ հայտարարություն անել իր անմեղության մասին:

բ) Դատաքննության ընթացքում նախագահող դատավորը կարող է ցուցումներ անել գործի քննության վերաբերյալ, ներառյալ՝ դրա արդար և անկողմնակալ անցկացումն ապահովելու համար: Հետևելով նախագահող դատավորի ցանկացած ցուցումի՝ կողմերը կարող են, սույն Կանոնադրության դրույթներին համապատասխան, ներկայացնել ապացույցներ:

9. Դատական պալատը *inter alia* իրավունք ունի կողմերից մեկի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ.

ա) որոշում կայացնելու ապացույցների քույլատրելիության կամ վերաբերելիության մասին, և

բ) ձեռնարկելու լսումների ընթացքում կարգ ու կանոնի պահպանությանն ուղղված բոլոր անհրաժեշտ միջոցները:

10. Դատական պալատն ապահովում է, որ քարտուղարը կազմի և պահպանի դատաքննության ընթացքը ճշտորեն արտացոլող ամբողջական արձանագրությունը:

Հոդված 65 Մեղքի ընդունման դեպքում գործող ընթացակարգերը

1. Եթե մեղադրյալը 64-րդ հոդվածի 8-րդ կետի «ա» ենթակետի համաձայն ընդունում է իր մեղքը, Դատական պալատը պարզում է, թե արդյոք՝

ա) մեղադրյալը գիտակցում է իրեն մեղավոր ճանաչելու բնույթն ու հետևանքները,

բ) մեղադրյալը մեղքն ընդունել է կամավոր՝ պաշտպանի հետ բավարար չափով խորհրդակցելուց հետո, և

գ) մեղքի ընդունումը հաստատվում է գործում առկա տվյալներով, որոնք շարադրված են՝

i) դատախազի առաջադրած և մեղադրյալի կողմից ընդունած մեղադրանքներում,

ii) դատախազի ներկայացրած ցանկացած նյութում, որն լրացնում է մեղադրանքը և որն ընդունում է մեղադրյալը, և

iii) ցանկացած այլ ապացույցում, ինչպիսիք են վկաների՝ դատախազի կամ մեղադրյալի կողմից ներկայացված ցուցմունքները:

2. Եթե Դատական պալատը հավաստիանում է, որ պահպանված են 1-ին կետում նշված պայմանները, ապա նա մեղքի ընդունումը, ներկայացված ցանկացած լրացուցիչ ապացույցի հետ մեկտեղ, դիտում է որպես բոլոր այն էական փաստերի հաստատում, որոնք անհրաժեշտ են ապացույցների այն հանցագործության կատարումը, որի կապակցությամբ մեղքն ընդունվել է, և կարող է մեղադրյալին դատապարտել այդ հանցագործության կատարման համար:

3. Եթե Դատական պալատը չի հավաստիանում, որ պահպանված են 1-ին կետում նշված պայմանները, ապա համարում է, որ մեղքի ընդունում տեղի չի ունեցել, և այդ դեպքում կարգադրում է շարունակել դատաքննությունը՝ սույն Կանոնադրությամբ նախատեսված դատաքննության սովորական ընթացակարգերին համապատասխան, և կարող է այդ գործը հանձնել այլ Դատական պալատի:

4. Եթե Դատական պալատը գտնում է, որ ելնելով արդարադատության շահերից, մասնավորապես, տուժողմերի, պահանջվում է գործին վերաբերող հանգամանքները ներկայացնել առավել ամբողջական, Դատական պալատը կարող է.

ա) դատախազին խնդրել ներկայացնելու լրացուցիչ ապացույցներ՝ ներառյալ վկաների ցուցմունքները, կամ

բ) կարգադրել շարունակելու դատաքննությունը՝ սույն Կանոնադրությամբ նախատեսված դատաքննության սովորական ընթացակարգերին համապատասխան, և այդ դեպքում համարում է, որ մեղքի ընդունում տեղի չի ունեցել և կարող է այդ գործը հանձնել այլ Դատական պալատի:

5. Մեղադրանքի փոփոխման, մեղքի ընդունման կամ նշանակվող պատժի վերաբերյալ դատախազի և պաշտպանի միջև տեղի ունեցող ցանկացած քննարկում չի կարող կաշկանդել Դատարանին:

Հոդված 66 Անմեղության կանխավարկածը

1. Յուրաքանչյուր որ համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունը կիրառվող օրենքին համապատասխան ապացուցված չէ Դատարանում:

2. Մեղադրյալի մեղավորության ապացուցումը դատախազի պարտավորությունն է:

3. Մեղադրյալին դատապարատելու համար Դատարանը պետք է հավաստիանա, որ մեղադրյալը մեղավոր է, և դա ողջամիտ հիմքերով կասկածի ենթակա չէ:

Հոդված 67 Մեղադրյալի իրավունքները

1. Ցանկացած մեղադրանքի կապակցությամբ մեղադրյալը, լիարժեք հավասարության հիմքով, սույն Կանոնադրության դրույթների համաձայն, ունի իր գործի իրապարակային, անկողմնակալ և արդար լսումների, ինչպես նաև հետևյալ նվազագույն երաշխիքների իրավունք.

ա) անհապաղ և մանրամասն տեղեկացվել մեղադրանքի ընույթի, պատճառների և բովանդակության մասին այն լեզվով, որը լիովին հասկանում և որով խոսում է,

բ) պաշտպանությունը նախապատրաստելու բավարար ժամանակ և հնարավորություններ և ընտրված պաշտպանի հետ ազատորեն առանձին (գաղտնի) հաղորդակցվել,

գ) դատվել առանց անհիմն ձգձգումների,

դ) ելնելով 63-րդ հոդվածի 2-րդ կետից՝ ներկա գտնվել դատաքննությանը և պաշտպանությունն իրականացնել անձամբ կամ իր ընտրած պաշտպանի միջոցով, պաշտպան չունենալու դեպքում տեղեկացվել իր այդ իրավունքի մասին և ցանկացած դեպքում, ելնելով արդարադատության շահերից, ունենալ Դատարանի կողմից նշանակված պաշտպան և նրա ծառայությունից օգտվել անվճար, եթե չունի դրա համար վճարելու բավարար միջոցներ,

ե) հարցաքննել կամ իրավունք ունենալ պահանջելու հարցաքննել իր դեմ ցուցմունք տվող վկաներին, ինչպես նաև դատարան կանչելու իր օգտին ցուցմունք տվող վկաներին և նրանց հարցաքննելու նույն պայմաններով, ինչ որ իր դեմ ցուցմունք տվող վկաներին: Մեղադրյալն իրավունք ունի նաև օգտագործել սույն Կանոնադրությամբ բույլատրելի պաշտպանական միջոցներ և ներկայացնել այլ ապացույցներ,

զ) օգտվել որակյալ բարգմանչի անվճար օգնությունից և ստանալ բարգմանություն, ինչն անհրաժեշտ է, որպեսզի դատաքննությունը բավարարի արդարության պահանջներն

այն դեպքերում, երբ դատաքննության ժամանակ օգտագործվում է այն լեզուն, որը մեղադրյալը չի հասկանում և խոսում կամ Դատարան մերկայացված փաստարդերը կազմված են այն լեզվով, որը չի հասկանում մեղադրյալը կամ չի խոսում,

է) չենթարկվել վկայություն տալու կամ մեղքը խոստովանելու հարկադրանքի և պահպանել լրություն, ընդ որում, լրության պահպանումը մեղավորության կամ անմեղության հարցի որոշման վրա չպետք է ազդի;

ը) առանց երդվելու՝ իր պաշտպանության համար հանդես գալ բանավոր կամ գրավոր հայտարարություններով, և

թ) ազատ լինել հակառակն ապացուցելու կամ հերքելու պարտավորությունից:

2. Ի լրումն սույն Կանոնադրության մեջ նախատեսված տեղեկատվության ցանկացած այլ հրապարակման, դատախազը, հնարավորինս արագ, պաշտպանությանն է ներկայացնում իր տրամադրության կամ իր վերահսկողության ներքո գտնվող ապացույցները, որոնք, նրա կարծիքով, վկայում են կամ պետք է վկայեն մեղադրյալի անմեղության կամ մեղքը թերևացնող հանգամանքների առկայության մասին, կամ կարող են ազդել մեղադրանքի ապացույցների հավաստիության վրա: Սույն կետի կիրառման հետ կապված ցանկացած կասկած լուծում է Դատարանը:

Հոդված 68

Տուժողների և վկաների պաշտպանությունը և նրանց մասնակցությունը դատաքննությանը

1. Դատարանն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում տուժողների և վկաների անվտանգությունը, ֆիզիկական և հոգեկան բնականոն վիճակը, արժանապատվությունը և անձնական լյանքի անձնունիշներությունը պաշտպանելու համար: Ընդ որում, Դատարանը հաշվի է առնում բոլոր համապատասխան գործոնները, ներառյալ՝ տարիքը, սեռը, ինչպես սահմանված է 7-րդ հոդվածի 3-րդ կետում, և առողջական վիճակը և հանցագործության բնույթը, մասնավորապես, բայց դրանով չահմանափակվելով՝ նաև այն հանգամանքը, որ հանցագործությունը ներառել է սեքսուալ կամ սեռային բռնություն կամ բռնություն երեխաների նկատմամբ: Դատախազը նման միջոցներ ձեռնարկում է հատկապես այդ հանցագործությունների կապակցությամբ քննություն անցկացնելիս և քրեական հետապնդում իրականացնելիս: Այդպիսի միջոցները չպետք է վնաս հասցնեն մեղադրյալի իրավունքներին կամ անհամատեղելի լինեն դրանց հետ, ինչպես նաև չպետք է վնասն անաշառ ու անկողմնակալ դատաքննության անցկացմանը:

2. Որպես 67-րդ հոդվածում ամրագրված դրնբաց դատաքննության սկզբունքի բացառություն՝ Դատարանի պալատները կարող են, տուժողների և վկաների և մեղադրյալի պաշտպանության նպատակով, դատաքննության ցանկացած հատված անցկացնել *in camera* կամ քոյլատրել ապացույցները ներկայացնել էլեկտրոնային կամ այլ հատուկ միջոցների օգնությամբ: Մասնավորապես նման միջոցները կիրառվում են այն դեպքում, երբ խոսքը վերաբերում է սեքսուալ բռնության գորին կամ երեխային, որը տուժող է կամ վկա, եթե Դատարանը, հաշվի առնելով գործի բռնության հանգամանքները, հատկապես, տուժողի և վկայի դիրքորոշումը, այլ բան չի որոշում:

3. Դատաքննության՝ Դատարանի կողմից նպատակահարմար համարվող փուլերում Դատարանը քոյլատրում է ներկայացնել ու քննել տուժողների տեսակետները ու մտահոգությունները, երբ շոշափվել են նրանց անձնական շահերը, սակայն այնպես, որպեսզի այդ չվնասի կամ չհակասի մեղադրյալի իրավունքներին և անաշառ ու արդարացի դատաքննության անցկացմանը: Դատարանի կողմից արդարացված համարվող դեպքերում, նման տեսակետներն ու մտահոգությունները կարող են, Ընթացակարգի և ապացույցման կանոններին համապատասխան, ներկայացնել տուժողների օրինական ներկայացուցիչները:

4. Տուժողներին և վկաներին օգնող ստորաբաժանումը կարող է առաջարկել դատախազին և Դատարանին համապատասխան պաշտպանական միջոցառումներ, անվտանգության ապահովման ընթացակարգեր, տրամադրել խորհրդատվություն և օգնություն, ինչպես նշված է 43-րդ հոդվածի 6-րդ կետում:

5. Եթե ապացույցների կամ տեղեկատվության՝ սույն Կանոնադրության համաձայն կատարվող հրապարակումը կարող է լրջորեն վտանգել վկայի կամ նրա ընտանիքի անվտանգությունը, դատախազը կարող է, դատաքննությանը նախորդող ցանկացած դատավարական գործորություն նպատակներից ելնելով, չհրապարակել նման ապացույցները կամ տեղեկատվությունը և փոխարենը ներկայացնել դրանց ամփոփ շարադրանքը: Նշված միջոցառումներն իրականացվում են այնպես, որպեսզի չվնասեն կամ չհակասեն մեղադրյալի իրավունքներին և արդարացի ու անաշառ դատաքննության անցկացմանը:

6. Պետությունը կարող է դիմել իր ծառայողների կամ ներկայացուցիչների և գաղտնի և զգայուն տեղեկատվության պաշտպանության համար անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու խնդրանքով:

Հոդված 69 Ապացույցները

1. Յուրաքանչյուր վկա, Ընթացակարգի և ապացուցման կանոններին համապատասխան, ցուցմունք տալուց առաջ պարտավորվում է տալ ճշմարիտ ցուցմունք:

2. Դատական նիստում վկան ցուցմունքը տալիս է անձանք, բացառությամբ 68-րդ հոդվածով կամ Ընթացակարգի և ապացուցման կանոններով նախատեսված դեպքերի: Դատարանը կարող է նաև վկային քույլատրել ցուցմունք տալու նիւ ուու (բանավոր) կամ գրավոր տեսա կամ առողիո տեխնիկական միջոցների կիրառմամբ, ինչպես նաև փաստաբեր կամ գրառումներ ներկայացնելով՝ ելնելով սույն Կանոնադրության դրույթներից ու Ընթացակարգի և ապացուցման կանոններին համապատասխան: Այդ միջոցառումները չպետք է վնասեն կամ հակասեն մեղադրյալի իրավունքներին:

3. Կողմերը գործին վերաբերող ապացույցները կարող են ներկայացնել 64-րդ հոդվածին համապատասխան: Դատարանն իրավասու է պահանջելու այն բոլոր ապացույցները, որոնք անհրաժեշտ են ճշմարտության բացահայտման համար:

4. Դատարանը, Ընթացակարգի և ապացուցման կանոններին համապատասխան կարող է որոշում կայացնել որևէ ապացույցի վերաբերելիության կամ քույլատրելիության մասին՝ հաշվի առնելով, inter alia, դրա ապացուցղական ուժը և վնասը, որը նման ապացույցը, կարող է պատճառել անաշառ դատաքննության անցկացմանը կամ վկայի ցուցմունքների անաշառ գնահատմանը:

5. Դատարանը հարգում և պահպանում է Ընթացակարգի և ապացուցման կանոններով նախատեսված գաղտնիությանն առնչվող արտոնությունները:

6. Դատարանը չի պահանջում հանրահայտ փաստերի ապացուցում, սակայն կարող է դատական կարգով դրանք ընդունելի ի գիտություն:

7. Սույն Կանոնադրության կամ մարդու միջազգայնորեն ճանաչված իրավունքների խախտումով ձեռք բերված ապացույցները չեն կարող օգտագործվել, եթե-

ա) խախտումը լուրջ կասկածի է ենթարկում ապացույցի հավաստիությունը, կամ

բ) ապացույցների օգտագործումն անհամատեղելի կլինի քննության բարեխիղճ անցկացման հետ և լրջորեն կվնասի քննությանը:

8. Պետության հավաքած ապացույցների վերաբերելիությունը կամ քույլատրելիությունը որոշելիս Դատարանն այդ պետության ազգային օրենսդրության կիրառման վերաբերյալ որոշում չի կայացնում:

Հոդված 70

Արդարադատության իրականացման դեմ ուղղված հանցագործությունները

1. Դատարանն օժտված է իրավասությամբ իր կողմից իրականացվող արդարադատության դեմ ուղղված հետևյալ դիտավորյալ հանցագործությունների նկատմամբ.

ա) 69-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն ճշմարիտ ցուցմունք տալու պարտավորություն ստանձնելուց հետո կեղծ ցուցմունք տալը,

բ) ակնհայտ կեղծ ապացույցներ ներկայացնելը,

գ) վկայի վրա հակահրավական ներգործությունը, վկայի ներկայությանը կամ նրա ցուցմունք տալուն արգելք կամ խոչընդոտ ստեղծելը, վկայի վրա ներգործությունը՝ ի հատուցում նրա կողմից ցուցմունք տալուն, կամ ապացույցների ոչնչացումը, վկաներին կաշողելը կամ ապացույցների հավաքմանը խոչընդոտելը,

դ) Դատարանի պաշտոնատար անձին իր պարտականությունները չկատարելուն կամ ոչ պատշաճորեն կատարելուն հարկադիր կամ համոզելու նպատակով արգելքներ ստեղծելը, ահարենկելը կամ նրա վրա անօրինական ներգործությունը,

ե) Դատարանի պաշտոնատար անձի վրա ներգործությունը՝ ի հատուցում այդ կամ այլ պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնական պարտականությունների կատարման,

զ) որպես Դատարանի պաշտոնատար անձ՝ կապված իր պաշտոնեական պարտականությունների հետ կաշառքի համար միջնորդելը կամ կաշառք ստանալը:

2. Սույն հոդվածում նշված հանցագործությունների նկատմամբ Դատարանի իրավագորության իրականացումը կարգավորող սկզբունքներն ու ընթացակարգերը և Ընթացակարգի և ապացուցման կանոններով սահմանված սկզբունքներն ու ընթացակարգերը պետք է լինեն նույնը: Սույն հոդվածով նախատեսված հանցագործությունների քննության կապակցությամբ Դատարանին միջազգային օժանդակություն ցույց տալու պայմանները կարգավորվում են հարցվող պետության ներպետական օրենսդրությամբ:

3. Որևէ անձի մեղավոր ճանաչելու մասին որոշում կայացնելու դեպքում Դատարանը կարող է ազատազրկման ձևով պատիժ նշանակել հիմք տարուց ոչ ավելի ժամկետով. կամ տուգանք՝ Ընթացակարգի և ապացուցման կանոններին համապատասխան, կամ երկուսը միաժամանակ:

4. ա) Սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետություն քննության անցկացման և դատաքննության իրականացման դեմ ուղղված հանցագործությունների համար պատիժներ նախատեսող իր քրեական օրենսդրությունը տարածում է արդարադատության իրականացման դեմ ուղղված այն հանցագործությունների նկատմամբ, որոնք նշված են սույն հոդվածում, կատարվել են իր տարածքում կամ իր քաղաքացիներից մեկի կողմից:

բ) Դատարանի խնդրանքով՝ սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունը, եթե հարմար է համարում, դատական կարգով հետապնդման համար գործը հանձնում է իր իրավասու մարմիններին: Այդ մարմինները հանգամանորեն քննության են առնելու նման գործերը և դրանց քննության արդյունավետ անցկացման նպատակով բավարար միջոցներ են տրամադրում:

Հոդված 71

Պատասխանատվություն Դատարանում անթույլատրելի վարքագծի համար

1. Դատարանը կարող է Դատարանում ներկա գտնվող անձանց անթույլատրելի վարքագծի, ներառյալ՝ քննությունը ճախողելու կամ Դատարանի ցուցումների կատարումից կանխամտածված հրաժարվելու համար այնպիսի վարչական միջոցներով (այլ քան ազատազրկում) պատճել, ինչպիսիք են՝ դատարանի դահլիճից ժամանակավորապես կամ մշտական հեռացնելը, տուգանքը կամ նմանատիպ այլ միջոցները, որոնք նախատեսված են Ընթացակարգի և ապացուցման կանոններով:

2. 1-ին կետում նշված միջոցների կիրառումը կարգավորող ընթացակարգերը սահմանվում են Ընթացակարգի և ապացուցման կանոններով:

Հոդված 72

Ազգային անվտանգության առնչվող տեղեկատվության պաշտպանությունը

1. Սույն հոդվածը կիրառվում է այն դեպքերում, երբ պետությանը պատկանող տեղեկատվության կամ փաստաթղթերի հրապարակումը, ըստ այդ պետության, կվճակի իր ազգային անվտանգության շահերին: Նման դեպքերի թվին են դասվում նրանք, որոնց վրա տարածվում են 56-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի, 61-րդ հոդվածի 3-րդ կետի, 64-րդ հոդվածի 3-րդ կետի, 67-րդ հոդվածի 2-րդ կետի, 68-րդ հոդվածի 6-րդ կետի, 87-րդ հոդվածի 6-րդ կետի և 93-րդ հոդվածի դրույթները, ինչպես նաև այն դեպքերը, որոնք առաջանում են դատաքննության ցանկացած այլ փուլում, որում կարող է նման հրապարակման հարց ծագել:

2. Սույն հոդվածը կիրառվում է նաև այն դեպքում, երբ անձը, որին դիմել են տեղեկատվություն կամ ապացույցներ ներկայացնելու խնդրանքով, մերժել է այդ խնդրանքը կամ տվյալ հարցը փոխանցել է պետությանը՝ այն պատճառաբանությամբ, թե հրապարակումը կվճակի պետության ազգային անվտանգության շահերին, և համապատասխան պետությունը հաստատում է, որ, իր կարծիքով, նման հրապարակումը կվճակի ազգային անվտանգության շահերին:

3. Սույն հոդվածում ամրագրված որևէ դրույթ չի կարող խոչընդոտել 54-րդ հոդվածի 3-րդ կետի (ե) և (զ) Ենթակետերում նշված գաղտնիության պահանջներին կամ 73-րդ հոդվածի կիրառմանը:

4. Եթե որևէ պետության հայտնի է դառնում, որ իր տեղեկատվությունը կամ փաստաթղթերը հրապարակվում են կամ, հավանաբար, կիրապարակվեն դատաքննության որևէ փուլում, և նա գտնում է, որ այդ հրապարակումը կվճակի իր ազգային անվտանգության շահերին, ապա նման պետությունն իրավունք ունի միջամտելու, որպեսզի այդ հարցի լուծումն իրականացվի սույն հոդվածին համապատասխան:

5. Եթե, որևէ պետության կարծիքով, տեղեկատվության հրապարակումը կվճակի իր ազգային անվտանգության շահերին, ապա այդ պետությունը՝ համագործակցելով դատախազի, պաշտպանության կողմից կամ Մինչդատական վարույթի պալատի կամ Դատական պալատի հետ, նայած հանգամանքներին, ձեռնարկում է այդ հարցը համագործակցության սկզբունքով լուծելու համար բոլոր ողջամիտ միջոցները: Նման միջոցները կարող են ներառել՝

ա) խնդրանքի փոփոխումը կամ ճշգրտումը,

բ) Դատարանի կողմից որոշման կայացումը տեղեկատվության կամ ապացույցների վերաբերելիության մասին, կամ այն մասին, թե կարող են արդյոք ապացույցները, չնայած գործին դրանց վերաբերելիությանը, ձեռք բերվել այլ աղբյուրից, քան հարցվող պետությունը,

զ) տեղեկատվության կամ ապացույցների ձեռքբերումն այլ աղբյուրից կամ այլ ձևով, կամ

դ) համաձայնություն օգնության տրամադրման պայմանների մասին, ներառյալ, այլոց թվում, ընդհանրացված կամ համառոտ տեղեկատվության տրամադրում, հրապարակման նկատմամբ սահմանափակումների նախատեսում, *in camera* կամ *ex parte* դատավարության

կիրառում կամ սույն Կանոնադրությամբ ու Ընթացակարգի և ապացուցման կանոններով բոլոր պաշտպանական այլ միջոցներ:

6. Եթե ձեռնարկվել են համագործակցության միջոցներով տվյալ հարցի կարգավորման բոլոր ողջամիտ քայլերը, և պետությունը գտնում է, որ գոյություն չունեն այնպիսի միջոցներ կամ պայմաններ, որոնք բույլ կտային տեղեկատվությունը կամ փաստարդերը ներկայացնել կամ հրապարակել առանց իր ազգային անվտանգության շահերին վճառ պատճառելու, ապա նա այդ մասին տեղեկացնում է դատախազին կամ Դատարանին՝ նշելով իր որոշման կոնկրետ դրդապատճառները, եթե նման դրդապատճառների ճշգրիտ մատնանշումն ինքնըստինքյան չի հանգեցնի այդ պետության ազգային անվատնգության շահերին վճասելուն:

7. Այնուհետև, եթե Դատարանը որոշում է, որ ապացույցները վերաբերում են գործին և անհրաժեշտ են մեղադրյալի մեղավորությունը կամ անմեղությունը հաստատելու համար, կարող է ձեռնարկել հետևյալ միջոցները.

ա) Եթե տեղեկատվության կամ փաստարդերի հրապարակումը հայցվում է 9-րդ բաժնում նախատեսված համագործակցության համար խնդրանքին համապատասխան կամ 2-րդ կետում նշված հանգամանքների կապակցությամբ, և պետությունը 93-րդ հոդվածի 4-րդ կետում նշված մերժման պատճառներ է ներկայացրել, ապա.

ի) Դատարանը կարող է, մինչև 7-րդ կետի «ա» ենթակետի (ii) կետում նշված որևէ եզրակացություն կայացնելը, պետության պատճառաբանությունները լսելու նպատակով հետագա խորհրդակցություններ անցկացնելու խնդրանը ներկայացնել, որը կարող է իրավիճակից ելնելով ներառել լսումներ *in camera* և *ex parte*,

ii) Եթե Դատարանը եզրակացնում է, որ 93-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված մերժման հիմք ստեղծելով, գործի հանգամանքներով, հարցվող պետությունը չի գործում սույն Կանոնադրությամբ նախատեսված իր պարտավորություններին համապատասխան, ապա կարող է 87-րդ հոդվածի 7-րդ կետին համապատասխան տվյալ հարցը փոխանցել՝ նշելով իր եզրակացության պատճառները, և

iii) Դատարանը կարող է նման եզրակացության հանգել մեղադրյալի գործի դատաքննության ընթացքում՝ այս կամ այն փաստի գոյության կամ բացակայության առնչությամբ, որը կարող է արդարացված լինել տվյալ հանգամանքներում, կամ

բ) մնացած բոլոր հանգամանքներում.

i) Դատարանը կարող է կարգադրություն անել հրապարակման մասին, կամ,

ii) Եթե Դատարանը հրապարակման մասին կարգադրություն չի ընդունել, նման եզրակացություն նա կարող է անել մեղադրյալի գործով դատաքննության ընթացքում՝ այս կամ այն փաստի գոյության կամ բացակայության առնչությամբ, որը կարող է արդարացված լինել տվյալ հանգամանքներում:

Հոդված 73 Երրորդ կողմի տեղեկատվությունը կամ փաստարդերը

Եթե Դատարանը սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությանը խնդրում է ներկայացնել նրա տրամադրության, տիրապետման կամ հսկողության ներքո գտնվող այնպիսի փաստարդությ կամ տեղեկատվություն, որն այդ պետությունը որևէ պետություն, միջկառավարական կազմակերպություն կամ միջազգային կազմակերպություն տրամադրել է գաղտնիության պայմանով, ապա սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող այդ պետությունը նման փաստարդի կամ տեղեկատվության հրապարակման համար պետք է ստանա այդ փաստարդությ կամ տեղեկատվությունը տրամադրողի համաձայնությունը: Եթե տրամադրողը սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունն է, ապա նա կամ համաձայնում է նման տեղեկատվության կամ փաստարդի հրապարակմանը, կամ

պարտավորվում է կարգավորել փաստաթղթի կամ տեղեկատվության հրապարակման հարցը Դատարանի հետ՝ ելեկով 72-րդ հոդվածի դրույթներից: Եթե տրամադրողը առյուն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունը չէ, և նա հրաժարվում է փաստաթղթի կամ տեղեկատվության հրապարակման համար համաձայնություն տալ, ապա հարցվող պետությունը Դատարանին տեղեկացնում է, որ վերը նշված տրամադրողի առջև գաղտնիության պահպանման վերաբերյալ նախկինում իր ստանձնած պարտավորության պատճառով չի կարող չէ տրամադրել այդ փաստաթուղթը կամ տեղեկատվությունը:

Հոդված 74 **Որոշման ընդունմանը ներկայացվող պահանջները**

1. Դատական պալատի բոլոր դատավորները ներկա են լինում դատաքննության յուրաքանչյուր փուլին և բոլոր քննարկումներին: Նախագահությունը կարող է առանձին դեպքերում, հաշվի առնելով առկա հնարավորությունները, նշանակել մեկ կամ ավելի պահեստային դատավորներ, որոնք ներկա կլինեն դատաքննության յուրաքանչյուր փուլին և կփոխարինեն Դատական պալատի անդամին, եթե վերջինս չկարողանա ներկա գտնվել:

2. Դատական պալատի որոշումը հիմնվում է նրա կողմից գործով ապացույցների և դատաքննության ողջ ընթացքի գնահատման վրա: Որոշումը չպետք է դուրս գա մեղադրանքներում և դրանցում կատարված ցանկացած փոփոխության մեջ շարադրված փաստերի և հանգամանքների շրջանակներից: Դատարանն իր որոշումը կարող է հիմնավորել իրեն ներկայացված և իր կողմից դատաքննության ընթացքում քննության առնված ապացույցներով միայն:

3. Դատավորները ձգտում են հասնել միաձայն որոշման, միաձայնության բացակայության դեպքում որոշումն ընդունվում է դատավորների ձայների մեծամասնությամբ:

4. Դատական պալատի խորհրդակցությունները գաղտնի են պահպանվում:

5. Որոշումն ընդունվում է գրավոր և պարունակում է ապացույցների և եզրակացությունների վերաբերյալ Դատական պալատի կողմից ստացված ամբողջական և պատճառաբանված շարադրանքը: Դատական պալատը կայացնում է մեկ որոշում: Միաձայնության բացակայության դեպքում Դատական պալատի որոշումը պարունակում է մեծամասնության և փոքրամասնության կարծիքները: Որոշումը կամ նրա ամփոփ տարբերակը հրապարակվում է դրույց նիստում:

Հոդված 75 **Տուժողների վճասի հատուցումը**

1. Դատարանը սահմանում է տուժողների կամ նրանց առնչվող վճասի հատուցման սկզբունքները, ներառյալ՝ ռեստիտուցիան, փոխհատուցումը և վերականգնումը: Այս հիմքով Դատարանը կարող է խնդրանքի հիման վրա կամ, բացառիկ դեպքերում, իր նախաձեռնությամբ, որոշել տուժողների կամ նրանց առնչվող վճասի, կորստի և վճասվածքի ծավալն ու չափը, և շարադրում է այն սկզբունքները, որոնց հիման վրա ինքը գործում է:

2. Դատարանը կարող է ընդունել անմիջականորեն դատապարտված անձին ուղղված կարգադրություն՝ սահմանելով տուժողների կամ նրանց առնչվող համապատասխան վճասի հատուցումն, ներառյալ՝ ռեստիտուցիան, փոխհատուցումը և վերականգնումը:

Համապատասխան դեպքերում Դատարանը կարող է կարգադրել, որպեսզի վճասի հատուցման կարգով գումարը վճարվի 79-րդ հոդվածով նախատեսված Նպատակային հիմնադրամի միջոցով:

3. Նախքան սույն հոդվածի համաձայն կարգադրություն ընդունելը՝ Դատարանը կարող է հրավիրել դատապարտված անձին, տուժողներին, այլ շահագրգիռ անձանց կամ

շահագրգիռ պետություններին՝ հաշվի առնելով նրանց կամ նրանց անունից ներկայացված նկատառումները:

4. Սույն հոդվածով նախատեսված իր լիազորություններն իրականացնելիս Դատարանը, իրեն ընդդատյա հանցագործության համար անձին մեղավոր ճանաչելուց հետո, կարող է որոշել՝ անհրաժեշտ է արդյոք ձեռնարկել 93-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված միջոցները՝ սույն հոդվածի համաձայն իր ընդունած կարգադրության կատարումն ապահովելու նպատակով:

5. Սույն Կանոնադրության Կողմ համաստացող պետությունը սույն հոդվածի համաձայն ընդունված որոշումը կատարում է այնպես, ինչպես եթե 109-րդ հոդվածի դրույթները կիրառելի լինեին սույն հոդվածի համար:

6. Սույն հոդվածում ամրագրված որևէ դրույթ չպետք է մեկնաբանվի ի վեհական կամ միջազգային իրավունքով տուժողներին վերապահված իրավունքների:

Հոդված 76 **Պատժի նշանակումը**

1. Այն դեպքում, եթե անձը մեղավոր է ճանաչվում, Դատական պալատը քննության է առնում համապատասխան պատժի նշանակման հարցը և հաշվի է առնում դատաքննության ընթացքում պատժի նշանակման առնչությամբ ներկայացված ապացույցներն ու միջնորդությունները:

2. Բացառությամբ այն դեպքերի, եթե կիրառվում է 65-րդ հոդվածը և մինչև դատաքննության ավարտը Դատական պալատը, իր նախաձեռնությամբ կարող է և Դատախազի կամ մեղադրյալի խնդրանքով՝ պարտավոր է Ընթացակարգի և ապացուցման կանոններին համապատասխան կազմակերպել հետազա լսումներ՝ պատժի նշանակմանն առնչվող լրացույցի ապացույցներն կամ նկատառումները քննության առնելու համար:

3. 2-րդ կետի կիրառման դեպքերում 75-րդ հոդվածի հիման վրա ներկայացված ցանկացած նկատառումները քննության են առնվում 2-րդ կետում նշված հետազա լսումների և, անհրաժեշտության դեպքում, ցանկացած լրացույցի լսումների ընթացքում:

4. Դատավճիռը հրապարակվում է դրույթ նիստում և եթե, հնարավոր է, մեղադրյալի ներկայությամբ:

ԲԱԺԻՆ 7 **ՊԱՏԺԱՍՄԻՉՈՑՆԵՐ**

Հոդված 77 **Կիրառելի պատժամիջոցներ**

1. Ելնելով 110-րդ հոդվածից՝ Դատարանը կարող է սույն Կանոնադրության 5-րդ հոդվածում նշված հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ կիրառել հետևյալ պատժամիջոցներից մեկը.

ա) ազատազրկում, որոշակի ժամկետով, որը չի կարող գերազանցել 30 տարին, կամ

բ) ցմահ ազատազրկում, եթե այն արդարացված է հանցագործության առանձնապես ծանր լինելու հանգանանքով և մեղավոր ճանաչված անձի անձնական հատկանիշներով:

2. Բացի ազատազրկումից՝ Դատարանը կարող է նշանակել նաև՝

ա) տուգանք՝ Ընթացակարգի և ապացուցման կանոններով նախատեսված չափանիշներին համապատասխան,

թ) այդ հանցագործության արդյունքում ուղղակիորեն կամ անուղղակիորեն ստացված եկամուտների, գույքի և ակտիվների բռնագրավում՝ առանց երրորդ կողմերի *bona fide* իրավունքներին վճառ պատճառելու:

Հոդված 78 Պատժի սահմանումը

1. Պատժի սահմանելիս Դատարանը, Ընթացակարգի և ապացուցման կանոններին համապատասխան, հաշվի է առնում այնպիսի գործոններ, ինչպես հանցագործության ժամանակունը և մեղավոր ճանաչված անձի անձնական հատկանիշները:

2. Ազատազրկման ձևով պատիժ նշանակելիս՝ Դատարանն ազատազրկման ժամկետի մեջ չի հաշվում է Դատարանի սանկցիային համապատասխան նախնական կալանքի տակ պահելու ժամկետը, եթե նման ժամկետ առկա է: Դատարանը կարող է հաշվի չառնել հանցագործության հիմքը կազմող արարքի կապակցությամբ ցանկացած ժամկետ՝ այլ կերպ անցած կալանքի տակ գտնվելու ընթացքում:

3. Եթե անձը դատապարտվում է մեկից ավելի հանցագործությունների համար, ապա Դատարանը նշանակում է պատիժ յուրաքանչյուր հանցագործության համար, և ընդհանուր պատիժ՝ նշելով ազատազրկման ողջ ժամկետը: Վերջինս չպետք է լինի ավելի պակաս, քան առանձին հանցագործության համար նշանակված ամենածանր պատժի ժամկետը, և չպետք է գերազանցի 30 տարի ազատազրկման ժամկետին կամ համաձայն 77-րդ հոդվածի 1-ին կետի «ք» ենթակետի՝ ցմահ ազատազրկման ժամկետին:

Հոդված 79 Նպատակային հիմնադրամ

1. Նպատակային հիմնադրամն ստեղծվում է սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունների Ասամբլեայի որոշմամբ՝ ի շահ Դատարանին ընդդատյա հանցագործություններից տուժածների և նրանց ընտանիքների:

2. Դատարանը կարող է կարգադրել, որպեսզի տուգանքների կամ բռնագրավումների արդյունքում ձեռք բերված դրամական միջոցներն և այլ գույքը հանձնվեն նպատակային հիմնադրամ:

3. Նպատակային հիմնադրամը դեկավարվում է սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունների Ասամբլեայի կողմից սահմանած չափանիշներով:

Հոդված 80 Ազգային մակարդակով պատիժների և ներպետական օրենսդրության կիրառմանը չխոչընդոտելը

Սույն բաժնում նշված որևէ դրույթ չի կարող խոչընդոտել պետությունների կողմից իրենց ներպետական օրենսդրությամբ նախատեսված պատիժների կամ այն օրենքների կիրառմանը, որոնք չեն նախատեսում սույն բաժնում սահմանված պատիժները:

ԲԱԺԻՆ 8 ԲՈՂՈՁԱՐԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ

Հոդված 81 Արդարացման կամ մեղավոր ճանաչելու մասին որոշման կամ դատավճռի բողոքարկումը

1. 74-րդ հոդվածի համաձայն ընդունված որոշումը կարող է բողոքարկվել Ընթացակարգի և ապացուցման կանոններին համապատասխան՝ հետևյալ կարգով.

ա) դատախազը կարող է բողոք ներկայացնել հետևյալ ցանկացած հիմքով՝

i) դատավարական սխալ,

ii) փաստի սխալ, կամ

iii) իրավունքի սխալ,

բ) դատապարտյալ կամ նրա անունից՝ դատախազը կարող է բողոք ներկայացնել հետևյալ ցանկացած հիմքով՝

i) դատավարական սխալ,

ii) փաստի սխալ,

iii) իրավունքի սխալ, կամ

iv) ցանկացած այլ հիմքով, որն ազդում է դատաքննության կամ որոշման անաշոռության կամ դրանց նկատմամբ վստահության վրա:

2. ա) Դատավճիռը, Ընթացակարգի և ապացուցման կանոններին համապատասխան, կարող է բողոքարկվել դատախազի կամ մեղավոր ճանաչված անձի կողմից այն հիմքով, որ կայացված դատավճիռը համարժեք չէ կատարված հանցագործությանը,

բ) եթե Դատարանը դատավճիռ դեմ բերված բողոքի քննության արդյունքում գտնում է, որ հիմքեր կան մեղավոր ճանաչելու մասին որոշումը ամբողջովին կամ մասնակիորեն բեկանելու համար, կարող է դատախազին և դատապարտյալին առաջարկել ներկայացնելու սույն հոդվածի 1-ին կետի «ա» և «բ» ենթակետերով նախատեսված հիմքեր և կարող է մեղավոր ճանաչելու մասին որոշում ընդունել՝ 83-րդ հոդվածին համապատասխան,

գ) նման ընթացակարգ կիրառում է նաև այն դեպքում, եթե Դատարանը միայն մեղավոր ճանաչելու մասին որոշումը բողոքարկելու կարգով քննության առնելիս գտնում է, որ կան դատավճիռը 2-րդ կետի «ա» ենթակետին համապատասխան մեղմացնելու հիմքեր:

3. ա) Եթե Դատական պալատն այլ բան չի կարգադրում, ապա դատապարտյալը բողոքի քննության ընթացքում գտնվում է կալանքի տակ,

բ) եթե դատապարտյալ՝ կալանքի տակ գտնվելու ժամանակահատվածը գերազանցում է ազատազրկման ձևով նշանակված պատժի ժամկետը, ապա նա ենթակա է ազատ արձակման, բացառությամբ, եթե բողոք է ներկայացնում նաև դատախազը, ինչի կապակցությամբ ազատ արձակումը կարող է տեղի ունենալ ներքոհիշյալ «զ» ենթակետի պայմանների պահպանմամբ.

գ) արդարացման որոշում ընդունելու դեպքում մեղմացնելու համար է անհապաղ ազատ արձակման՝ ներքոհիշյալի պահպանմամբ.

ի) բացառիկ հանգամանքներում և հաշվի առնելով inter alia փախուստի իրական վտանգը, հանցագործության վտանգավորությունը և բողոքի բավարարման հավանականությունը, Դատական պալատը, դատախազի խնդրանքով, կարող է բողոքի քննության ընթացքում անձին պահել կալանքի տակ,

ii) Դատական պալատի՝ «զ» (i) ենթակետի հիման վրա կայացրած որոշումը կարող է բողոքարկվել Ընթացակարգի և ապացուցման կանոններին համապատասխան:

4. Որոշման կամ դատավճիռի կատարումը, 3-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի պահպանմամբ, կարող է հետաձգվել բողոք բերելու համար նախատեսված ժամկետի և բողոքի քննության ընթացքում:

Հոդված 82 Այլ որոշումների բողոքարկումը

1. Յանկացած Կողմ կարող է Ընթացակարգի և ապացուցման կանոններին համապատասխան բողոքարկել հետևյալ որոշումներից յուրաքանչյուրը.

ա) իրավագորության կամ գործի ընդունելիության վերաբերյալ որոշումը,

բ) անձի, որի նկատմամբ քննություն կամ դատաքննություն է իրականացվում, ազատումը բույլատող կամ արգելող որոշումը,

գ) Սինչդատական վարույթի պալատի՝ 56-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն իր նախաձեռնությամբ գործելու վերաբերյալ կայացրած որոշումը,

դ) այնպիսի հարցի վերաբերյալ որոշումը, որն էական ազդեցություն կունենար դատաքննության անաշառ և արագ անցկացման կամ դրա արդյունքի վրա, կամ որի կապակցությամբ Վերաքննիչ պալատի անհապաղ որոշումը կարող է, Սինչդատական վարույթի պալատի կամ Դատական պալատի կարծիքով, նպաստել գործի քննության էական առաջխաղացմանը:

2. Սինչդատական վարույթի պալատի՝ 57-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետի համաձայն կայացրած որոշումը կարող է բողոքարկել շահագոգիո պետության կամ դատախազի կողմից՝ Սինչդատական վարույթի պալատի բույլտվությամբ: Նման բողոքի քննությունը կատարվում է անհետաձգելիորեն:

3. Բողոքարկումն ինքնըստինքյան չի կասեցնում քննությունը, եթե Վերաքննիչ պալատը, Ընթացակարգի և ապացուցման կանոններին համապատասխան ներկայացված խնդրանքի հիման վրա, այդ մասին որոշում չի կայացնում:

4. Տուժողների օրինական ներկայացուցիչը, դատապարտյալը կամ bona fide սեփականատերը 75-րդ հոդվածի համաձայն ընդունված որոշման հետևանքով տուժելու դեպքում կարող է բողոքարկել վճասի հատուցման մասին որոշումը, ինչպես դա նախատեսված է Ընթացակարգի և ապացուցման կանոններում:

Հոդված 83 Բողոքի քննությունը

1. Գործի՝ սույն և 81-րդ հոդվածներին համապատասխան վարույթի նպատակների համար Վերաքննիչ պալատն օժտվում է Դատական պալատի բոլոր իրավասություններով:

2. Եթե Վերաքննիչ պալատը եզրակացնում է, որ բողոքարկվող դատաքննությունն անարդարացի է այնպես, որ կասկածի տակ է դնում որոշման կամ դատավճռի նկատմամբ վստահությունը, կամ որ բողոքարկվող որոշման կամ դատավճռի կայացման ժամանակ թույլ են տրվել փաստի կամ իրավունքի էական սխալներ կամ՝ դատավարական խախտում, այն կարող է.

ա) բեկանել կամ փոփոխել որոշումը կամ դատավճիռը, կամ

բ) կարգադրել անցկացնելու նոր դատաքննություն՝ Դատական այլ պալատի կողմից:

Այս նպատակների համար Վերաքննիչ պալատը կարող է գործի փաստացի հանգամանքների հետ կապված հարցը վերադարձնել սկզբնական Դատական պալատին, որպեսզի վերջինս լուծի այն և Վերաքննիչ պալատին ներկայացնի համապատասխան եզրակացություն, կամ էլ Վերաքննիչ պալատն հարցը լուծելու համար կարող է ինքը ապացույցներ պահանջել: Եթե որոշումը կամ դատավճիռը բողոքարկվում է միայն դատապարտյալի կամ, նրա անունից, դատախազի կողմից, ապա այդ որոշումը կամ դատավճիռը չի կարող փոփոխել ի վճաս դատապարտյալի:

3. Եթե դատավճռի բողոքարկման ժամանակ Վերաքննիչ պալատը եզրակացնում է, որ նշանակված պատիժը համարժեք չէ կատարված հանցագործությանը, նա կարող է 7-րդ բաժնին համապատասխան փոփոխել դատավճիռը :

4. Վերաքննիչ պալատի որոշումն ընդունվում է դատավորների ձայների մեծամասնությամբ և իրապարակվում որնբաց նիստում: Որոշման մեջ նշվում են որև

կայացման հիմքերը: Համաձայնության բացակայության դեպքում՝ Վերաքննիչ պալատի որոշման մեջ շարադրվում են մեծամասնության և փոքրամասնության կարծիքները, սակայն յուրաքանչյուր դատավոր կարող է իրավունքի հարցով հանդիս գալ առանձին կամ հատուկ կարծիքով:

5. Վերաքննիչ պալատը կարող է իր որոշումը հրապարակել արդարացված կամ դատապարտված անձի բացակայությամբ:

Հոդված 84

Մեղադրական դատավճռի կամ դատավճռով նշանակված պատժի վերանայումը

1. Դատապարտված անձը կամ, նրա մահից հետո, ամուսինը, երեխաները, ծնողները կամ նրա մահվան պահին ողջ եղած որևէ անձ, որը նրանից ստացել է հստակ գրավոր ցուցումներ նման բողոք բերելու մասին, կամ դատախազը՝ այդ անձի անունից, կարող են միջնորդությամբ դիմել Վերաքննիչ պալատ՝ վերանայելու վերջնական մեղադրական դատավճռով կամ դատավճռով նշանակված պատիժը հետևյալ հիմքերով.

ա) ի հայտ են եկել նոր ապացույցներ, որոնք՝

ի) դատաքննության ժամանակ բացակայել են, և այդ բացակայության համար պատասխանատվությունը չի կարող ամբողջովին կամ մասնակիորեն դրվել միջնորդությամբ դիմած կողմից վրա, և

ii) բավականաչափ կարևոր են, և եթե ներկայացվեին դատաքննության ընթացքում, ապա դա, հնարավոր է, հանգեցներ այլ դատավճռի կայացման,

բ) ի հայտ են եկել նոր փաստեր՝ վկայող, որ վճռորոշ ապացույցը, որն ուշադրության է առնվել դատաքննության ընթացքում և որի վրա է հիմնվել մեղադրական դատավճռը, եղել է անարդար կամ սխալ,

գ) մեղադրական դատավճռի կայացմանը կամ մեղադրանքի հաստատմանը մասնակցած դատավորը կամ դատավորները տվյալ գործի քննության ընթացքում կատարել են այնպիսի լուրջ զանցանքներ կամ իրենց պարտականությունների լուրջ խախտումներ, որոնք բավարար հիմք կարող են հանդիսանալ 46-րդ հոդվածի համաձայն այդ դատավորին կամ դատավորներին պաշտոնանկ անելու համար:

2. Վերաքննիչ պալատը մերժում է միջնորդությունը, եթե գտնում է, որ այն հիմնավոր չէ: Եթե նա որոշում է, որ միջնորդությունն ըստ էության հիմնավոր է, ապա անհրաժեշտության դեպքում կարող է՝

ա) վերստին կազմավորել սկզբնական Դատական պալատը,

բ) կազմավորել նոր Դատական պալատ կամ

գ) գործը քննության առնել անձամբ, որպեսզի, Ընթացակարգի և ապացուցման կանոններով նախատեսված կարգով լսելով կողմերին, որոշում կայացնի դատավճռը վերանայելու կամ չվերանայելու մասին:

Հոդված 85

Երրակալված կամ մեղավոր ճանաչված անձին տրվող փոխհատուցումը

1. Յուրաքանչյուր ոք, ով դարձել է անօրինական ձերբակալման կամ կալանավորման զոհ, ունի հայցային ուժով օժտված փոխհատուցում ստանալու իրավունք:

2. Եթե անձը վերջնական որոշմամբ դատապարտվել է հանցազործության կատարման համար և եթե կայացված դատավճռը հետագայում չեղյալ է հայտարարվել այն հիմքով, որ նոր կամ նոր բացահայտված հանգամանքն անվիճելիորեն վկայում է դատական լուրջ սխալի առկայության մասին, ապա այդ անձը, որը պատիժ է կրել նման կերպ մեղավոր ճանաչվելու

հետևանքով, օրենքին համապատասխան՝ փոխհատուցում է ստանում, եթե չի ապացուցվում, որ նշված անհայտ հանգամանքը ժամանակին չի բացահայտվել տվյալ անձի լրիվ կամ մասնակի մեղքով:

3. Բացադիկ դեպքերում, եթե Դատարանը բացահայտում է դատական լուրջ և կոպիտ սխալ մասին վկայող անվիճելի փաստեր, կարող է, իր հայեցողությամբ, համաձայն Ընթացակարգի և ապացուցման կանոններով սահմանված չափանիշների, փոխհատուցել այն անձին, որը կալանքից ազատվել է արդարացնելու վերաբերյալ վերջնական որոշման կամ այդ հիմքով գործի վարույթի կարձման հիման վրա:

ԲԱԺԻՆ 9 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հոդված 86 Համագործակցելու համընդհանուր պարտավորություն

Սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունները, սույն Կանոնադրության դրույթներին համապատասխան, բազմակողմանիորեն համագործակցում են Դատարանի հետ՝ Դատարանին ընդդատյա հանցագործությունների քննության և քրեական հետապնդման գործում:

Հոդված 87 Համագործակցության վերաբերյալ դիմումներ. ընդհանուր դրույթներ

1. ա) Դատարանն իրավունք ունի համագործակցելու համար դիմել սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետություններին: Այդ դիմումը ներկայացվում է դիվանագիտական կամ այլ համապատասխան ուղիով, որը կարող է սահմանվել սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող յուրաքանչյուր պետության կողմից՝ սույն Կանոնադրության վավերացման, ընդունման, հաստատման կամ միացման ժամանակ:

Սահմանված ուղիների հետագա փոփոխությունները կատարվում են սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող յուրաքանչյուր պետության կողմից՝ Ընթացակարգի և ապացուցման կանոններին համապատասխան:

բ) Անհրաժեշտության դեպքում, առանց խոչընդոտելու (ա) ենթակետի դրույթներին, դիմումները կարող են ներկայացվել նաև քրեական ոստիկանության միջազգային կազմակերպության կամ տարածաշրջանային այլ համապատասխան կազմակերպության միջոցով:

2. Համագործակցելու վերաբերյալ դիմումները և այն ուղեկցող ցանկացած փաստաթուղթ ներկայացվում են հարցվող Պետության պաշտոնական լեզվով կամ այդ լեզվով կատարված թարգմանությամբ, կամ Դատարանի աշխատանքային լեզուներից մեկով կամ ուղեկցվում են այդ լեզուներից որևէ մեկով կատարված թարգմանությամբ՝ վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու ժամանակ տվյալ Պետության ընտրությամբ:

Նման ընտրության հետագա փոփոխությունները կատարվում են Ընթացակարգի և ապացուցման կանոններին համապատասխան:

3. Հարցվող Պետությունը համագործակցելու համար դիմումը և այն ուղեկցող փաստաթուղթը պահում է գաղտնի, բացառությամբ այն փաստաթուղթի, որոնց գաղտնագերծումը անհրաժեշտ է այդ դիմումը կատարելու համար:

4. Համագործակցելու համար՝ սույն բաժնի համաձայն ներկայացված ցանկացած դիմումի կապակցությամբ՝ Դատարանը կարող է ձեռնարկել այնպիսի միջոցներ, ներառյալ՝ տեղեկատվության պահպանման հետ կապված միջոցները, որոնք կարող են անհրաժեշտ լինել տուժողների, հնարավոր վկաների և նրանց ընտանիքների անվտանգությունը, ֆիզիկական և հոգեկան առողջությունը ապահովելու համար։ Դատարանը կարող է դիմել խնդրանքով այն մասին, որպեսզի սույն բաժնի համաձայն տրամադրվող տեղեկատվությունը հաղորդվի և օգտագործվի այնպես, որ պաշտպանվեն տուժողների, հնարավոր վկաների և նրանց ընտանիքների անվտանգությունը, ֆիզիկական և հոգեկան առողջությունը։

5. а) Դատարանը կարող է դիմել որևէ պետությանը, որը սույն Կանոնադրության Կողմ չի հանդիսանում սույն բաժնով նախատեսված աջակցություն տրամադրելու համար՝ այդ պետության հետ ad hoc պայմանավորվածության, համաձայնագրի հիման վրա կամ այլ համապատասխան հիմքով։

բ) Եթե սույն Կանոնադրության Կողմ չհանդիսացող պետությունը, որը ad hoc պայմանավորվածություն կամ համաձայնություն է ձեռք բերել Դատարանի հետ, հրաժարվում է նշված դիմումի հետ կապված համագործակցել, համապատասխան այդ պայմանավորվածությանը կամ համաձայնագրին, Դատարանն այդ մասին կարող է տեղեկացնել սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունների ասամբլեային կամ, եթե գործը Դատարանի քննությանն է հանձնվել Անվտանգության խորհրդի կողմից, Անվտանգության խորհրդին։

6. Դատարանը կարող է խնդրել ցանկացած միջկառավարական կազմակերպության՝ տրամադրել տեղեկատվություն կամ փաստաթղթեր։ Դատարանը կարող է խնդրել նաև համագործակցության և աջակցության այլ ձևեր, որոնք կարող են համաձայնեցվել այդ կազմակերպության հետ և որոնք համապատասխանում են այդ կազմակերպության իրավասությանն ու մանդատին։

7. Եթե Սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունը, հակառակ սույն Կանոնադրության դրույթների, չի կատարում համագործակցելու վերաբերյալ Դատարանի դիմումը՝ դրանով իսկ խոչընդոտելով Դատարանի՝ սույն Կանոնադրությամբ նախատեսված գործառույթների և լիազորությունների կատարմանը, Դատարանը կարող է այդ հարցի կապակցությամբ որոշում կայացնել և այն քննության հանձնել սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունների Ասամբլեային կամ, եթե գործը Դատարանի քննությանն է հանձնվել Անվտանգության խորհրդի կողմից, Անվտանգության խորհրդին։

Հոդված 88 Ազգային օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերը

Սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունները սույն բաժնում նշված համագործակցության բոլոր ձևերի համար ապահովում են իրենց ազգային օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի առկայությունը։

Հոդված 89 Անձանց փոխանցումը Դատարանին

1. Դատարանը կարող է անձին կալանավորելու և փոխանցելու մասին խնդրանքը և այդ խնդրանքը հիմնավորող նյութերը, որոնք նշված են 91-րդ հոդվածում, փոխանցել այն Պետությանը, որի տարածքում կարող է գտնվել տվյալ անձը՝ խնդրելով այդ Պետությանը համագործակցել այդ անձին կալանավորելու և փոխանցելու գործում։ Սույն

Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունները, սույն բաժնի դրույթներին և իրենց ազգային օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերին համապատասխան կատարում են կալանավորելու և փոխանցելու մասին խնդրանքները:

2. Եթե փոխանցման ենթակա անձը *ne bis in idem* սկզբունքի հիման վրա, ինչպես նշված է 20-րդ հոդվածում, գաևատ է ներկայացնում ազգային դատարան, ապա հարցվող Պետությունն անհապաղ խորհրդակցում է Դատարանի հետ՝ պարզելու, թե կա արդյոք գործի ընդունելիության վերաբերյալ համապատասխան որոշում: Եթե գործի ընդունելիությունը ճանաչված է, ապա հարցվող Պետությունը ձեռնամուխ է լինում խնդրանքի կատարմանը: Եթե գործի ընդունելիության վերաբերյալ որոշում դեռևս չի կայացվել, ապա հարցվող Պետությունը կարող է անձին փոխանցելու վերաբերյալ խնդրանքի կատարումը հետաձգել մինչև ընդունելիության մասին որոշման կայացումը Դատարանի կողմից:

3. ա) Սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունը, իր ազգային դատավարական օրենսդրությանը համապատասխան, թույլատրում է այլ Պետության կողմից Դատարանին փոխանցված անձի տեղափոխումն իր տարածքով, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ Պետության տարածքով տարանցիկ տեղափոխումը կարող է խոչընդոտել փոխանցմանը կամ ճգնացել այն:

բ) Տարանցիկ տեղափոխման վերաբերյալ Դատարանի խնդրանքը ներկայացվում է 87-րդ հոդվածին համապատասխան: Տարանցիկ տեղափոխման վերաբերյալ խնդրանքը ներառում է՝

i) տեղափոխվող անձի նկարագրությունը,

ii) գործի հանգամանքների համառոտարարությունը և դրանց իրավական որակումը, և

iii) կալանավորման ու փոխանցման սանկցիա:

գ) Տարանցիկ տեղափոխման ընթացքում տեղափոխվող անձը պահպում է կալանքի տակ:

դ) Եթե անձը տեղափոխվում է օդային տրանսպորտով և տարանցման Պետության տարածքում վայրէջք նախատեսված չէ, ապա որևէ թույլտվություն չի պահանջվում:

ե) Եթե տարանցիկ Պետության տարածքում տեղի է ունենում չնախատեսված վայրէջք, այդ Պետությունը կարող է Դատարանից պահանջել ներկայացնելու տարանցիկ տեղափոխման վերաբերյալ խնդրանք՝ ինչպես նախատեսված է (բ) ենթակետում: Տարանցիկ Պետությունը տեղափոխվող անձին կալանքի տակ է պահում մինչև տարանցիկ տեղափոխման վերաբերյալ խնդրանք ստանալը և տարանցիկ տեղափոխումն իրականացնելը, սակայն սույն ենթակետի նպատակների համար կալանքը չի կարող գերազանցել 96 ժամը՝ սկսած չնախատեսված վայրէջքի պահից, եթե հիշյալ խնդրանքը չի ստացվել նշված ժամկետում:

4. Եթե փոխանցման ենթակա անձը, քրեական հետապնդման է ենթարկվում կամ պատիժ է կրում հարցվող Պետությունում ոչ այն հանցագործության համար, որի վերաբերյալ ներկայացված է խնդրանքը, հարցվող Պետությունը, խնդրանքը կատարելու մասին որոշում ընդունելուց հետո, խորհրդակցում է Դատարանի հետ:

Հոդված 90 Չուզահեռ խնդրանքներ

1. Եթե սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունը, որը 89-րդ հոդվածի համաձայն, Դատարանից ստանում է անձին փոխանցելու վերաբերյալ խնդրանք, նաև խնդրանք է ստանում նոյն անձին հանձնելու վերաբերյալ որևէ այլ պետությունից՝ այն հանցանքի հիմքը կազմող միևնույն արարքի կապակցությամբ, որի համար ներկայացվել է Դատարանի խնդրանքը, այդ փաստի մասին տեղեկացնում է Դատարանին և խնդրանք ներկայացնող պետությանը:

2. Այն դեպքերում, եթե խնդրանք ներկայացնող պետությունը սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետություն է, ապա հարցվող պետությունը նախապատվությունը տալիս է Դատարանի խնդրանքին, եթե՝

ա) Դատարանը, 18-րդ և 19-րդ հոդվածների համաձայն, որոշում է կայացրել այն մասին, որ գործը, որի կապակցությամբ ինքը փոխանցում է հայցում, ենթակա է իր վարույթին, և այդ որոշման մեջ հաշվի է առնված հանձնման խնդրանք ներկայացրած պետության կողմից այդ խնդրանքի կապակցությամբ կատարված քննությունը կամ դատական կարգով հետապնդումը, կամ՝

բ) Դատարանը (ա) ենթակետում նշված որոշումը կայացնում է հարցվող պետության՝ 1-ին կետին համապատասխան կատարած ծանուցման հիման վրա:

3. Եթե չի կայացվել 2-րդ կետի (ա) ենթակետում նշված որոշումը, հարցվող պետությունը կարող է, իր հայեցողությամբ, մինչև Դատարանի կողմից 2-րդ կետի բ) ենթակետի հիման վրա որոշում ընդունելը, քննության առնել անձին հանձնելու վերաբերյալ խնդրանք ներկայացնող պետության խնդրանքը, սակայն անձին չի հանձնում մինչև Դատարանի կողմից գործի ընդունելիության վերաբերյալ որոշման կայացումը: Դատարանի որոշումը կայացվում է արագացված կարգով:

4. Եթե խնդրանք ներկայացրած պետությունը սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետություն չէ, ապա հարցվող պետությունը, եթե չունի միջազգային պարտավորություն խնդրանք ներկայացնող պետությանը հանձնել անձին, նախապատվությունը տալիս է անձին փոխանցելու վերաբերյալ Դատարանի խնդրանքին, եթե Դատարանը որոշել է, որ գործն ընդունելի է:

5. Եթե Դատարանը 4-րդ կետին համապատասխան գործի ընդունելիության վերաբերյալ որոշում չի կայացրել, ապա հարցվող պետությունը կարող է, իր հայեցողությամբ, քննության առնել՝ անձին հանձնելու վերաբերյալ խնդրանք ներկայացնող պետության խնդրանքը:

6. Այն դեպքերում, եթե կիրառվում է 4-րդ կետը, բացառությամբ, եթե հարցվող պետությունը սույն Կանոնադրությանը Կողմ չհանդիսացող և հանձնելու խնդրանք ներկայացրած պետության հանդեպ արդեն ստանձնել է անձին հանձնելու միջազգային պարտավորություն, հարցվող պետությունն է որոշում անձին փոխանցել Դատարանին կամ հանձնել խնդրանք ներկայացնող պետությանը: Որոշումն ընդունելիս հարցվող պետությունը քննության է առնում բոլոր համապատասխան գործոնները, ներառյալ, բայց ոչ բացառապես՝

ա) խնդրանքները ներկայացնելու համապատասխան ամսաթվերը,

բ) խնդրանք ներկայացրած պետության շահերը, ներառյալ, եթե տեղին է, այն հանգամանքը, թե արդյոք հանցագործությունը կատարվել է այդ պետության տարածքում, ինչպես նաև տուժողների և հանձնման ենթակա անձի քաղաքացիությունը, և

գ) խնդրանք ներկայացրած պետության և Դատարանի միջև հետագա փոխանցման հնարավորությունը:

7. Այն դեպքում, եթե սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունը, որը Դատարանից անձին փոխանցելու խնդրանք է ստանում, նույն անձին հանձնելու վերաբերյալ խնդրանք է ստանում նաև որևէ պետությունից՝ այլ արարքի համար, քան այն, որը հանդիսանում է Դատարանի խնդրանքի հիմքում ընկած հանցականը, ապա.

ա) հարցվող պետությունը, եթե խնդրանք ներկայացրած պետության հանդեպ չի ստանձնել անձին հանձնելու միջազգային պարտավորություն, նախապատվությունը տալիս է Դատարանի խնդրանքին,

բ) հարցվող պետությունը, եթե խնդրանք ներկայացրած պետության հանդեպ արդեն ստանձնել է անձին հանձնելու միջազգային պարտավորություն, ինքն է որոշում՝ անձին փոխանցել Դատարանին, թե՝ հանձնել խնդրանք ներկայացրած պետությանը: Որոշումն ընդունելիս հարցվող պետությունը քննության է առնում բոլոր համապատասխան

գործոնները, (ներառյալ, բայց չսահմանափակվելով 6-րդ կետում նշված գործոններով) հատկապես հաշվի է առնում համապատասխան արարքի բնույթն ու ծանրությունը:

8. Եթե սույն հոդվածով նախատեսված ծանուցման հիման վրա Դատարանը որոշում է կայացնում գործի անընդունելիության մասին, և հետագայում անձի հանձնման վերաբերյալ խնդրանք ներկայացրած պետությունը մերժում է ստանում, ապա հարցվող պետությունն իր այս որոշման մասին ծանուցում է Դատարանին:

Հոդված 91

Կալանավորման և փոխանցման խնդրանքի բովանդակությունը

1. Կալանավորման և փոխանցման խնդրանքը ներկայացվում է գրավոր: Անհետաձգելի դեպքերում խնդրանքը կարող է ներկայացվել գրավոր հաղորդման ստացումն ապահովող ցանկացած միջոցով, պայմանով, որ խնդրանքը հաստատվի 87-րդ հոդվածի 1-ին կետի ա) ենթակետով նախատեսված ուղիղով:

2. Այն անձի կալանավորման և փոխանցման վերաբերյալ խնդրանքի դեպքում, որին Մինչդատական վարույթի պալատի կողմից 58-րդ հոդվածի համաձայն կալանավորելու սանկցիա է տրվել, խնդրանքը պարունակում է կամ նրան կցվում են՝

ա) փոխանցման ենթակա անձին նկարագրող տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են նրա ինքնությունը հաստատելու համար, և տեղեկություններ անձի գտնվելու հնարավոր վայրի մասին,

բ) կալանավորման սանկցիայի պատճենը, և

գ) այնպիսի փաստաթղթեր, հաղորդումներ կամ տեղեկատվություն, որոնք կարող են անհրաժեշտ լինել հարցվող պետությունում փոխանցման գործընթացի պահանջները բավարարելու համար, այն բացառությամբ, որ այդ պահանջները չպետք է լինեն ավելի ծանր, քան նրանք, որոնք հարցվող պետության և այլ պետությունների միջև կնքված պայմանագրերին կամ համաձայնագրերին համապատասխան կիրառվում են հանձնման խնդրանքների համար, և, պետք է հնարավորինս նվազ ծանր լինեն հաշվի առնելով Դատարանի առանձնահատուկ բնույթը:

3. Եթե խնդրանքը վերաբերում է արդեն մեղավոր ճանաչված անձի կալանավորմանն ու փոխանցմանը, այն պարունակում է կամ նրան կցվում են՝

ա) այդ անձի կալանավորման ցանկացած սանկցիայի պատճեն,

բ) մեղավոր ճանաչելու մասին դատական որոշման պատճեն,

գ) տեղեկություն, որը վկայում է, որ փոխանցման ենթակա անձն այն նույն անձն է, որի մասին խոսվում է մեղավոր ճանաչելու մասին դատական որոշման մեջ, և,

դ) եթե փոխանցման ենթակա անձի վերաբերյալ կայացվել է դատավճիռ, ապա դատավճողի պատճեն, և եթե սահմանվել է ազատազրկման ձևով պատիժ, ապա հաղորդում անձի ազատազրկման մեջ անցկացրած ժամանակի և ազատազրկման մնացած ժամկետի մասին:

4. Դատարանի խնդրանքով, սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունը խորհրդակցում է (բռլոր, կամ առանձին հարցերի շուրջ) Դատարանի հետ իր ազգային օրենսդրության պահանջների առնչությամբ, որոնք կարող են կիրառվել 2-րդ կետի գ) ենթակետի համաձայն: Նման խորհրդակցությունների ընթացքում սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունը Դատարանին տեղեկացնում է իր ազգային օրենսդրության առանձին պահանջների մասին:

Հոդված 92

Նախնական կալանք

1. Անհետաձգելի դեպքերում, նախքան փոխանցման վերաբերյալ խնդրանք և այդ խնդրանքը հիմնավորող՝ 91-րդ հոդվածով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու, Դատարանը կարող է փոխանցման ենթակա անձին նախնական կալանքի վերցնելու համար խնդրանք ներկայացնել:

2. Նախնական կալանքի վերցնելու վերաբերյալ խնդրանքը կարող է ներկայացվել գրավոր հաղորդման փոխանցումն ապահովող ցանկացած միջոցով և պետք է բովանդակի.

ա) փոխանցման ենթակա անձին նկարագրող տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են անձի ինքնությունը հաստատելու համար, և տեղեկություններ անձի գտնվելու հնարավոր վայրի մասին,

բ) համառոտ շարադրանքը այն հանցագործությունների, որոնց համար տվյալ անձին նախնական կալանքի վերցնելու խնդրանք է ներկայացվում, և այն փաստերի, որոնք ենթադրաբար կազմում են այդ հանցագործությունները, ներառյալ, հնարավորության դեպքում, հանցագործության կատարման ժամանակն ու վայրը,

գ) նշում այն մասին, որ առկա են կալանավորման սանկցիան կամ փոխանցման ենթակա անձին մեղավոր ճանաչելու մասին դատական որոշումը, և

դ) հայտարարություն այն մասին, որ անձին փոխանցելու վերաբերյալ խնդրանքը կմերկայացվի ավելի ուշ:

3. Նախնական կալանքի վերցված անձը կարող է կալանքից ազատվել, եթե հարցվող պետությունն Ընթացակարգի և ապացուցման կանոններով սահմանված ժամկետում չի ստանում փոխանցման վերաբերյալ խնդրանքը և այն հիմնավորող, 91-րդ հոդվածով նախատեսված փաստաթղթերը: Սակայն անձը կարող է փոխանցմանը համաձայնել՝ մինչև այդ ժամկետի լրանալը, եթե հարցվող պետության օրենսդրությամբ դա թույլատրվում է: Այդ դեպքում հարցվող պետությունը հնարավորինս արագ պետք է ավարտի Դատարարնին անձին փոխանցելու գործընթացը:

4. Այն փաստը, որ փոխանցման ենթակա անձը 3-րդ կետի համաձայն ազատվել է կալանքից, չի կարող խոչընդոտել նրա հետագա կալանավորմանն ու փոխանցմանը, եթե ավելի ուշ ներկայացվեն փոխանցման վերաբերյալ խնդրանք և այն հիմնավորող փաստաթղթեր:

Հոդված 93 Համագործակցության այլ ձևեր

1. Սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունները, սույն բաժնի դրույթներին համապատասխան և իրենց ազգային օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի համաձայն, քննություն կամ քրեական հետապնդում իրականացնելու կապակցությամբ Դատարանին օգնություն ցույց տալու մասին խնդրանքները կատարում են հետևյալ կերպ.

ա) անձանց նույնականացում, այդ անձի գտնվելու վայրի կամ առարկաների գտնվելու վայրի պարզում,

բ) ապացույցների, ներառյալ՝ երդմանք տրված վկայության ստացում, և ապացույցների հավաքում, ներառյալ՝ փորձագետների՝ Դատարանին անհրաժեշտ կարծիքներն ու փորձագիտական եզրակացությունները,

գ) ցանկացած անձի հարցարնենություն, որի նկատմամբ իրականացվում է քննություն կամ դատական կարգով հետապնդում,

դ) փաստաթղթերի, ներառյալ՝ դատական փաստաթղթերի հանձնում,
ե) աջակցություն, որպեսզի անձինք իբրև վկաներ կամ փորձագետներ կամավոր ներկայանան Դատարան,

զ) անձանց ժամանակավոր փոխանցում, ինչպես դա նախատեսված է 7-րդ կետում,

է) տեղանքի կամ օրյեկտների գննման անցկացում, ներառյալ՝ արտաշիրմումը և գերեզմանի գննումը,

ը) խուզարկությունների կատարում և կալանք,

թ) արձանագրությունների և փաստաթղթերի, ներառյալ՝ պաշտոնական արձանագրությունների և փաստաթղթերի տրամադրում,

ժ) տուժողների և վկաների պաշտպանություն և ապացույցների պահպանում,

Ժա) ձեռք բերված միջոցների, գույքի և եկամուտների, ինչպես նաև հանցագործության գործիքների հայտնաբերում, սառեցում կամ առգրավում՝ հետագա բռնագրավման նպատակով, առանց bona fide երրորդ կողմերի իրավունքներին վճառ պատճառելու, և

ԺԲ) հարցվող պետության օրենսդրությամբ չարգելված ցանկացած այլ տեսակի օգնություն՝ ուղղված Դատարանին ընդդատյա հանցագործությունների առնչությամբ քննության և դատական կարգով հետապնդման իրականացմանն աջակցելուն:

2. Դատարանը լիազորված է երաշխավորելու, որ Դատարան ներկայացած վկան կամ փորձագետը իր կողմից չեն հետապնդվի, չեն կալանավորվի կամ չեն ներարկվի անձնական ազատության որևէ սահմանափակման այն գործողությունների կամ անգործության համար, որ նրանք կատարել են հարցվող պետության տարածքից մեկնելուց առաջ:

3. Եթե 1-ին կետի համաձայն ներկայացված խնդրանքում նշված աջակցության շրջանակներում այս կամ այն կոնկրետ միջոցի իրականացումը հարցվող պետությունում արգելվում է՝ գոյություն ունեցող ընդհանուր կիրառման հիմնարար իրավական սկզբունքի հիման վրա, ապա հարցվող պետությունը հարցը լուծելու նպատակով անհապաղ խորհրդակցում է Դատարանի հետ: Նման խորհրդակցության ընթացքում հարկ է պարզել աջակցությունն այլ միջոցներով տրամադրելու հնարավորությունը կամ տրամադրման պայմանները: Եթե խորհրդակցության արդյունքում հարցը լուծում չի ստանում, Դատարանը խնդրանքում կատարում է անհրաժեշտ փոփոխություններ:

4. 72-րդ հոդվածին համապատասխան, սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունը կարող է աջակցության խնդրանքն ամրողացվին կամ մասամբ մերժել, միայն այն դեպքում, եթե այն վերաբերում է այնպիսի փաստաթղթերի ներկայացմանը կամ ապացույցների բացահայտմանը, որոնք առնչվում են իր ազգային անվտանգությանը:

5. 1-ին կետի «ԺԲ» ներակետով նախատեսված աջակցության խնդրանքը մերժելուց առաջ հարցվող պետությունը պարզում է՝ կարող է արդյոք աջակցությունը տրամադրվել կոնկրետ սահմանված պայմաններով կամ ավելի ուշ կամ որևէ այլ կերպ, պայմանով, որ եթե Դատարանը կամ դատախազն աջակցությունն ընդունում են որոշակի պայմաններով, նրանք պետք է պահպանեն այդ պայմանները:

6. Եթե աջակցության խնդրանքը մերժվում է, ապա սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող հարցվող պետությունն այդ մերժման պատճառների մասին անհապաղ տեղեկացնում է Դատարանին կամ դատախազին:

7. ա) Դատարանը կարող է դիմել, ճանաչման կամ վկայություն տալու կամ այլ աջակցության նպատակով, կալանքի տակ գտնվող անձի ժամանակավոր փոխանցման վերաբերյալ խնդրանքով: Նման անձը կարող է փոխանցվել հետևյալ պայմանների պահպանմամբ.

ի) անձը փոխանցման վերաբերյալ իր գիտակցված համաձայնությունն արտահայտում է ազատորեն,

ii) հարցվող պետությունը փոխանցմանը համաձայնում է այն պայմաններով, որոնց շուրջ այդ պետությունը և Դատարանը կարող են համաձայնվել:

թ) Փոխանցվող անձը մնում է կալանքի տակ: Փոխանցման նպատակների իրականացումից հետո Դատարանն առանց ձգձգումների տվյալ անձին վերադարձնում է հարցվող պետությանը:

8. а) Դատարանն ապահովում է փաստաթղթերի և տեղեկատվության գաղտնիությունը, բացառությամբ նրանց, որոնց բացահայտումը պահանջվում է քննության և դատավարության իրականացման համար, և որոնք նշված են ներկայացված խնդրանքում:

բ) Հարցվող պետությունն անհրաժեշտության դեպքում կարող է փաստաթղթերն կամ տեղեկությունները դատախազին տրամադրել գաղտնիության պայմանով: Դատախազը դրանք կարող է օգտագործել միայն նոր ապացույցներ ձեռք բերելու նպատակով:

գ) Հարցվող պետությունն կարող է, իր հայեցողությամբ կամ դատախազի խնդրանքով, հետազոտում համաձայնել բացահայտելու նման փաստաթղթերն կամ տեղեկատվությունը: Դրանից հետո դրանք կարող են օգտագործվել որպես ապացույց՝ 5-րդ և 6-րդ բաժինների դրույթների համաձայն և Ընթացակարգի և ապացույցման կանոններին համապատասխան:

9. а) Այն դեպքում, եթե սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունը Դատարանից կամ այլ պետությունից, միջազգային որևէ պարտավորության համապատասխան, ստանում է զուգահեռ խնդրանքներ, որոնք այլ են, քան փոխանցման կամ հանձնման խնդրանքը, ապա այդ պետությունը, Դատարանի և այլ պետության հետ խորհրդակցելով, միջոցներ է ձեռնարկում երկու խնդրանքները բավարարելու համար՝ անհրաժեշտության դեպքում հետաձգելով այս կամ այն խնդրանքի կատարումը կամ կատարելով որոշակի պայմանով,

ի) Վերջինի բացակայության դեպքում զուգահեռ խնդրանքները բավարարվում են 90-րդ հոդվածում ամրագրված սկզբունքներին համապատասխան:

բ) Սակայն, եթե Դատարանի խնդրանքը վերաբերում է այնպիսի տեղեկատվության, սեփականության կամ անձանց, որոնք, համաձայն այս կամ այն միջազգային համաձայնագրի, գտնվում են երրորդ պետության կամ միջազգային կազմակերպության վերահսկողության ներքո, հարցվող պետությունները այդ մասին տեղեկացնում են Դատարանին, և Դատարանն իր խնդրանքը ներկայացնում է անմիջապես այդ երրորդ պետությանը կամ միջազգային կազմակերպությանը:

10. а) Դատարանը խնդրանքի հիման վրա կարող է համագործակցել սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող այն պետության հետ և աջակցություն տրամադրել սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող այն պետությանը, որը քննություն կամ դատաքննություն է իրականացնում այն արարքի կապակցությամբ, որը կազմում է Դատարանին ընդդատյա հանցագործություն, կամ հարցում անող պետության ազգային օրենսդրությամբ հանդիսանում է ծանր հանցագործություն:

բ) ի) «ա» ենթակետին համապատասխան տրամադրվող աջակցությունն իր մեջ ներառում է, inter alia՝

ա. հայտարարությունների, փաստաթղթերի կամ այլ ապացույցների փոխանցում, որոնք ձեռք են բերվել քննության կամ Դատարանի կողմից անցկացված դատաքննության ընթացքում, և

բ. Դատարանի սանկցիայով կալանավորված ցանկացած անձի հարցաքննությունը,

իi) «բ» կետի (i) ա) ենթակետի համաձայն աջակցություն տրամադրելու դեպքում՝

ա. եթե փաստաթղթերը կամ այլ տեսակի ապացույցներն ստացվել են այս կամ այն պետության աջակցությամբ, ապա Դատարանի կողմից դրանց փոխանցումը կատարվում է այդ պետության համաձայնությամբ,

բ. եթե հայտարարությունները, փաստաթղթերը կամ այլ տեսակի ապացույցները տրամադրվել են վկայի կամ փորձագետի կողմից, ապա դրանց փոխանցումը կատարվում է 68-րդ հոդվածի դրույթների համաձայն:

գ) Դատարանը, սույն կետի պայմաններին համապատասխան, կարող է սույն կետի համաձայն բավարարել այն պետության կողմից ներկայացված աջակցության վերաբերյալ խնդրանքը, որը սույն Կանոնադրությանը Կողմ չէ:

Հոդված 94

Խնդրանքի կատարման հետաձգումը՝ իրականացվող քննության կամ դատական կարգով հետապնդման կապակցությամբ

1. Եթե խնդրանքի անհապաղ կատարումը կիսանգարի իրականացվող քննությանը կամ դատական կարգով հետապնդմանը այն արարքի կապակցությամբ, որը այլ է քան խնդրանքի հիմքը կազմող արարքը, ապա հարցվող պետությունը կարող է խնդրանքի կատարումը հետաձգել Դատարանի հետ համաձայնեցված ժամկետով: Սակայն հետաձգման ժամկետը չպետք է գերազանցի այն ժամանակը, որն անհրաժեշտ է հարցվող պետությունում քննությունը կամ դատական կարգով հետապնդումն ավարտելու համար: Խնդրանքի կատարումը հետաձգելու մասին որոշում ընդունելուց առաջ՝ հարցվող պետությունը պետք է պարզի՝ արդյոք հնարավոր է աջակցությունը տրամադրվել անհապաղ, պահպանելով որոշակի պայմաններ:

2. Եթե 1-ին կետին համապատասխան ընդունվել է հետաձգման մասին որոշում, դատախազը, այնուամենայնիվ, կարող է 93-րդ հոդվածի 1-ին կետի (յ) ենթակետին համապատասխան պահանջել, որպեսզի միջոցներ ձեռնարկվեն՝ ապացույցների պահպանման համար:

Հոդված 95

Խնդրանքի կատարման հետաձգումը՝ կապված գործի ընդունելիության հարցի վիճարկման հետ

Այն դեպքում, եթե Դատարանը 18-րդ կամ 19-րդ հոդվածներին համապատասխան քննության է առնում գործի ընդունելիության հարցի վերաբերյալ բողոքը, հարցվող պետությունը կարող է սույն բաժնին համապատասխան հետաձգել խնդրանքի կատարումը՝ մինչև Դատարանի կողմից որոշման կայացումը, եթե միայն Դատարանը չի ընդունել հատուկ կարգադրություն այն մասին, որ դատախազը կարող է սկսել ապացույցների հավաքումը՝ 18-րդ կամ 19-րդ հոդվածներին համապատասխան:

Հոդված 96

93-րդ հոդվածով նախատեսված աջակցության այլ ձևերի վերաբերյալ խնդրանքը

1. Աջակցության՝ 93-րդ հոդվածով նախատեսված այլ ձևերի վերաբերյալ խնդրանքը ներկայացվում է գրավոր: Անհետաձգելի դեպքերում խնդրանքը կարող է ներկայացվել գրավոր հաղորդման փոխանցումն ապահովող ցանկացած միջոցով՝ պայմանով, որ այդ խնդրանքը հաստատվի 87-րդ հոդվածի 1-ին կետի ա) ենթակետով նախատեսված միջոցով:

2. Նման խնդրանքը, համապատասխան դեպքերում, ընդգրկում է կամ դրան կցվում է՝
ա) խնդրանքի և խնդրվող աջակցության նպատակի համառոտ շարադրանքը, ներառյալ՝ խնդրանքի իրավաբանական հիմքը և հիմնավորումները,

բ) հնարավորինս մանրամասն տեղեկատվություն ցանկացած անձի գտնվելու վայրի կամ ինքնության, կամ այն վայրի մասին, որը պետք է պարզվի կամ նույնականացվի, որպեսզի խնդրվող աջակցությունը ցույց տրվի,

գ) այն էական հանգամանքների համառոտ նկարագրությունը, որոնց վրա հիմնվում է խնդրանքը,

դ) կատարման ենթակա ցանկացած լնթացակարգի կամ պահանջի դրդապատճառները և դրանց մանրամասն շարադրանքը,

ե) այնպիսի տեղեկատվություն, որը հարցվող պետության օրենսդրության համաձայն կարող է պահանջվել խնդրանքի կատարման համար, և

զ) գործին առնչվող ցանկացած այլ տեղեկատվություն, որը կարող է անհրաժեշտ լինել խնդրվող աջակցությունը ցույց տալու համար:

3. Դատարանի խնդրանքով՝ սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունը խորհրդակցում է Դատարանի հետ ընդհանուր առմամբ, կամ կոնկրետ հարցով, իր ազգային օրենսդրությամբ նախատեսված բոլոր պահանջների կապակցությամբ, որոնք կարող են կիրառվել 2-րդ ե) ենթակետի համաձայն: Նման խորհրդակցությունների ընթացքում սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունը Դատարանին տեղեկացնում է իր ազգային օրենսդրության առանձին պահանջների մասին:

4. Սույն հոդվածի դրույթները համապատասխան դեպքերում կիրառվում են նաև Դատարանին ներկայացված աջակցության վերաբերյալ խնդրանքի առնչությամբ:

Հոդված 97 Խորհրդակցություններ

Եթե սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետություն՝ սույն բաժնին համապատասխան խնդրանք ստանալով, պարզում է, որ ծագել են դժվարություններ, որոնք կարող են խոչընդոտել տվյալ խնդրանքի կատարմանը կամ դրա կատարումը բացառել, հարցը լուծելու նպատակով անհապաղ խորհրդակցում է Դատարանի հետ: Նման դժվարությունները կարող են ընդգրկել, inter alia.

ա) խնդրանքը կատարելու համար անբավարար տեղեկատվություն,

բ) փոխանցման վերաբերյալ խնդրանքի դեպքում, չնայած գործադրված բոլոր ջանքերին, համապատասխան անձի գտնվելու վայրը պարզելու անհնարինությունը կամ այն փաստը, որ կատարված քննության արդյունքները ցույց են տվել, որ հարցվող պետությունում գտնվող անձն ակնհայտորեն չի հանդիսանում օրդերում նշված անձը, կամ

գ) այն հանգամանքը, որ խնդրանքի կատարումն առկա ձևով հարցվող պետությունից կպահանջի այլ պետության նկատմամբ նախապես ստանձնած պայմանագրային պարտավորությունների խախտում:

Հոդված 98 Համագործակցությունն անձեռնմխելիությունից հրաժարվելու և փոխանցմանը համաձայնելու վերաբերյալ

1. Դատարանը չի կարող դիմել փոխանցնման կամ այնպիսի աջակցության վերաբերյալ խնդրանքով, որը հարցվող պետությունից կպահանջեր կատարել պետության կամ անձի դիվանագիտական անձեռնմխելիության կամ երրորդ պետության գույքի առնչությամբ միջազգային իրավունքով ստանձնած իր պարտավորություններին հակասող գործողություններ այնքան ժամանակ մինչև Դատարանն անձեռնմխելիությունից հրաժարվելու հարցում կանխապես չստանա այդ երրորդ պետության համագործակցության համաձայնությունը:

2. Դատարանը չի կարող դիմել փոխանցման վերաբերյալ այնպիսի խնդրանքով, որը հարցվող պետությունից կպահանջեր կատարել միջազգային համաձայնագրերով ստանձնած իր այն պարտավորությունների հետ անհամատեղելի գործողություններ, որոնց համաձայն՝

որևէ անձի Դատարանին փոխանցելու համար պահանջվում է ուղարկող պետության համաձայնությունը, եթե միայն Դատարանը փոխանցման համաձայնության հասնելու հարցում կանխապես չստանա համագործակցության վերաբերյալ ուղարկող պետության համաձայնությունը:

Հոդված 99

93-րդ և 96-րդ հոդվածների համաձայն ներկայացված խնդրանքների կատարումը

1. Աջակցության վերաբերյալ խնդրանքները կատարվում են հարցվող պետության օրենսդրությամբ նախատեսված համապատասխան ընթացակարգերին համապատասխան և, եթե դա չի արգելվում այդ օրենսդրությամբ, խնդրանքում նշված միջոցով, ներառյալ՝ ցանկացած ընթացակարգի պահպանումը, կամ բույլատրելով խնդրանքում նշված անձանց ներկա գտնվելը և աջակցելը կատարման ընթացքին:

2. Անհետաձգելի խնդրանք ներկայացնելու դեպքում՝ Դատարանի խնդրանքին ի պատասխան ներկայացվող փաստաթղթերը կամ ապացույցներն ուղարկվում են անհետաձգելի կարգով:

3. Հարցվող պետության պատասխաններն ուղարկվում են բնօրինակով:

4. Առանց սույն բաժնի մյուս հոդվածներին վնասելու, եթե դա անհրաժեշտ է այնպիսի խնդրանքի արդյունավետ կատարման համար, որը կարող է իրականացվել առանց որևէ հարկադրանքի միջոցներ ճեռնարկելու, ներառյալ՝ անձի հարցաքննությունը կամ կամավոր հիմունքներով նրանից ապացույցներ ստանալը, այդ բվում՝ առանց հարցվող պետության իշխանությունների ներկայության, եթե դա էապես կարևոր է խնդրանքի կատարման համար, և որևէ հանրային օբյեկտի կամ հանրային վայրի գննումը (առանց այդ վայրերը փոփոխության ենթարկելու), դատախազը կարող է այդ խնդրանքը կատարել անմիջականորեն պետության տարածքում՝ հետևյալ կարգով:

ա) եթե սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող հարցվող պետությունը այն պետությունն է, որի տարածքում, ենթադրաբար, կատարել է հանցագործությունը, և 18-րդ կամ 19-րդ հոդվածների համաձայն գործի ընդունելիությունը որոշվել է, դատախազը կարող է անմիջականորեն կատարել այդ խնդրանք՝ սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող հարցվող պետության հետ բոլոր հնարավոր խորհրդակցություններից հետո,

բ) մյուս դեպքերում դատախազը կարող է այդ խնդրանքը կատարել սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող հարցվող պետության հետ խորհրդակցություններից հետո՝ հաշվի առնելով տվյալ պետության ներկայացրած բոլոր հիմնավոր պայմաններն կամ մտահոգությունները: Եթե վերը նշված պետությունը սույն ենթակետի համաձայն մատնանշում է խնդրանքի կատարման հետ կապված դժվարություններ, ապա նա հարցը լուծելու նպատակով անհապաղ խորհրդակցում է Դատարանի հետ:

5. Այն դրույթները, որոնք 72-րդ հոդվածի համաձայն Դատարանում լսվող կամ հարցաքննվող անձին թույլ են տալիս վկայակոչել այն սահմանափակումները, որոնք նախատեսված են ազգային անվտանգության առնչվող գաղտնի տեղեկատվության բացահայտումը թույլ չտալու համար, կիրառվում են նաև աջակցության վերաբերյալ սույն հոդվածին համապատասխան ներկայացված խնդրանքների կատարման առնչությամբ:

Հոդված 100

Ծախսերը

1. Հարցվող պետության տարածքում խնդրանքների կատարման հետ կապված սովորական ծախսերը կրում է այդ պետությունը, բացառությամբ ներքոհիշյալ ծախսերի, որոնք կրում է Դատարանը,

ա) վկաների և փորձագետների ուղևորության և նրանց անվտանգության ապահովման կամ 93-րդ հոդվածի համաձայն՝ կալանքի տակ գտնվող անձանց փոխանցման հետ կապված ծախսեր,

բ) գրավոր և բանավոր թարգմանության և սղագրությունների ծախսեր,

գ) դատավորների, դատախազի, դատախազի տեղակալների, քարտուղարի, քարտուղարի տեղակալի և Դատարանի ցանկացած մարմնի աշխատակիցների ուղևորության և կեցության ծախսեր,

դ) Դատարանի կողմից խնդրած ցանկացած փորձագետի կարծիքի կամ փորձագիտական եզրակացության հետ կապված ծախսեր,

ե) կալանավորման պետության կողմից Դատարանին փոխանցվող անձի տեղափոխման հետ կապված ծախսեր,

զ) խորհրդակցություններից հետո՝ խնդրանքի կատարման արդյունքում առաջացող բոլոր չնախատեսված ծախսեր:

2. Համապատասխան դեպքերում 1-ին կետի դրույթները կիրառվում են սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունների կողմից Դատարանին ներկայացված խնդրանքների առնչությամբ: Այդ դեպքում Դատարանը կրում է խնդրանքների կատարման հետ կապված սովորական ծախսերը:

Հոդված 101

Պայմանների անփոփոխելիության կանոնը

1. Անձը, որը սույն Կանոնադրության համաձայն փոխանցվում է Դատարանին, ենթակա չէ դատավարական գործողությունների, պատժի կամ կալանավորման՝ մինչև փոխանցումը կատարած ցանկացած արարքի համար, որը տարբեր է, քան այն արարքը կամ արարքի լճացքը, որը հանդիսանում է այն հանցագործությունների հիմքը, որոնց համար այդ անձը փոխանցվում է:

2. Դատարանը կարող է անձին Դատարանին փոխանցող պետությանը խնդրել հրաժարվելու 1-ին կետի պահանջներից, և, անհրաժեշտության դեպքում, Դատարանը լրացուցիչ տեղեկատվություն է տրամադրում 91-ին հոդվածին համապատասխան: Սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունները լիազորված են բավարարելու Դատարանի այդ խնդրանքը և պետք է ձգտեն դա անել:

Հոդված 102

Տերմինների գործածությունը

Սույն Կանոնադրության նպատակների համար՝

ա) «փոխանցում» նշանակում է պետության կողմից անձի փոխանցումը Դատարանին՝ սույն Կանոնադրությանը համապատասխան,

բ) «հանձնում» նշանակում է անձին մի պետության կողմից մյուսին հանձնելը՝ համաձայն միջազգային պայմանագրի, կոնվենցիայի կամ ազգային օրենսդրության:

ԲԱԺԻՆ 10

ԿԱՏԱՐՈՒՄԸ

Հոդված 103

Պետությունների դերը՝ ազատազլիման ձևով նշանակված

պատիժն իրականացնելու գործում

1. а) Ազատազրկման ձևով նշանակված պատիժը կրում են այն պետությունում, որը Դատարանի կողմից նշանակվում է դատապարտված անձանց ընդունելու իրենց պատրաստակամությունն հայտնած պետությունների ցանկից:

բ) Դատապարտված անձանց ընդունելու իր պատրաստակամությունը հայտնելիս պետությունը կարող է, Դատարանի համաձայնությամբ և սույն բաժնին համապատասխան, առաջարկել ընդունման իր պայմանները:

գ) Կոնկրետ գործով ազատազրկման ձևով նշանակված պատիժը կրելու համար նշանակված պետությունը Դատարանին անհապաղ տեղեկացնում է նշանակման վերաբերյալ իր համաձայնության մասին:

2. а) Դատավճռի իրականացման պետությունը Դատարանին ծանուցում է ցանկացած հանգամանքի, ներառյալ՝ 1-ին կետին համապատասխան համաձայնեցված ցանկացած պայմանի մասին, որը կարող է նյութապես ազդել ազատազրկման պայմանների կամ տևողության վրա: Դատարանն առնվազն 45 օրվա ընթացքում տեղեկացվում է ցանկացած նման հայտնի կամ կանխատեսվող հանգամանքի մասին: Այդ ընթացքում դատավճռի իրականացման պետությունը չի կատարում որևէ գործողություն, որը կարող է վնասել 110-րդ հոդվածի համաձայն ստանձնած իր պարտավորություններին:

բ) Եթե Դատարանը չի համաձայնում «ա» ենթակետում նշված հանգամանքներին, ապա այդ մասին ծանուցում է պատժի իրականացման պետությանը և գործում է 104-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան:

3. Պետության նշանակման իր լիազորությունը 1-ին կետին համապատասխան իրականացնելիս Դատարանը հաշվի է առնում հետևյալը:

ա) այն սկզբունքը, որի համաձայն սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետություններն ազատազրկման ձևով նշանակված պատժի իրականացման պատասխանատվությունը կիսում են արդարացի բաշխման սկզբունքին համապատասխան, ինչպես դա նախատեսվում է Ընթացակարգի և ապացուցման կանոններով,

բ) բանտարկյալների հետ վարվեցողության՝ համընդիանուր ճանաչում ունեցող միջազգային պայմանագրերով նախատեսված ստանդարտների կիրառումը,

բ) դատապարտված անձի կարծիքը,

գ) դատապարտված անձի քաղաքացիությունը,

ե) նման այլ գործուներ, որոնք վերաբերում են հանցազործության հանգամանքներին կամ դատապարտված անձին, կամ պատժի արդյունավետ իրականացմանը, որոնք կարող են պատշաճ լինել դատավճռի իրականացման պետության նշանակման ժամանակ:

4. Եթե որևէ պետություն չի նշանակվում 1-ին կետին համապատասխան, ապա ազատազրկման ձևով նշանակված պատիժն իրականացվում է Դատարանի նստավայր-պետության տրամադրած բանտարկյան հաստատությունում՝ 3-րդ հոդվածի 2-րդ կետում նշված կենտրոնակայանի վերաբերյալ համաձայնագրի պայմաններին համապատասխան: Նման դեպքերում պատիժն իրականացնելու հետ կապված ժախսերը կրում է Դատարանը:

Հոդված 104

Դատավճռի իրականացման պետության փոփոխումը

1. Դատարանը կարող է ցանկացած ժամանակ որոշում կայացնել դատապարտված անձին տեղափոխելու մեկ այլ պետության բանտ:

2. Դատապարտված անձը կարող է ցանկացած ժամանակ դիմել Դատարանին՝ դատավճռի իրականացման պետությունից իրեն տեղափոխելու միջնորդությամբ:

Հոդված 105 **Դատավճռի կատարումը**

1. Պահպանելով այն պայմանները, որոնք պետությունը կարող է վերապահել 103-րդ հոդվածի 1-ին կետի «ք» ենթակետին համապատասխան, ազատազրկման ձևով պատժի նշանակման վերաբերյալ դատավճռը պարտադիր է սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունների համար, որոնք ոչ մի դեպքում չեն կարող փոփոխել այն:

2. Միայն Դատարանն իրավունք ունի որոշում ընդունել բողոքարկման կամ վերանայման վերաբերյալ միջնորդության կապակցությամբ: Դատավճռի իրականացման պետությունը դատապարտված անձին չպետք է խոչընդոտի նման միջնորդություններ ներկայացնելու հարցում:

Հոդված 106 **Դատավճռի կատարման և ազատազրկման** **պայմանների նկատմամբ հսկողությունը**

1. Ազատազրկման ձևով նշանակված պատժի կատարումն իրականացվում է Դատարանի հսկողությամբ և պետք է համապատասխանի բանտարկյալների հետ վարչեցողության՝ համընդհանուր ճանաչում ստացած միջազգային պայմանագրերով նախատեսված ստանդարտներին:

2. Ազատազրկման պայմանները կարգավորվում են դատավճռի իրականացման պետության օրենսդրությամբ և պետք է համապատասխանեն բանտարկյալների հետ վարչեցողության՝ համընդհանուր ճանաչում ստացած միջազգային պայմանագրերով նախատեսված ստանդարտներին. այդ պայմանները ոչ մի դեպքում չպետք է լինեն ավելի կամ նվազ նպաստավոր, քան այն պայմանները, որոնք դատավճռի իրականացման պետությունում գոյություն ունեն համանման հանցագործության համար դատապարտված անձանց նկատմամբ:

3. Դատապարտված անձի և Դատարանի միջև հազորդակցությունը պետք է լինի անարգել և գաղտնի :

Հոդված 107 **Պատիժը կրելուց հետո անձի փոխանցումը**

1. Պատիժը կրելուց հետո անձը, որը դատավճռի իրականացման պետության քաղաքացի չէ, այդ պետության օրենսդրությանը համապատասխան կարող է փոխանցվել այն պետությունը, որը պարտավոր է ընդունել նրան, կամ մեկ այլ պետության, որը համաձայն է ընդունել նրան, ընդ որում՝ հաշվի առնելով այդ պետությանը փոխանցվող անձի յուրաքանչյուր ցանկություն, եթե միայն դատավճռի իրականացման պետությունն այդ անձին իր տարածքում մնալու թույլտվություն չի տալիս:

2. Եթե ոչ մի պետություն չի ստանձնում անձի՝ 1-ին կետին համապատասխան այլ պետությանը փոխանցելու հետ կապված ծախսերը, ապա այդ ծախսերը կրում է Դատարանը:

3. 108-րդ հոդվածի դրույթները պահպանելու պայմանով՝ դատավճռի իրականացման պետությունը, իր ազգային օրենսդրությանը համապատասխան, կարող է նաև համապատասխան անձին հանձնել կամ որևէ այլ կերպ փոխանցել դատական հետապնդման կամ դատավճռի իրականացման նպատակով հանձնելու կամ փոխանցելու խնդրանքով դիմած պետությանը:

Հոդված 108

Այլ հանցանքների համար քրեական հետապնդման կամ պատժելու սահմանափակումը

1. Դատապարտված և դատավճռի իրականացման պետությունում կալանքի տակ գտնվող անձը ենթակա չէ քրեական հետապնդման կամ պատժի կամ հանձնման երրորդ պետության՝ այն արարքի համար, որը նա կատարել է մինչև դատավճռի իրականացման պետությանը հանձնելը, եթե միայն նման քրեական հետապնդումը, պատժումը կամ հանձնումը չեն հաստատվել Դատարանի կողմից՝ դատավճռի իրականացման պետության խնդրանքով:

2. Դատարանն այդ հարցի կապակցությամբ որոշում է կայացնում դատապարտված անձի կարծիքը լսելուց հետո:

3. 1-ին կետը դադարում է գործել, եթե դատապարտված անձը Դատարանի կողմից դատավճռով նշանակված պատիժն ամրողությամբ կրելուց հետո ավելի քան 30 օր իր կամքով մնում է դատավճռի իրականացման պետության տարածքում, կամ եթե այդ պետության տարածքից հեռանալուց հետո վերադառնում է այնտեղ:

Հոդված 109

Տուգանքների և բռնազրավման միջոցների վերաբերյալ որոշումների կատարումը

1. Սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետություններն ապահովում են 7-րդ բաժնի համաձայն տուգանքների և բռնազրավման վերաբերյալ Դատարանի որոշումների կատարումը՝ առանց եռու ֆի երրորդ կողմների իրավունքներն վնասելու, և իրենց ազգային օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերին համապատասխան:

2. Եթե սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունը չի կարող ապահովել բռնազրավման վերաբերյալ որոշման կատարումը, ապա միջոցներ է ձեռնարկում Դատարանի որոշմամբ բռնազրավման ենթակա եկամուտը, սեփականությունը կամ ակտիվները վերադարձնելու համար՝ առանց եռու ֆի երրորդ կողմների իրավունքները վնասելու:

3. Գույքը կամ անշարժ գույքի վաճառքից կամ, համապատասխան դեպքերում, այլ գույքի վաճառքից ստացված եկամուտը, որը սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունը ձեռք է բերում Դատարանի որոշումը կատարելու արդյունքում, փոխանցվում է Դատարանին:

Հոդված 110

Դատավճռով նշանակված պատժի ժամկետի կրծատման հարցի քննությունը Դատարանի կողմից

1. Դատավճռի իրականացման պետությունը չի կարող անձին ազատ արձակել՝ մինչև Դատարանի դատավճռով նշանակված պատժի ժամկետի լրանալը:

2. Միայն Դատարանն իրավունք ունի կրծատելու պատժի ժամկետը և այդ մասին որոշումը կայացնում է անձին լսելուց հետո:

3. Եթե անձը կրել է պատժի 2/3-ը կամ, ցմահ ազատազրկման դեպքում 25 տարին, ապա Դատարանը վերանայում է իր դատավճիռը՝ որոշելու համար պատժի ժամկետի կրծատման հնարավորությունը: Նման վերանայում չի կատարվում մինչև վերոնշյալ ժամկետի լրանալը:

4. 3-րդ կետի համաձայն դատավճիռը վերանայելիս Դատարանը կարող է որոշում կայացնել պատժի ժամկետը կրծատելու մասին, եթե առկա են հետևյալ գործոններից մեկը կամ մի քանիսը.

ա) անձի՝ նախկինում արտահայտած անփոփոխ պատրաստակամությունը՝ համագործակցելու Դատարանի հետ՝ վերջինիս կողմից իրականացվող քննությունների և քրեական հետազնդումների գործում,

բ) անձի կամավոր աջակցությունն այլ գործերով Դատարանի ընդունած որոշումների և կարգադրությունների կատարման գործում, մասնավորապես, աջակցությունն այն ակտիվների հայտնաբերման նպատակով, որոնց վրա տարածվում են տուգանքի, բռնագրավման կամ վճարի հատուցման (*բեպարագիա*) վերաբերյալ որոշումների գործողությունը և որոնք կարող են օգտագործվել իշահ տուժողների, կամ

գ) Ընթացակարգի և ապացուցման կանոններով նախատեսված այլ գործուների, որոնք վկայում են հանգամանքների այնպիսի ակնհայտ և կարևոր փոփոխության մասին, որը բավարար հիմք է պատժի ժամկետը կրծատելու համար:

5. Եթե Դատարանը 3-րդ կետի համաձայն սկզբնական վերանայման արդյունքում եզրակացնում է, որ պատժի ժամկետի կրծատումը նպատակահարմար չէ, ապա դատավճռով նշանակված պատժի ժամկետի կրծատման հարցը վերանայում է հետագայում՝ այնպիսի պարբերականությամբ և չափանիշներով, որոնք նախատեսված են Ընթացակարգի և ապացուցման կանոններով:

Հոդված 111 Փախուստ

Եթե դատապարտված անձը փախուստի է դիմում և հեռանում դատավճռի իրականացման պետությունից, ապա վերջինս Դատարանի հետ խորհրդակցելուց հետո, երկողմ կամ բազմակողմ համաձայնագրերին համապատասխան, կարող է այդ անձին հանձնելու խնդրանքով դիմել այն պետությանը, որտեղ նա գտնվում է, կամ կարող է դիմել Դատարանին՝ 9-րդ բաժնին համապատասխան այդ անձին փոխանցելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու խնդրանքով:

ԲԱԺԻՆ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՍԱՄԲԼԵԱՆ Հոդված 112 Սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունների ասամբլեան

1. Սույնով հիմնադրվում է Սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունների ասամբլեան: Սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող յուրաքանչյուր պետություն Ասամբլեայում ունի մեկ ներկայացուցիչ, որը կարող է ունենալ տեղակալներ և խորհրդատուններ: Այլ պետությունները, ովքեր ստորագրել են սույն Կանոնադրությունը կամ Եզրափակիչ ակտը, Ասամբլեայում կարող են լինել դիտորդներ:

2. Ասամբլեան.

ա) քննության է առնում և, համապատասխան դեպքերում, ընդունում Նախապատրաստական հանձնաժողովի հանձնարարականները,

բ) նախագահությանը, դատախազին և քարտուղարին ներկայացնում է Դատարանի գործերի կառավարման հարցերին վերաբերող վարչական ամփոփում,

գ) քննության է առնում 3-րդ կետին համապատասխան ստեղծվող Բյուրոյի գեկույցները և քննարկում է նրա գործունեությունը, և այդ կապակցությամբ ձեռնարկում է համապատասխան միջոցներ,

դ) քննության է առնում և ընդունում Դատարանի բյուջեն,

ե) որոշում է դատավորների թիվը փոփոխելու անհրաժեշտության հարցը 36-րդ հոդվածին համապատասխան,

գ) ի կատարումն 87-րդ հոդվածի 5-րդ և 7-րդ կետերի՝ քննության է առնում համագործակցության բացակայությանն առնչվող ցանկացած հարց,

է) իրականացնում է սույն Կանոնադրության կամ Ընթացակարգի և ապացուցման կանոնների հետ համատեղելի ցանկացած այլ գործառույթ:

3. ա) Ասամբլեան ունի Բյուրո, որի կազմի մեջ մտնում են Ասամբլեայի կողմից 3 տարի ժամկետով ընտրվող Նախագահը, երկու Փոխնախագահները և 18 անդամները:

բ) Բյուրոն ունի ներկայացուցական բնույթ, որը, մասնավորապես, հաշվի է առնում արդարացի աշխարհագրական բաշխման և աշխարհի հիմնական իրավական համակարգերի պատշաճ ներկայացուցչության չափանիշները:

գ) Բյուրոյի նիստերը գումարվում են անհրաժեշտ պարբերականությամբ, սակայն առնվազն տարին մեկ անգամ: Այն աջակցում է Ասամբլեային նրա պարտականությունների կատարման գործում:

4. Անհրաժեշտության դեպքում Ասամբլեան կարող է հիմնել օժանդակ մարմիններ, ներառյալ՝ ստուգումներ, գնահատումներ և քննություն անցկացնելիս Դատարանի գործունեության արդյունավետության և խնայողականության բարձրացմանը նպաստող հսկողության անկախ մեխանիզմը:

5. Դատարանի նախագահը, դատախազը և քարտուղարը կամ նրանց ներկայացուցիչները կարող են, անհրաժեշտության դեպքում, մասնակցել Ասամբլեայի և Բյուրոյի նիստերին:

6. Ասամբլեայի նատաշրջանները գումարվում են Դատարանի նատավայրում կամ Միավորված ազգերի կազմակերպության կենտրոնակայանում, տարին մեկ անգամ: Իսկ եթե հանգամանքները պահանջում են, գումարվում են Ասամբլեայի արտահերթ նատաշրջանները: Եթե սույն Կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ, արտահերթ նատաշրջանները գումարվում են Բյուրոյի կողմից՝ իր նախաձեռնությամբ կամ սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունների մեջ երրորդի խնդրանքով:

7. Սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող յուրաքանչյուր պետություն ունի մեկ ձայն: Պետք է ձեռնարկել բոլոր ջանքերը՝ Ասամբլեայում և Բյուրոյում որոշումները միաձայնությամբ ընդունելու համար: Միաձայնության չհասնելու դեպքում, եթե Կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ՝

ա) Էական հարցերի կապակցությամբ որոշումներն ընդունվում են քվեարկության ներկա գտնվողների և մասնակցածների ձայների երկու երրորդի մեծամասնությամբ, պայմանով, որ սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունների բացարձակ մեծամասնությունն ապահովում է քվերումը,

բ) Ընթացակարգերի վերաբերյալ հարցերով որոշումներն ընդունվում են սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունների կողմից քվեարկության ներկա գտնվողների և մասնակցածների ձայների պարզ մեծամասնությամբ:

8. Սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունը, որն ունի Դատարանի ծախսերը ծածկելու համար կատարվող վճարումների հետ կապված պարտքեր, Ասամբլեայում և Բյուրոյում չունի ձայնի իրավունք, եթե այդ պարտքի գումարը հավասար է կամ գերազանցում է նախորդ 2 տարիների՝ նրա կողմից վճարման ենթակա գումարը: Այդուհանդերձ, Ասամբլեան կարող է թույլատրել վերը նշված պետությանը մասնակցելու Ասամբլեայում և Բյուրոյում կատարվող քվեարկություն-ներին, եթե համոզվում է, որ

վճարումների չկատարումը պայմանավորված է այդ պետությունից անկախ հանգամանքներով:

9. Ասամբլեան ընդունում է իր կանոնակարգը:

10. Ասամբլեայի պաշտոնական և աշխատանքային լեզուները Սիավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի պաշտոնական և աշխատանքային լեզուներն են:

ԲԱԺԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

Հողված 113 Ֆինանսական կանոններ

Բացառությամբ այն դեպքերի, երբ նախատեսվում է այլ կարգ, բոլոր ֆինանսական հարցերը՝ կայված Դատարանի և սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունների Ասամբլեայի նիստերի հետ, ներառյալ՝ նրա Բյուրոն և օժանդակ մարմինները, կարգավորվում են սույն Կանոնադրությամբ և սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունների Ասամբլեայի կողմից ընդունված Ֆինանսական նորմերով և կանոններով:

Հողված 114 Ծախսերի ծածկումը

Դատարանի և սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունների Ասամբլեայի, ներառյալ՝ նրա Բյուրոն և օժանդակ մարմինները, ծախսերը ծածկվում են Դատարանի միջոցների հաշվին:

Հողված 115 Դատարանի և սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունների Ասամբլեայի միջոցները

Դատարանի և սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունների Ասամբլեայի, ներառյալ՝ նրա Բյուրոյի և օժանդակ մարմինների, սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունների Ասամբլեայի կողմից ընդունված բյուջեով նախատեսված ծախսերը վճարվում են հետևյալ աղբյուրներից.

ա) սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունների կողմից կատարվող վճարումներից,

բ) Սիավորված ազգերի կազմակերպության կողմից տրամադրվող միջոցներից, որոնք ենթակա են Գլխավոր ասամբլեայի հաստատմանը, մասնավորապես, կապված այն ծախսերի հետ, որոնք առաջանում են Անվտանգության խորհրդի կողմից ներկայացվելու դեպքում:

Հողված 116 Կամավոր մուծումներ

Առանց 115-րդ հոդվածին վնասելու՝ Դատարանը որպես լրացուցիչ միջոցներ կարող է ստանալ և օգտագործել կառավարությունների, միջազգային կազմակերպությունների,

առանձին անձանց, կորպորացիաների և այլ ձեռնարկությունների կամավոր մուծումները՝ համաձայն սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունների Ասամբլեայի կողմից ընդունված համապատասխան չափանիշների:

Հոդված 117 Մուծումների չափի սահմանումը

Սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունների մուծումների չափը սահմանվում է հաշվարկված մուծումների համաձայնեցված սանդղակին համապատասխան, որը հիմնվում է Միավորված ազգերի կազմակերպության կողմից իր կանոնավոր բյուջեի համար ընդունված սանդղակի վրա և ճշգրտվում է այն սկզբունքներին համապատասխան, որոնց վրա հիմնված է այդ սանդղակը:

Հոդված 118 Ամենամյա վերատուգում

Դատարանի փաստաբերը, հաշվեմատյանները և հաշիվները, ներառյալ՝ նրա տարեկան ֆինանսական հաշվետվությունը, ամեն տարի ստուգվում են անկախ վերատուգիչի կողմից:

ԲԱԺԻՆ 13 ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 119 Վեճերի կարգավորումը

1. Դատարանի գործառույթներին վերաբերող ցանկացած վեճ կարգավորվում է Դատարանի որոշմամբ:

2. Սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող Երկու կամ ավելի պետությունների միջև սույն Կանոնադրության մեկնարանման կամ կիրառման վերաբերյալ առաջացած ցանկացած այլ վեճ, որը վեճի առաջացման պահից 3 ամսվա ընթացքում չի կարգավորվում բանակցությունների միջոցով, քննարկման է հանձննվում սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունների Ասամբլեային: Վերջինս ինքը կարող է ջանալ կարգավորել վեճը կամ կարող է ընդունել հանձնարարականներ՝ վեճի լուծման հետագա միջոցների կիրառման կապակցությամբ, ներառյալ՝ վեճի հանձնումը Միջազգային դատարանին՝ նրա Կանոնադրության համաձայն:

Հոդված 120 Վերապահումներ

Սույն Կանոնադրության վերաբերյալ որևէ վերապահում չի կարող արվել:

Հոդված 121 Փոփոխություններ

1. Սույն Կանոնադրության՝ ուժի մեջ մտնելուց յոթ տարի անց սույն Կանոնադրության յուրաքանչյուր Կողմ հանդիսացող պետություն կարող է հանդես գալ նրանում փոփոխություն կատարելու առաջարկությամբ: Առաջարկվող ցանկացած փոփոխության տեքստը հանձնվում է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին, որն այն անհապաղ փոխանցում է սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող բոլոր պետություններին:

2. Ծանուցման օրվանից ոչ շուտ, քան երեք ամիս անց սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունների Ասամբլեան իր հաջորդ նիստում քվեարկությանը ներկա գտնվողների և մասնակցածների ձայների մեծամասնությամբ որոշում է՝ քննության առնել արդյոք այդ փոփոխությունը, թե՝ ոչ: Ասամբլեան կարող է առաջարկել փոփոխությունը քննարկել անմիջականորեն կամ հրավիրել վերանայման կոնֆերանս, եթե դա է պահանջում տվյալ հարցը:

3. Եթե, սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունների Ասամբլեայի նիստում կամ Վերանայման կոնֆերանսում, միաձայնություն չի կարող ապահովվել, փոփոխությունն ընդունվում է սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունների ձայների երկու երրորդի մեծամասնությամբ:

4. Բացառությամբ 5-րդ կետում նախատեսվածի՝ փոփոխությունը սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող բոլոր պետությունների համար ուժի մեջ է մտնում նրանց յոթ ութերրորդի կողմից վավերագրերը կամ ընդունման փաստաթղթերը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ի պահ տալուց մեկ տարի անց:

5. Սույն Կանոնադրության 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածների ցանկացած փոփոխություն սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող այն պետությունների համար, որոնք ընդունել են այդ փոփոխությունը, ուժի մեջ է մտնում վավերագրերը կամ ընդունման փաստաթղթերն ի պահ տալուց մեկ տարի անց: Ինչ վերաբերում է սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող այն պետությանը, որը չի ընդունել փոփոխությունը, Նատարանն իր իրավագործությունը չի իրականացնում այդ փոփոխությամբ ընդգրկված հանցագործության նկատմամբ, եթե դա կատարվել է այդ պետության քաղաքացիների կողմից կամ նրա տարածքում:

6. Եթե փոփոխությունը ընդունվել է սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունների յոթ ութերրորդի կողմից 4-րդ կետին համապատասխան, ապա փոփոխությունը չընդունած սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող յուրաքանչյուր պետություն կարող է անմիջապես դուրս գալ Կանոնադրությունից՝ անկախ 127-րդ հոդվածի 1-ին կետից, սակայն, համաձայն 127-րդ հոդվածի 2-րդ կետի, այդ մասին ծանուցելով ոչ ուշ, քան փոփոխության ուժի մեջ մտնելուց մեկ տարի անց:

7. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող բոլոր պետություններին է փոխանցում այդ պետությունների Ասամբլեայի նիստում կամ Վերանայման կոնֆերանսում ընդունված ցանկացած փոփոխություն:

Հոդված 122 Ինստիտուցիոնալ բնույթի դրույթների փոփոխությունը

1. Սույն Կանոնադրության՝ բացառապես ինստիտուցիոնալ բնույթի դրույթների փոփոխությունը, այն է՝ 35-րդ հոդվածի, 36-րդ հոդվածի 8-րդ և 9-րդ կետերի, 37-րդ հոդվածի, 38-րդ հոդվածի, 39-րդ հոդվածի 1-ին (առաջին երկու նախադասությունները), 2-րդ և 4-րդ կետերի, 42-րդ հոդվածի 4 – 9-րդ կետերի, 43-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի, 44-րդ, 46-րդ, 47-րդ և 49-րդ հոդվածների փոփոխությունները, անկախ 121-րդ հոդվածի 1-ին կետից, կարող են առաջարկվել ցանկացած ժամանակ, սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող ցանկացած պետության կողմից: Առաջարկվող փոփոխության ցանկացած տեքստը ներկայացվում է

Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին կամ սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունների Ասամբլեայի կողմից նշանակած մեկ այլ անձի, որն այն անմիջապես հանձնում է սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող բոլոր պետություններին կամ Ասամբլեայի այլ մասնակիցներին:

2. Եթե սույն հոդվածում նշված փոփոխությունների ընդունման հարցում միաձայնություն ձեռք չի բերվում, ապա այդ փոփոխությունները ընդունվում են սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունների Ասամբլեայի կամ Վերանայման կոնֆերանսի կողմից սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունների ձայնների երկու երրորդի մեծամասնությամբ: Նման փոփոխությունները սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող բոլոր պետությունների համար ուժի մեջ են մտնում, համապատասխանաբար սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունների Ասամբլեայի կամ Կոնֆերանսի կողմից ընդունվելուց վեց ամիս անց:

Հոդված 123 **Սույն Կանոնադրության վերանայումը**

1. Սույն Կանոնադրության՝ ուժի մեջ մտնելուց յոթ տարի անց Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը հրավիրում է Վերանայման կոնֆերանս՝ քննության առնելու սույն Կանոնադրության ցանկացած փոփոխություն: Նման վերանայումը կարող է իր մեջ ներառել 5-րդ հոդվածում նշված հանցագործությունների ցանկը, ասկայն չսահմանափակվել դրանով: Կոնֆերանսը քաց է սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունների Ասամբլեային մասնակցողների համար՝ միևնույն պայմաններով:

2. Դրանից հետո, ցանկացած ժամանակ, սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետություններից մեկի խնդրանքով և 1-ին կետում նշված նպատակներով Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը, սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունների մեծամասնության համաձայնությամբ, հրավիրում է Վերանայման կոնֆերանս:

3. 121-րդ հոդվածի 3-ից 7-րդ կետերի դրույթները կիրառվում են Կանոնադրության՝ Վերանայման կոնֆերանսում քննարկված ցանկացած փոփոխության ընդունման և ուժի մեջ մտնելու առնչությամբ:

Հոդված 124 **Անցումային դրույթ**

Չնայած 12-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերին, պետությունը, դառնալով սույն Կանոնադրության կողմ, կարող է հայտարարել, որ սույն Կանոնադրության՝ տվյալ պետության համար ուժի մեջ մտնելուց հետո յոթ տարվա ընթացքում ինքը չի ընդունում Դատարանի իրավագործությունը 8-րդ հոդվածում նշված հանցագործությունների կատեգորիաների նկատմամբ, եթե, ինչպես ենթադրվում է, հանցագործությունը կատարվել է իր քաղաքացիների կողմից կամ իր տարածքում: Սույն հոդվածի հիման վրա կատարված հայտարարությունից կարելի է հրաժարվել ցանկացած ժամանակ: Սույն հոդվածի դրույթները վերանայվում են 123-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան հրավիրված Վերանայման կոնֆերանսում:

Հոդված 125 **Ստորագրումը, վավերացումը, ընդունումը, հաստատումը կամ միացումը**

1. Սույն Կանոնադրությունը բաց է բոլոր պետությունների կողմից ստորագրվելու համար, Հռոմում, Միավորված ազգերի կազմակերպության Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կենտրոնակայանում, 1998 թ. հուլիսի 17-ին: Այնուհետև այն բաց կմնա ստորագրման Հռոմում, Խտալիայի արտաքին գործերի նախարարությունում, մինչև 1998 թ. հոկտեմբերի 17-ը: Այնուհետև Կանոնադրությունը բաց կմնա ստորագրման համար Հռոմում Խտալիայի արտաքին գործերի նախարարությունում մինչև 1998 թ. հոկտեմբերի 17-ը: Այդ օրվանից հետո սույն Կանոնադրությունը բաց կմնա ստորագրման համար Նյու Յորքում, Միավորված ազգերի կազմակերպության կենտրոնակայանում, մինչև 2000թ. դեկտեմբերի 31-ը:

2. Սույն Կանոնադրությունը ենթակա է վավերացման, ընդունման, կամ հաստատման այն ստորագրած պետությունների կողմից: Վավերացման, ընդունման կամ հաստատման փաստաթղթերն ի պահ են տրվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:

3. Սույն Կանոնադրությունը բաց է բոլոր պետությունների կողմից միանալու համար: Միացման փաստաթղթերն ի պահ են տրվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:

Հոդված 126 ՈՒժի մեջ մտնելը

1. Սույն Կանոնադրությունն ուժի մեջ է մտնում 60-րդ վավերագիրը, ընդունման, հաստատման կամ միացման փաստաթղթը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ի պահ տալու օրվանից 60-րդ օրվան հաջորդած ամսվա առաջին օրը:

2. Վավերագիրն, ընդունման, հաստատման կամ միացման 60-րդ փաստաթղթն ի պահ տալուց հետո սույն Կանոնադրությունը վավերացնող, ընդունող, հաստատող կամ դրան միացող յուրաքանչյուր պետության համար՝ Կանոնադրությունն ուժի մեջ է մտնում այդ պետության կողմից իր վավերացման, ընդունման, հաստատման կամ միացման փաստաթղթն ի պահ տալուց 60-րդ օրվան հաջորդած ամսվա առաջին օրը:

Հոդված 127 Կանոնադրությունից դուրս գալը

1. Սույն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունը կարող է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին համապատասխան գրավոր ծանուցում ներկայացնելու միջոցով դուրս գալ սույն Կանոնադրությունից: Դուրս գալու փաստն ուժի մեջ է մտնում ծանուցումը ստանալուց հետո 1 տարի անց, եթե ծանուցման մեջ ավելի ուշ ժամկետ չի նշվում:

2. Կանոնադրությունից դուրս գալը պետությանը չի ազատում սույն Կանոնադրությունից բխող պարտավորությունների կատարումից, որոնք առաջացել են այդ պետության՝ Կանոնադրությանը Կողմ լինելու ընթացքում, ներառյալ՝ ցանկացած ֆինանսական պարտավորություն: Սույն Կանոնադրությունից պետության դուրս գալը չի ազդում Դատարանի հետ որևէ համագործակցության վրա՝ կապված այն քննությունների և դատաքննությունների հետ, որոնց կապակցությամբ դուրս եկող պետությունը պարտավորվել էր համագործակցել և որոնք սկսվել էին մինչև դուրս գալու ուժի մեջ մտնելը, ինչպես նաև ոչ մի դեպքում այդ փաստը չի կարող ազդել այն հարցի քննարկման վրա, որն սկսվել էր մինչև դուրս գալու ուժի մեջ մտնելը:

Հոդված 128

Հավասարագոր տեքստեր

Սույն Կանոնադրության բնօրինակը, որի արարերեն, չհնարեն, անզերեն, ֆրամատերեն, ռուսերեն և իսպաներեն տեքստերը հավասարագոր են, ի պահ է տրվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին, որը դրանց հաստատված պատճեններն ուղարկում է բոլոր պետություններին:

Ի վկայություն վերոշարադրյալ՝ ներքոստորագրյալները, լինելով իրենց կառավարությունների կողմից պատշաճ կերպով լիազորված, ստորագրեցին սույն Կանոնադրությունը:

Կատարված է Հոռմ քաղաքում 1998 թ. հուլիսի 17-ին:

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 1998թ. հուլիսի 17-ին ընդունված Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրության հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

